

Sumerian Scriptum Synthesis Publisher  
(SSSP)

2026

## ՊԱՊԻԿԻՍ ԳՈՒԹԱՆԸ

Աես գիրքը իրական պատմական  
ապրումներն են ին պապիկիս մեր  
տոհմի տարապանքը կը պատմե մեծ  
եղերնիի ժամանակ, ինչպես հրաշքով  
եւ մեծ կորուստներով մեր հայ  
ժողովուրդի որդիներ կրցան ազատիլ  
1915-ին  
Թող Հիշենք եւ պահանջենք



Edition First  
<https://sss-publisher.com/>

Prepared By:  
**ՆՈՐԻԿ ՀՈՎՍԷՓԵԱՆ**

Պապիկիս գութանը

Պապիկիս գութանը  
Նորիկ Յովսէփեան  
Պատմական  
First Edition

---

**Deposit number at the Iraqi National Library and Archives (N/A) for the year (N/A).**

**ISBN: 978-9922-7960-55**

**DOI: 10.62909/978.9922.7960.55**




Sumerian Scriptum Synthesis Publisher  
Iraq – Diyala -Ba'quhba – Awqaf Street  
Mobile: 07775262892  
[manager@sss-publisher.com](mailto:manager@sss-publisher.com)

|                                                                                                                                                                                                                                                                                                                                            |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| All publishing rights are reserved. No institution or entity is permitted to reproduce this book, in whole or in part, or to transmit it in any form or by any means of information transmission, whether electronic or mechanical, including copying, recording, storage, or retrieval, without prior written permission from the author. |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

|                                                                                                                        |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| All opinions expressed in this book are those of the author and do not necessarily reflect the views of the publisher. |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------|


**Պապիկիս գութանը**

**Նորիկ Հովսեփեան**



**2026**

**Book typesetting:**  
**Institute of Translation and Books**  
**Malaysia**



**Cover design**  
**Institute of Technology**  
**India**

**Language review**  
**Dr. Muhannad Mohammed Kazem**  
**Iraq**

Electronic distribution and publishing: This book has been indexed in a number of international catalogs and platforms, including:

كروس ريف

(CrossRef)

أوبن ألكس

(OpenAlex)

مؤشر الاقتباس المفتوح الأوكراني

(OUCI)

سجل مستودعات الوصول المفتوح

(ROAR)

سيمنتك سكولار

(Semantic Scholar)

دايمشنز

(Dimensions)

ريسرش غيت

(ResearchGate)

فات كات

(Fatcat)

المعيار الدولي للترقيم

(IAS)

مؤشر الاستشهاد العلمي


(SCI)

أوركيد

(ORCID)

سايليت

(Scilit)



Official website of the publisher (Sumerian Scriptum Synthesis Publisher): This book is available through the publisher's official website and has been assigned a unique Digital Object Identifier (DOI): [<https://doi.org/10.62909/978.9922.7960.55>]



# Պապիկիս Գութանը


«Որդիները, որ ծնուելու են, պիտի ելնեն եւ  
պատմեն դա իրենց զաւակներին,»

(Սաղմ. 77.6) *77.6*

Հեղինակ՝

Հովիվ: Նորիկ Մնացական Արթին (Հովսեփյան)

Բաղդադ 2020



*Գիրքը գրվել է հայերեն արաբերեն եւ անգլերեն  
լեզուներով*

Բաղդադ 2020



## *Առաջաբան*

Գրքի վերնագիրը կարող է, առաջին հայացքից, ենթադրել, որ վեպի իրադարձությունները պատմություն կամ լեգենդ են՝ գրված ժամանակակից վեպի տեսքով, և հեղինակն այն գրել է իր վառ երևակայության արդյունքում կամ իր սեփական մտքերով:

Սակայն, սիրելի ընթերցող, ճշմարտությունը, որը պետք է իմանաս, այն է, որ այս պատմության մեջ նշված իրադարձությունները, անուններն ու աշխարհագրական դիրքը իրական ու ճշմարիտ են: Այս գրքում նշված իրադարձությունների բոլոր փաստերը կենդանի պատմողական ժառանգություն են, որն իմ ընտանիքը փոխանցել է Հայոց ցեղասպանության դեպքերից հետո ապրած երկու սերունդի միջոցով:

Հայոց ցեղասպանությունը համարվում է ժամանակակից դարաշրջանի առաջին ցեղասպանություններից մեկը ցեղասպանության կազմակերպման մեթոդի մասով, դրա առաջին նպատակը հայ անունն ու հայկական ցեղն իր գոյից ջնջելն էր: Ցեղասպանությունն ուսումնասիրած գիտնականները այն համարում են երկրորդ ամենամեծ ցեղասպանությունը, որն ամենաշատն է ուսումնասիրվել Հոլոքոստից

հետո: Յեղասպանություն եզրույթը ստեղծվել է՝ հատուկ նկարագրելու, թե ինչի է ենթարկվել հայ ժողովուրդը:

Հայերի դեմ կատարված ոճրագործության ապացույցներից մեկը Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի հայտնի խոսքն է. «Թուրքիայում ապրող բոլոր հայերն անխտիր ոչնչացվելու են՝ անգամ հաշվի չառնելով կանանց, երեխաներին և ծերերին: Վերջ կդրվի նրանց գոյությանը, և ինչպիսի սարսափելի միջոցներ էլ որ կիրառվեն այդ նպատակի համար, նրանց հանդեպ որևէ խղճահարություն չպետք է լինի »:

Ջարդերից փրկված հայերն այդ ջարդերի ու ողբերգությունների ականատես վկաներն ու կրողներն էին, որոնց մտքի ու գիտակցության վրա այդ դեպքերը դրոշմված էին մինչև նրանց վերջին շունչը:

Պապս և տատս, ովքեր երկար կյանք ապրեցին, իրենց ողջ կյանքի ընթացքում հիշում ու պատմում էին ցեղասպանության, սովի, դաժան սպանությունների, բռնաբարությունների և բռնի տեղահանման սարսափների մասին, որոնց միջով անցել ու ապրել էին անկախ իրենց կամքից: Ու հատկապես տատս, ով տասներեքամյա աղջիկ էր այդ ժամանակ:

---

## *Պապիկիս գութանը*

---

Իր կյանքի երկար տարիների ընթացքում նա հիշում էր օսմանյան այդ կոտորածները և արցունքներ հեղեղելով պատմում մեզ: Բարեբախտաբար, ես ապրում էի պապիկիս և տատիկիս հետ, ովքեր այդ ցեղասպանության կենդանի վկաներն էին: Ես նրանց հետ ապրեցի մինչև պատանեկությանս առաջին քառորդը:

Նրանք լիովին ապրել են այդ ողբերգական իրադարձությունները, և դրա հետ մեկտեղ, Աստծո ողորմությամբ, նրանք փրկվել են այդ կոտորածներից՝ լինելով հազարավոր ներգաղթյալ վկաների շարքում, ովքեր բնակություն հաստատեցին սիրելի Իրաքի հողում:

Իմ պատանեկության օրերին ես այդ իրադարձություններն իրենց ձայներով ձայնագրեցի վեց ժապավենների վրա և այդ ձայնագրությունների հիման վրա գրեցի այս գրքի էջերը՝ որպես անձնական հիշողությունների գիրք և ոչ ավելին: Հետո մի օր որոշեցի այդ գրառումները դնել համակարգված գրքի մեջ «*Պապիկիս գութանը*» վերնագրով:

Չնայած այս գրքի գլուխներում առկա բոլոր փաստերին՝ գրիչս անհաղորդ կմնա՝ փոխանցելու դաժանությունը, մարդու թշնամանքն ու նրա ասելությունն իր մերձավորի

նկատմամբ, և ինչպես մյուս գրքերը, այդուհանդերձ, այս գիրքը ևս ի ցույց չի կարող դնել այդ մասսայական ռճրագործությունների ողջ սարսափը, որոնց միջով անցել է հայ ժողովուրդը:

Ինչպես նաև, սիրելի ընթերցող, ես կցանկանայի հիշեցնել քեզ, որ երկաթե գութանի (պապիկիս գութա-նի) հետ տեղի ունեցածը ոչ թե միֆ է, այլ ճշմարտություն ու իրականություն, և որ այդ գութանը մինչ օրս գոյություն ունի ինչ որ տեղ՝ Արևմտյան Հայաստանի պատմական հողի սրտում՝ հայկական Մոկս քաղաքում (ներկայումս Թուրքիա-յի Բահջա Սարայ քաղաք):


Փաստ է, որ գութանը բարոյական սիմվոլիկ նշանակություն ունի՝ ելնելով հայ ժողովրդի՝ իր կորուսյալ հողի ու հայրենիքի հանդեպ սիրուց, և քանի որ այն պատրաստված է երկաթից, պատված՝ կովի յուղով ու չի ժանգոտվում, նշանակում է, որ չի գա այն օրը, երբ բնիկ հայերը կանտեսեն թուրքերի կողմից իրենց նախնի հայերի նկատմամբ ջարդն ու ցեղասպանությունը, և այդ հարցը միշտ նոր ու կենդանի պահանջ կմնա յուրաքանչյուր հայի խղճի ու գիտակցության մեջ:

Բացի դա, գութանի պատմությունը հինավուրց կամքի, որդուն ու թոռանն ուղղված պապիկի կամքի բարոյական

արտահայտումն է՝ կապված դեպի հայրերի ու պապերի հող ու ժառանգություն մի հրաշալի օր վերադառնալու անխուսափելիության հետ: Սա պատգամ է, որը փոխանցվել ու փոխանցվելու է սերնդեսերունդ:

Հեղինակ՝

Հովիվ:Նորիկ Մնացաքան Արթին (Հովսեփյան)



## Չոն

Այս գիրքը նվիրված է Հայոց Ցեղասպանության բոլոր նահատակների հիշատակին, որը համակարգված ձևով տեղի ունեցավ երիտթուրքական կառավարության կողմից Օսմանյան պետությունում Առաջին Աշխարահամարտի ժամանակ և դրանից հետո:

Այս գիրքը նվիրված է այդ մասսայական կոտորածները վերապրած վկաների հիշատակին, ովքեր պատճառ հանդիսացան արևմտահայերին ևս մեկ անգամ կյանք տալու համար՝ ծնվելու, աճելու ու աշխարհին դեպի բարություն, արդարություն ու խաղաղություն կանչելու, ինչպես մեզ սովորեցրել է Սուրբ Գիրքը:


Այս գիրքը նվիրված է Արցախում՝ Ղարաբաղում հանուն հայրենիքի ազատության ու պաշտպանության ընկած հայ արդար նահատակների հիշատակին:

Այս գիրքը նվիրում եմ նաև հորս՝ Մնացականի ու մորս՝ Դեղձանի (Բթֆթան) հիշատակներին, ովքեր երբեք չդադարեցին սիրո սերմեր սերմանել դեպի մեր քրիստոնեական կրոնն ու մեր հայ ազգայինը, այն հողի ու այն հայրենիքի համար, որը թալանեցին մեզնից մի օր ու մեզ թույլ չտվեցին ծաղկել այդ հողում:

Եվ, վերջապես, այս գիրքը նվիրում եմ իմ մեծ ընտանիքին՝ աշխարհի և Իրաքի հայ Ավետարանական համայնքին՝ մեկ առ մեկ և իմ փոքր ընտանիքին, իմ կնոջը՝ Անահիտին և դստերս՝ Մանյային:

Հեղինակ՝

Հովիվ: Նորիկ Մնացաքան Արթին (Հովսեփյան)



---

*Պապիկիս գութանը*

---



Պապիկս՝ Հարություն Հոսեփի Հովսեփյանի ու տատիս՝ Յալդուզ  
Սարգիսի Սարգիսյանի նկարն է, ում կյանք ու փրկություն էր  
շնորհված այդ սարսափելի ջարդերից՝  
Նկարն արված է Բաղդադում, 1979թ.- ին, և նրանք այս  
պատմության երկու գլխավոր անձիք են:



*Առաջին գլուխ*

*Սերունդները ժառանգում են ցավը*

Իմ ծնողները ծնվել են Իրաքում և նրանք Իրաքում ծնված առաջին սերնդից են, ովքեր Արևմտյան Հայաստանում (ներկայիս Թուրքիայի արևելյան հատվածը) վերապրել են օսմանյան ջարդերը 1915թ.-ին սկսած հայկական ջարդերի ժամանակ:

Հայոց մասսայական ջարդերը կամ հայոց ցեղասպանությունը, որը հայտնի է որպես Հայոց Հոլոքոստ, Հայոց ցեղասպանություն կամ Մեծ Եղեռն անվանումներով, վերաբերում է Օսմանյան Կայսրությունում երիտթուրքական կառավարության կողմից հայ բնակչության կանխամտածված ու պարբերաբար սպանություններին Առաջին աշխարահամարտի տարիներին ու դրանից հետո՝ իրականացնելով մասսայական սպանությունների, տեղահանման ու բռնագաղթի միջոցով, որոնք կատարվում էին դաժան պայմաններում մարդկանց շարայություններով քայլեցնելով՝ հանգեցնելով տեղահանվածների վախճանին:

Ուսումնասիրողները հայ գոհերի թիվը գնահատում են ավելի քան մեկուկես միլիոն:

Արևմտյան Հայաստանի բնակչության դեմ իրականացված կոտորածների ժամանակ իմ նախնիները հրաշքով փրկվել են օսմանյան ջարդերից փախած միլիոնավոր հայերի հետ, իսկ այդ տարածքը Ջրհեղեղից հետո հազարամյակներ շարունակ պատմանականորեն բնակեցված է եղել հայ ժողովրդով:

Հանուն իրենց քաղաքական շահերի օսմանցիները այդ հողերում ապրող հայկական ցեղը ոչնչացնելու արյունալի պլան իրականացրեցին, ուստի փորձ արեցին կազմակերպված հարձակումների միջոցով ոչնչացնել անպաշտպան, անմեղ ու հասարակ հայերին այդ ցեղն ամբողջությամբ վերացնելու համար: Սակայն նրանք, ովքեր կարողացան փախչել, հրաշքով ողջ մնացին՝ փախչելով օտար երկրներ՝ որոնելով անվտանգություն ու խաղաղություն:

Գրեթե երեսուն հազար ողջ մնացած հայերի մի խումբ, քայլելով կազմակերպված ու անկազմակերպ շարասյուներով, հասան մինչև Իրան, իսկ հետո անգլիացիները նրանց բերեցին Իրաք, որտեղի հյուրընկալ ժողովուրդը դիմավորեց նրանց՝ ընդունելով բարությամբ ու սիրով:

Վերապրածները կարողացան բուժել իրենց վերքերը, ընտելացան նոր իրավիճակին, նոր մթնոլորտին ու հանգա-

մանքներին ու կրկին մտան կյանքի հորձանուտ իրենց հայրենիքից շատ հեռու ու այլևս ոչինչ չկարողացան իրենց հետ տանել, բացի ոսնատակ եղած հայրենի հողի հիշողությունները, կարոտախտն ու ցավը:

Միգուցե ցավն այն տեսակներից է, որը նրանք կարողացան խնամքով փոխանցել այդ հայրենիքի հեռու ծնված նոր սերունդներին, ինչն էլ դարձավ հիշողություն, սակայն տխուր հիշողություն՝ լի դժբախտ պատմություններով, որ տեսել էին ծնողներն ու փոխանցել իրենց երեխաներին:

Նրանք այլևս անցյալի ուրախությունները չեն հիշում, քանի որ վարագույրն է պատել այն, արյան, սպանության ու բռնության տեսարաններով լի վարագույրը: Ի՞նչ ժառանգություն: Արդյո՞ք դա կարող է այլընտրանք լինել ցավից բացի այլ բան ժառանգելու համար:

Այո ցավն այն է, ինչ ես լսում էի ընտանեկան գրեթե ամենօրյա խոսակցություններում ու ազգային երգերում և այն, ինչ ես զգում էի, երբ հառաչանքներ էի լսում ու ինչ էի տեսնում լացող աչքերի ու արցունքների կաթիլների մեջ, որոնք չէին տարբերվում ամենօրյա ընտանեկան հավաքույթների ներկաների աչքերից:

Նման միջավայրում էլ ես ծնվել ու դաստիարակվել եմ մինչև երիտասարդությունս, իսկ դրանից հետո այդ մեծ մարդիկ վախճանվեցին ու հեռացան այն ճանապարհով, որով գնում է յուրաքանչյուր մարդ, հեռանալով իրենց հետ տարան այն պատմությունները, որոնք ապրել ու որոնց իրադարձությունների միջով անցել էին ամեն օր, իսկ այսօր միայն նրանց մասին հիշողություններն են մնացել ու այն, ինչ պատմում էին մեզ ամենայն անկեղծությամբ, ու մենք էլ անկեղծորեն լսում էինք դրանք նրանցից:

Ես պապիկիս առաջին թոռն եմ: պապիկս Հարությունը Նա Իրաք է մտել ողջ մնացած հայ ներգաղթյալների շարքերի հետ, նրա որդիներն ու դուստրերը ծնվել են Իրաքում, նրանք առաջին սերունդն են, ապա ամուսնացել են, ու մենք՝ նրա թոռները ևս ծնվել ենք Իրաքում (երկրորդ սերունդը) ու ես 1915-1918թ.-ին հայ ներգաղթյալների հետ Իրաք մտած և Իրաքում ծնված երկրորդ սերունդն եմ;

Այանքը շարունակվեց ու տարիներն արագ անցան, բայց դա չխանգարեց ցավոտ ու տխուր ժառանգության շարունակվելուն, այն հայրենիքի հանդեպ ժառանգած ցավն ու կորուստը, որի մասին միայն լսել էինք ականջներով, բայց աչքերով չէինք տեսել ու մեր ոտքերով չէինք դիպել նրա հողին, այդ կարոտը մեր մեջ օրեցօր ավելանում էր, չնայած,

որ մենք մեծանում էինք՝ դրա հետ կապ չունենալով ու երբեք չէինք տեսել այդ հայրենիքը ու չէինք քայլել մեր ոտքերով, սակայն առաջին սերնդի ներկայությունը (պապիկս ու տատիկս) ու մեր ամենօրյա շփումը նրանց հետ ու նրանց պատմությունները լսելը ստեղծեցին իմ սրտի մեջ այդ հայրենիքի ամբողջական ընդհանուր պատկերը, դաշտերի, արոտավայրերի, սարերի ու ձորերի, ջրերի ու աղբյուրների, անգամ այն երկնքի պատկերը, որի տակ ծներ էին ու մեծացել էին պապիկս ու տատիկս և գաղթել էին:

Իրականում, նրանց ամենօրյա անկեղծ ու պարզ զրույցները ստիպեցին մեզ իրենց աչքերով տեսնել այդ երկրի բոլոր անկյունները, կարծես մենք ապրում ենք այնտեղ ու նա մեր մեջ է, նույնիսկ տատիկիս պատրաստած որոշ կերակուրների անուններ տարօրինակ էին հնչում, որովհետև հնում դրանք պատրաստվում էին այն հայրենիքում, որտեղից իրենք վտարվել էին:

Այս ամենը միասին իմ մեջ հատկանիշներ ստեղծեցին, որոնցից մի մասը ես գեներով ժառանգել եմ հորիցս, իսկ հայրս պապիկիցս, իսկ մյուս մասը ես ձեռք բերեցի հայկական արյուն ունեցող ընտանեկան այն մթնոլորտից, որտեղ ծնվել ու դաստիարակվել եմ, այն ընտանիքից, որի ինքնությունը գալիս է հին ժամանակների հայ արմատներից,

ովքեր ջրհեղեղից հետո հաստատվել են Արեւմտյան Հայաստանում ներկայիս (Արւելյան Թուրքիայում):

Համաձայն տոհմաճառի՝ մայրս արմատներով Վան նահանգից է, Հայոց ձոր գավառում՝ որը Անատոլիայի արևելքում է գտնվում, հյուսիսից սահմանակից է Ադրի ու Դոդուբայագետ քաղաքներին, հարավից՝ Սիրթ ու Հաքքարի քաղաքներին, արևելքից՝ Իրանի պետությանը կամ պատմական Հայաստանի: Իսկ հայրս արմատներով Մոկք (Մոկս) գավառից, որը գտնվում է ներկայիս Թուրքիայի Վան նահանգում ու կոչվում է Բահջա Սարայ:

Այս երկու քաղաքներն էլ Վան նահանգում են կամ այժմյան Թուրքիայի Վանի նահանգում և Մոկս քաղաքում, որը 110 կմ հեռավորության վրա է գտնվում Վան նահանգի կենտրոնից: Այստեղ իմ պապերը ծնվել ու ապրել են, որոնցով էլ քաղաքը ծաղկել է դարեր շարունակ:

Իմ նախնիները զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ ու իրենց կյանքը սերնդերսերունդ նվիրում էին այդ հողին, իսկ հողն էլ տալիս էր նրանց իր բերքն ու բարիքը: Այնուհետև նրանց արյունը հեղեղեց այդ հողերը ու նրանք բռնությամբ գաղթեցին այդտեղից:

Նրանց երեխաների թափած արյան գետերը այդ հողերի վրա հավերժական կնիք դրեցին և այդ արյունը հավերժ կրդավի կորցրած իրավունքի մասին:

Մեր ընտանիքում ծնողներս (երկուսն էլ Իրաքում ծնված առաջին սերունդներն են) յուրաքանչյուր օր մեզ նոր կերակուր էին տալիս: Մեծագույն զոհերի գնով զողացված այդ հայրենիքի տեսականը ծիլ էր տալիս մեր մեջ, ու միգրացե մեր ծնողները փորձում էին մեր մեջ սեր ու կարոտախտ սերմանել այդ կորուսյալ հայրենիքի հանդեպ, (Վան, Մուշ, Արդահան, Սասուն, Բաշկալան, Հայոց ձոր ու Մոկս ) և այլ քաղաքներ մեր պատմական Արևմտյան Հայաստանում:

Ծնողներս անհնարինն էին անում, որ չմոռանանք հայկական ազգային արմատներին մեր պատկանելությունը, հայերի ուզուրպացված իրավունքներն ու հայոց լեզուն, վրեժը, որ ինչքան էլ ժամանակ անցնի, մի օր կհագեցնի ծարավը, և վերջապես բացարձակ վստահությունն այն բանի հանդեպ, որ մի օր վերադառնալու ենք մեր հայրենի հող: Հայրս միշտ այս արտահայտությունն էր կրկնում. «Մենք մի օր կվերադառնանք մեր հայրենիք ու մեր հողերը», ապա հավելում. «Քո պապը սա ասաց ինձ, և ես էլ քեզ եմ ասում, իսկ դու այն փոխանցելու ես քո երեխաներին մինչ այն օրը, երբ կիրականանա այս պատգամ»:

Հիշում եմ, 1985թ.-ին (ես տասնվեց տարեկան էի, իմ եղբայր Նուբարը՝ 14 տարեկան) ուրբաթօրյա արձակուրդներն էին, ես ու եղբայրս մինչ առավոտ նստում էինք, իսկ ծնողներս մեզ հայոց այբուբենն էին սովորեցնում, ապա հայրս հայկական ազգային երգեր էր երգում, ու երբ նրան հարցնում էինք այդ երգերի որոշ բառերի իմաստը, նա մեզ երկար բացատրում էր այդ երգերի նշանակությունն ու դրանց մեջ հնչած առաջնորդների ու քաղաքների անունները ու մեզ պատմում էր այն հերոսական պատմությունները, որոնց մասին գրված էին այդ կրակոտ երգերը:

Ծնողներս իրականում չեն տեսել այդ սարսափելի կոտորածները, սակայն նրանք ապրել են դրանք բարոյապես ու հոգեպես, քանի որ ծնվել են Հավրեզք գյուղում, որը Իրաքի ու Թուրքիայի սահմանին հիմնել են օսմանյան ջարդերը վերապրած պապերս՝ այն նպատակով, որ Իրաքի հյուսիսում գտնվող այս հեռավոր վայրը Վան քաղաք վերադառնալու ամենամոտ հանգրվանն է: Դրա հիմնադիրը հայ ֆիդայական առաջնորդ Լևոն Շադոյան փաշան է, այդ դարաշրջանի ականավոր քաջարի հայ առաջնորդներից մեկը, ով երկար տարիներ ապրել է այստեղ, դպրոց է հիմնել, իսկ պապս ու մորս հայրը (Ջոջադան Մեսրոպ Մեսրոպյան) դրա հիմնադրման օրից գյուղապետերն էին մինչև որ 1975թ.-ին



Իրաքի ռեժիմի ուժերի կողմից գիշերով գյուղի բնակիչների հետ տեղահանվեցին:

Դրա առաջին հիմնադիրներն ու բնակիչները հայ ընտանիքներ ու անհատներ էին, ովքեր վերապրել էին օսմանյան թուրքերի կողմից 1915թ.-ին Առաջին Աշխարհամարտի ժամանակ կազմակերպված սարսափելի կոտորածները՝ նպատակ ունենալով ջնջել հայկական ազգայնականությունն ու էթնիկ պատկանելությունը:

Ինչպես պատմում էին ծնողներս, հայկական ընտանիքները Հավրեզ գյուղում հատկապես ամռանը հավաքվում էին յուրաքանչյուր գիշեր մեծերը սարսափելի պատմություններ էին պատմում այն մասին, թե ինչ են իրենք զգացել փախուստի ժամանակ կամ իրենց քաղաքներում ու գյուղերում գտնվելու, իրենց դեմ իրագործված այդ սարսափելի ջարդերի ընթացքում:

Կանայք լաց էին լինում այդ պատմություններից, որոնք կրկնվում էին երգիչների բանաստեղծությունների կամ պատմվածքների տեսքով, իսկ ծնողներս ու նրանց մյուս տարեկից երիտասարդներն ու աղջիկները յուրաքանչյուր գիշեր ապրում էին այդ հավաքույթների ժամանակ հնչած պատմությունների իրադարձություններն ու ողբերգությունը:

Ես հաճախ էի լսում, թե ինչպես է հայրս տխուր խոսքերով զգայական հայրենասիրական երգեր երգում, իսկ մայրս արցունքներից խոնարհում էր գլուխը, և ես զգում էի, որ ծնողներիս՝ գողացված հայրենիքի հանդեպ կարոտը օրեցօր բույն էր դնում իմ մեջ ևս:

Երբ հայրս խաղում էր հետս ու գուրգուրում էր ինձ ու եղբորս, միշտ կրկնում էր այդ խոսքը. «Դե արի ու ուժեղ հարվածիր ինձ, որ երբ մեծանաս, սովորես, թե ինչպես պիտի հարվածես անառակ թուրք թշնամիներին»:

Իսկ ես ու եղբայր հարցնում էինք. «Հայրիկ, ովքե՞ր են թուրքերը»:

Նա պատասխանում էր. «Նրանք մարդասպաններ են: Նրանք մեր թշնամիներն են:

Մի օր դուք շատ ավելին կհասկանաք, երբ մեծանաք»:

Շատ անգամներ մայրիկիցս լսել էի, թե ինչպես են ոստիկանները ներխուժել մեր տուն, երբ մենք փոքր էինք ու ձերբակալ հորս՝ մեղադրելով նրան հայկական դաշնակցական կուսակցությանը անդամակցելու համար:

Պրն. Պարզև Մանուկյանը (հորս ու մեր հարևանի ընկերներից մեկը) մեծ դեր ունեցավ հորս փրկելու մեջ, նա շտապեց մորս տեղեկացնել, որ ազատվի մեր տանն եղած բոլոր

ամսագրերից ու հեղափոխական գրքերից, ապա մայրս անապարանքով ոչնչացրեց այդ ամսագրերը մեր տան բակում գտնվող թոնիրում, իսկ հաջորդ օրը, երբ դատավորը որոշում կայացրեց խուզարկել մեր տունը, նրանք ոչ մի ապացույց չգտան, չնայած որ հայրս երկու ամբողջ օր բանտարկված մնաց, ապա ազատ արձակվեց (դա տեղի ունեցավ 1971-1972 թվականներին):

Ցեղասպանությունը վերապրած առաջին սերունդը (նրանց հայրերն ու մայրերը) մեծապես ազդվել է ոչ վաղ անցյալի իրադարձություններից, այդ ցեղասպանությունից նրանց հայրերի ու մայրերի փրկվելը պատճառ հանդիսացավ, որ նրանք ծնվեն ու կյանք տան, սակայն մյուս կողմից, նրանք ծնվել են դժվարին պայմաններում ու օտար երկրում, տառապել են աղքատությունից, կարիքից, որովհետև նրանց ծնողները ֆինանսական միջոցներ չունեին իրենց երեխաներին հարմարավետություն ու ապահովություն տալու համար, առաջին սերունդը օտար երկրում կյանքը սկսեց գրոյից՝ չտիրապետելով անգամ այդ երկրի լեզվին:


Օրինակ, հայրս ստիպված էր աշխատել վաղ տարիքից իր ծնողներին, եղբայրներին ու քույրերի կարիքները հոգալու համար, որովհետև այդ ժամանակ գյուղատնտեսությունը

չէր գործում, իսկ նրա ծնողները Իրաքի հյուսիսում գտնվող Հավրեզք գյուղում գյուղատնտեսներ էին:

Հայրս միշտ կրկնում էր. «Եթե գաղթը չլիներ, մեր պայմաններն այժմ բոլորովին այլ կլինեին ծնողներս կորցրել են ամեն բան՝ հող, հարստություն, ունեցվածք, երբ լքել են Վանը»:

Կորուսյալ հայրենիքի նկատմամբ ափսոսանքը, տխրությունը, վրեժխնդրությունն ու սերը նրանք փորձեցին փոխանցել երկրորդ սերնդին և թողնել այն ազդեցությունն ու տպավորությունը, որը զգաց ջարդերից փրկվածներից ծնված առաջի սերունդը:

և իհարկե նրանց հաջողվեց հասնել այդ նպատակին:



*Իրադարձություններ ու*  
*պատմություններ*

Հովսեփյան ընտանիքի գավակների մեջ ես ամենամեծ թոռն եմ: Մայրս ասաց, որ իմ մեծ հորաքույրը Գեղանուշն է ինձ անվանել Նորիկ (Նորիկը բազմիմաստ հայկական անուն է, որը նշանակում է նոր ծնունդ, կամ նորեկ, կամ նորալուսին և այլն...):

Պապիկս Հարությունն էր (նրա անունը Իրաքի գրանցամատյաններում տարբեր կերպ է գրվել. Հայկական անունների բարդ արտասանության համար լեագորներ որոշ թղթերում գրանցել են Արթին ձևով, իսկ որոշներում՝ Հարթեն, իսկ ինչ վերաբերում է ճիշտ անվանը, ապա այն Հարություն Հոսեփի Հարությունն է, ազգանունն է Հովսեփյան ու նա հայոց ցեղասպանությունը վերապրածներից մեկն է):

Նա, իր տոհմը շարունակելու համար իմ մեջ հույս, ապագա ու հաջողություն է տեսնում, այդպես է ինձ ասել Յաղուզ տատիկս (նա ևս ցեղասպանությունը վերապրածներից էր), երբ ես երիտասարդ էի, Յաղուզ տատիկս խաղում էր հետս ու գուրգուրում ինձ այնպիսի բառերով, որոնք ըստ իս չափազանցված էին և ես երբեմն դրանցում

այնպիսի արտահայտումներ էի տեսնում, որ չէի կարող հասկանալ ո՞րն էր դրանց պատճառը, ինչու՞ (բնականաբար, ավելի ուշ այդ վերաբերմունքը դրսևորվում էր նաև մյուս թոռների նկատմամբ):

Մեծանալուն պես ես կարողացա տարբերել այն ամենն, ինչ լսել կամ տեսել էի, որ իմ մեծ ընտանիքը իր թոռների աչքերում էր տեսնում ապագան ու հույսը, որ մի օր կվերադառնա հայրենիք, որտեղ նրանք ծնվել ու ապրել են:

Մակայն այնտեղ վերադառնալու, վրեժ լուծելու, պապերի ժառանգությունը պահպանելու հույսը կախված էր նոր սերնդից, քանի որ մայր հայրենիքում ծնված սերունդը, որ որոշ ժամանակ անց ծաղկեց, խմեց նրա ջրից, կերավ նրա բարիքներից, վայելեց նրա գեղեցկությունը, ծերացավ, ուժասպառ եղավ ու հոգնեց ու դժվարությամբ կարողացավ անցնել ջարդերի միջով, ազատվել թշնամու սրից ու փամփուշտներից՝ կրելով իր ժառանգած գենը, որը հասցրեց անվտանգ վայր՝ ստեղծելով նոր սերունդ, որի միջոցով նա ապագայի հանդեպ հույս տեսավ ու իր տան տանիքի տակ յուրաքանչյուր նորածնի ճիշով զգում էր, որ իրեն հաջողվում է շարունակել կյանքը՝ այսպիսով խափանելով թշնամու՝ իր ցեղը ոչնչացնելու ծրագիրը, նա նոր ծնվողների աչքերի մեջ տեսավ ժպիտ, ուրախություն ու երկար սպասված հույս, որը

պապերի հայրենիք վերադառնալու նպատակն իրականացնելու հույսն էր:

Ամեն երեկո տնային աշխատանքս ավարտելուց հետո ես նստում էի պապիկիս ու տատիկիս հետ և որքան էլ տարբեր թեմաների շուրջ գրուցեինք, միևնույն է գրույցը վերադառնում էր նույն պատմություններին, անցյալի պատմություններին, որոնք չեն մոռացվում և երբեմն ես էի ինչ որ հարցեր տալիս անցյալի դեպքերի մասին:

Պապիկս ավելի հաճախ լուռ նստում էր բազմոցին, իսկ ես նստում էի նրա կողքի գորգին ու բազմաթիվ հարցեր տալիս նրան, պապիկս հիմնականում լռում էր, որովհետև գիտեր, որ տատիկս ճիշտ կպատասխանի, քանզի նա ապրել ու զգացել է այն իրադարձությունները, որոնց մասին ես փորձում էի հետաքրքրվել և որոնք նա երբեք չէր մոռացել՝ չնայած անցնող օրերին ու իրենց հիշողություններում այդ իրադարձությունների կուտակվելուն և նա պատմում էր ինձ այդ դեպքերի մասին (ինչպես էին նրանք աշխատում դաշտերում, թե ինչպես էին նա ու իր երկու եղբայրները խաղում այգում, ինչպես էին ապրում ու ձմեռում և այլն...):

Արցունքները փայլում էին նրա աչքերում ու հոսում տխուր երգերի բառերի հետ, որ նա վանկարկում էր խուլ

ձայնով՝ լցված կարոտով ու սիրով, ինչի՞ հանդեպ կարոտով. Կարոտ այն երկրի հանդեպ, որտեղ ծնվել ու ապրել էր իր կյանքի տասներկու տարիները իր երկու եղբայրների ու ծնողների հետ:

Տատիկս գրագետ չէր, նա երբեք կրթություն չէր ստացել, հայերեն խոսում էր հին բարբառով (Վանի գյուղերի բարբառով) և քանի որ իր բոլոր գյուղացիներից միակն էր, ով փրկվել էր, պահպանել ու խոսում էր այդ հին հայկական բարբառով կամ հատուկ ակցենտով:


Նա կարճահասակ գյուղացի մի կին էր, ոչ մի տեսակի գիտության ու մշակույթի չէր տիրապետում, նա չգիտեր թվաբանություն ու մաթեմատիկա, բազում անգամներ փորձելով անգամ չէր կարող արաբերեն խոսել, չգիտեր ամիսների ու օրերի անվանումները, ինչպես նաև չէր կարող իմանալ ժամը քանիսն է, սակայն նա հայկական արմատներով կին էր, այնքան ամուր, որքան հայոց լեռների քարերը, որոնց մեջ մեծացել էր: Նա տնային տնտեսուհի էր, որի նմանը չկար: Նա ասում էր. «Ես հղի էի վեցերորդ ամսում, լուսաբացից մինչ երեկո երկու դույլ ունեի ու երկու ձեռք, ջրհորից ջուր էի տանում մեր դաշտ ցորենը ջրելու համար, որպեսզի հաց պատրաստելու համար այլուր ունենանք»:



Նա հոյակապ կին էր, ով տառապում էր բնաջնջումից, գաղթից, տխրությունից ու վախից, իսկ դրանից հետո իր դուստրերին ու որդիներին մեծացնելու համար տառապում էր գրկանքներից, աղքատությունից, հոգնածությունից:

Մինչ այդ պահը ես հիշում եմ, թե ինչպես էր մայրս կարի մեքենայի առջև գտնվող աթոռից նրան ընդհատում ու լաց լինելով ասում. «Բավ է, մի շարունակիր այդ պատմությունը, մի վախեցրու տղային, նա կվախենա»:

Այդ ի՞նչ վախենալու պատմություն էր: Ի՞նչ էր տեսել տատիկս: Ի՞նչ էր պատահել:



### *Տարօրինակ ու նոր հրահանգ*

Մի օր պապիկս ասաց ինձ. « Ես պապիկ ունեի Հարություն անունով, քրդերը նրան դիմում էին Մուխսի Հարություն մականունով », ու երբ պապիկիս հարցրեցի ինչ է նշանակում Մուխսի, նա ինձ ասաց. « այդ բառը նշանակում է սուրբ, որովհետև պապս Սուրբ երկիր էր այցելել », ու հարցրի նրան՝ իսկ որտե՞ղ էիք ապրում ու ովքե՞ր էին այդ քուրդ ընկերները, պապիկս լռեց, ապա պառկեց բազմոցին, խորը հառաչեց ու ասաց. « Ախ, որդիս, դա երկար պատմություն է, դու դեռ շատ փոքր ես այն ընկալելու համար, միգուցե հայրդ մի օր կպատմի քեզ այն մանրամասն, երբ մեծանաս »:

Ամեն բան հետաձգվեց, մինչև ես մեծացա, սակայն հոգուս խորքում, երբ մեր ընտանիքի մեծերից ինչ որ արտահայտություններ էի հավաքում, կամ նրանք աչքերում արցունքներ էի տեսնում, կամ ինչ որ երգեր, իսկ երբեմն էլ վիրավորանքներ լսում, ես զգում էի, որ այն ամենն, ինչ նկատարվում էր կիսատ էր ու ես պիտի իմանայի այդ բաց թողնված դրվագները, սակայն ե՛րբ ու ինչպե՛ս:

Գարնանային մի օր, երբ Յաղուզ տատիկս մեր տան այգում նստած նայում էր թփերին, ես նրան հարցրի. « Ի՞նչ է քո անվան իմաստը », նա ժպտաց ու ասաց. « Ես անուշ ու գեղեցի դիմագծերով աղջիկ էի: Հայրս ինձ անվանում էր Յաղուզ, որը հայտնի անուն է Թուրքիայում »: (Այն օսմանյան պալատ է, որը գտնվում է Ստամբուլում, Թուրքիայում: Այդ գեղեցիկ պալատը կառուցվել է 19-րդ դարի վերջին ու օսմանյան սուլթանների ու կառավարության նստավայրն էր մինչ 1922թ.-ը)

Նրա պատասխանն ինձ համար տարօրինակ էր, ինչպե՞ս տատիկիս հայրը իմացավ այդ պալատի մասին ու ինչու՞ իր աղջկան անվանեց Թուրքիայի պալատի անունով, այլ ոչ թե մեկ այլ երկրի մի գեղեցիկ բանի անունով:

Ինչու՞ բոլոր իրադարձությունները, որոնց մասին ընտանիքիս ավագ անդամները խոսում են, պտտվում են կիսափակ հանգույցի շուրջ, որն ավարտվում է Թուրքիայով կամ թուրքերով:

Ապա տատիկս նայեց մեր այգու բակում գտնվող թզենուն ու սկսեց շրջել տերևներն՝ ասելով. « Այս տեսարանն ինձ հիշեցնում է մեր տան այգին, ախ... այն այգին ու լայնարձակ

դաշտերը », և ես ասացի նրան. « Դու գյուղում էի՞ր ապրում», նա ասաց. «Այո, ես ծնվել եմ մի փոքրիկ գյուղում, որը կոչվում էր Կունիս կամ Գոնիս: Այնտեղ տասնհինգ տուն կար, որոնցից տասը հայերի տներ էին, իսկ հինգը քրդական ընտանիքներ էին, չնայած կրոնական վերապահումների՝ մենք սիրով ապրում էինք միասին ու սոցիալական շփում ունեինք, տղամարդկանց միջև հարաբերություններն ընկերական էին, իսկ գյուղատնտեսական փորձի փոխանակումը հրաշալի էր: Մեր այգին լի էր դեղձի ու թզի ու տանձի ծառներով, ու երբ ես փոքր աղջիկ էի, ծառերը լի էին պտուղներով ու դրանց առատությունից թափվում ու լցվում էին ջրատարները:

Իմ ու երկու փոքր եղբայրներիս գործը այդ ջրատարառուներ դրանցում լցված պտուղներից մաքրելն էր, որ դրանցով հոսեր ոռոգման համար նախատեսված ջուրը: Ես հիշում եմ, որ մեր տան դռան մոտ ջրի աղբյուր կար, մենք՝ հայ ու քուրդ աղջիկներս, հավաքվում էինք ու լցնում մեր կուժերը ջրով ու տարբեր թեմաների շուրջ գրուցում », և ես հարցրի նրան.«Իսկ որտե՞ղ էր գտնվում այդ գյուղը», տատիկս հառաչեց ու ասաց. «Երկիրում»:

Ապա ես ասացի նրան. «Իսկ որտեղ է այդ Մայր հայրենիքը, որի մասին պատմում ես»:

Նա ասաց. «Այժմյան Թուրքիայում»:

Իմ զարմանքն ու շփոթմունքն ամեն անգամ մեծանում էին, երբ լսում էի այդ պատմությունները, քանի երիտասարդ էի ու չէի կարող իրերն ու փաստերը կապել միմյանց: Յալդուզ տատիկս ամբողջովին այլ մթնոլորտում էր ապրում, ես կարող էի զգալ նրան, երբ նա կանգնում էր մեր փոքր այգու մեջտեղում, նայում էր ծառներին, հառաչում ու ցածր ձայնով մրմնջում էր երգի բառերը՝ գլխաշորով սրբելով արցունքները:

Նա իրեն պատկերացնում էր իր հոր այգում, որ լքել էր ավելի քան վաթսուն տարի առաջ՝ թողնելով այդտեղ գեղեցիկ հուշեր: Ստիպողաբար լքած հայրենիքի հանդեպ կարոտը սեղմում էր նրա սիրտը...

Անգամ երբ նա միրգ էր ուտում, նա հաճույք չէր զգում. ես լսում էի, թե ինչպես էր ասում.

«Ախ... ու՛ր եմ այն մրգերն ու պտուղները, որ քաղում էի մեր այգուց, դրանց համն ուրիշ էր, դրանք ցանկացած պտղից ավելի հյութալի էին, որ ես կերել եմ այս տարիների ընթացքում »:

Նրա հոգու խորքում ցավ էր, վիշտ, կարոտ. նա դժվարությամբ էր կարողանում գապել արցունքները, նա արդեն ծեր էր ու ծանր էր շարժվում, բայց նրա հիշողությունը շատ ակտիվ էր, նա ամեն բան ու ամեն իրադարձություն հիշում էր, ու երանի այդ հիշողությունները երջանիկ դեպքեր կամ հուշեր լինեին:

Այն, ինչի մասին նա խոսում էր, միախառնված էր ցավի, վշտի ու արցունքների հետ: Ա ինչպե՞ս այդպես չլիներ: Նա վաղ տարիքում կորցրել էր իր մորն ու հորը, ապա եղբայրներին: Ինչպե՞ս այդպես չլիներ Նա սարսափելի տեսարաններ էր տեսել: Ինչպե՞ս նա կարող էր, Նա ականատես էր եղել մի ժողովրդի անողորմ ոչնչացմանը:

Պապիկս, ի տարբերություն տատիկիս, որոշ չափով կրթված էր, ընտանեկան ժառանգության արդյունքում ստացած փորձով ու ինտուիցիայով, նա իմաստություն ուներ, հեռատեսություն ու օրինակելի փորձ, քրդական ցեղերն ու մեծ գյուղատնտեսները նրա մոտ էին գալիս հեռու գյուղերից՝ խորհուրդ հարցնելու կենդանիների ու եղջերավորների գույգավորման ճիշտ ժամանակի մասին, խնդրում էին նրան դիտել աստղերը:

Նա սովորեցրեց նրանց հերկի տարեթվերը, ցորենի ու գարու ցանելու ճիշտ ժամանակը, բերքի ամի-սները մինչ ձմեռնամուտ: Նրանք խորհրդակցում էին կովերի ու ցլերի տեսակների, նրանց ցեղերի մասին, որոնք կարող էին զուգավորվել ու ուժեղ սերունդ տալ: Նա իմաստուն էր, գիտեր ժամա-նակներն ու ճանապարհները՝ հետևելով աստղերին: Նա այդ մեծ փորձը ձեռք էր բերել դեռևս երիտասարդ տարիներից իր հորից ու պապիկից:

Մի օր, երբ պարտեզում քայլում էի նրա ձեռք բռնած, ես լսեցի, թե ինչպես է նա ցածր ձայնով երգում ու այդ երգում հնչած բառերը ոչ հայերեն էին, ոչ էլ արաբերեն: Ապա, երբ ծանր մեղեդի ունեցող այս երգն ավարտվեց, ես հարցրի պապիկիս. «Պապիկ, ինձ ասաց՝ այո, ի՞նչ ես ուզում  
«Այդ ի՞նչ լեզվով ես երգում»

Նա ինձ ասաց «Այս բառերը թուրքերեն ու քրդերեն են»:

«Իսկ որտեղի՞ց ես այն սովորել » հարցրեցի ես:

Նա լռեց մի պահ, ապա ասաց «Սովորել եմ հորիցս, երբ հայրենիքում էինք»

Հետո ասացի նրան.«Որտե՞ղ էր այդ Հայրենիքը»,

Ասաց. «Մեր Հայրենիքը հեռու է... այստեղից շատ հեռու, հայրենիքն այն է, որտեղ ծնվել ենք ու ապրել են մեր պապերը

Վանում» (Վանը այսօրվա Թուրքիայի արևելյան նահանգներից մեկն է):

Բնականաբար ես չհասկացա, թե ինչ նկատի ուներ պապիկս, ապա նրան ուրիշ հարցեր տվեցի: Երանի թե հասկանայի այդ պատասխանները:

Եվ հարցրի պապիկիս. «Իսկ ինչի՞ մասին է այդ երգը», ասաց.

«Այս երգը Ֆիդայու մասին է, ով ապրում է լեռներում»: Ապա հարցրի նրան. «Ո՞վ է Ֆիդային ու ինչու՞ է ապրում լեռներում»:

Նա ասաց. « Նա մեզ պես մարդ է, պայքարի ու պատերազմի մարդ, ով փախչում է սարեր ու ձորեր ապրելու, թշնամիների ու հայրենիքի թշնամիների դեմ պայքարելու համար, նա տուն ու ընտանիք չունի, քանզի ցանկացած պահի նա կարող է սպանվել:

Նա գոհաբերում է իրա կյանքը հանուն հայրենիքի ու իր ժողովրդի»:

Ես հարցրի նրան. «Կայի՞ն հայ ֆիդայիներ, երբ դու Հայրենիքում էիր»:

Պապիկս ասաց. «Այո, ուժեղ հայ ֆիդայիներ կային ու եթե նրանք չլինեին, ապա մենք չէինք փրկվի: Մենք նրանց շատ բան ենք պարտական. Նրանք մեծ գնով փրկեցին մեզ, քանի



որ իրենց կրծքով հետ մղեցին թշնամու գնդակները, որպեսզի մենք ու մեր ընտանիքները գոյատևենք:

Ապա հարցրի պապիկիս. « Իսկ ե՞րբ է դա տեղի ունեցել »: Պապիկս հառաչեց ու ասաց. « Ախ, դա 1915 թվին էր» Ապա լուռ էր պապիկս, ու ես չէի ուզում ավելի շատ հարցեր տալ նրան, ես դեռ տասնհինգ տարեկան էի ու չէի հասկանում այն ամենն, ինչն ասում էր պապիկս...

ու ես ասացի նրան՝ պապիկ, երբ ես մեծանամ, ուզում եմ ֆիդայի լինել: Պապիկս ուժգին սեղմեց ձեռքս, որ բռնել էր ու ասաց ինձ. « Երբ պահը գա, ես ու հայրդ կգնանք կռվելու ու կվերադառնանք մեր գրավյալ հայրենիքը ու վրեժխնդիր կլինենք նրանց սպանողներից: Իսկ դու, դու դեռ փոքր ես, որդի՛ս, սակայն կգա այդ օրը, և այն մոտ է: Եթե ես իմ աչքերով չտեսնեմ, ապա հայրիկդ կտեսնի այն: Եթե հայրիկդ չապրի ու չտեսնի այն, ապա դու կտեսես ու կիրականացնես:

Եթե դու նույնպես չտեսնես այդ օրը, ապա քո զավակներին խորհուրդ կտաս ամեն գնով ձգտել իրականացնել այն »:

(Պապիկս նկատի ուներ՝ որքան էլ ժամանակը ձգվի, ու սերունդներն իրար հաջորդեն, մենք պիտի վերադառնանք մեր գրավյալ երկիրը (Վան) և մյուս հայկական հողերը, որոնք թուրքերի կողմից գավթվեցին):

Նրան ասացի. «Այո'»: Դա հարմարագույն բառն էր այդ պահին, անգիտակցաբար այդպես զգացի:

Այնուհետև պապիկս ասաց ինձ. «Գալու է օրը, երբ կվերադառնաս մեր երկիր, այն քաղաքը, որտեղ ծնվել ու ապրել ենք ես ու քո պապերը, Վանի (Մոկս) կամ (Մոկք) քաղաք»: (Քաղաքի ներկայիս անունն է (Բահչե Սարայ), այժմյան թուրքական Վան նահանգի գյուղերից մեկը):

Այնտեղ, լանջերից մեկում ավելի քան երկու հազար տարի հանգչում են պապերիս աճյունները:

Այնտեղ այն հողն է, որը ես ու պապերդ ոռոգել ենք մեր ճակտի քրտինքով:

Այնտեղ այն հողն է, որտեղ ծնվել ու մեծացել ենք:

Այնտեղ տունն է, որտեղ հաջորդաբար, սերնդեսերունդ ապրել են մեր ընտանիքները:

Այնտեղ ջրհորն է, որտեղից ես, ծնողներս ու պապերս խմել ենք:

Այնտեղ մեր ինքնությունն է, այնտեղ մեր էությունն է, այնտեղ ենք ծնվել, և այնտեղ պետք է մեռնենք, որպեսզի մեր ոսկորները հանգչեն մեր պապերի ոսկորների կողքին:

Այնտեղ քեզ ավար է սպասում, որպեսզի քո ձեռքերով դուրս բերես այն, դա քեզ հասանելի ժառանգությունն է»:

Չհասկացա, թե ինչ նկատի ունեք պապիկս, և առհասարակ չհասկացա, թե ինչ էր ասում, սակայն պապիկիս խոսքերից երևում էր, որ ապրելով սիրելի Իրաքում, նա իր ողջ խղճով ու էությանմբ ապրում էր մի այլ աշխարհում, աշխարհ, որ վեր էր բոլոր սահմաններից:

Մոկս նահանգը, որ ներկայումս կոչվում է (Բահչե Սարայ), այդ օրերին հիմնականում հայերով բնակեցված քաղաք էր, այն Վանի հնագույն քաղաքներից էր: Այնտեղ, Մոկս քաղաքում 1898 թվականի ձմեռային մի գիշեր, տներից մեկում ծնվել է պապիկս, նրա պապը (գերդաստանի ավագը) նրան կոչել է իր անունով (Հարություն), և անվան իմաստն է (մեռելներից հարություն առնելը), Նրա Հարություն պապն ուխտագնացության էր մեկնել Երուսաղեմ, և իր բարեկամների ու ազգականների շրջանակում հայտնի էր (Մահտեսի Հարություն), այսինքն՝ (Հաջի Հարություն) մականվամբ:

Հարություն պապիկս, ում անունը իրաքյան փաստաթղթերում սխալ էր նշված որպես (Արթին), (Հարություն) և (Հարթին), իր մանկությունը, պատանեկությունն ու երիտասարդության մի որոշակի մասն ապրել էր հայրենիքում՝ Մոկսում, մեծացել էր այնտեղ, և աստղերը դիտելու մեծ փորձ

Էր ձեռք բերել, աստղերը դիտելով տեղեկանում էր ճանապարհների ու ուղղությունների, ցանքի ու բերքահավաքի, անձրևային տեղումների ժամկետների մասին:


Այդ փորձը փոքր տարիքից ձեռք էր բերել իր հոր ու պապիկի շնորհիվ: Այդ օրերին պապիկս գարնանն ու ամռանն իր ժամանակի մեծ մասն անցկացնում էր սարերում, ազգականների հետ անասուններին էր խնամում:

Ցանքի օրերին, ընկերակցում էր իր հայրիկին (Հովսեփին) և եղբորը (Աբրահամին), ով երկու տարով փոքր էր իրենից, ինչպես նաև 14 հոգուց բաղկացած ընտանիքի մյուս անդամների հետ (պապիկն ու տատիկը, հայրը, մայրը, երեք երիտասարդ հորաքույրները, չորս քույրերն ու երեք տղաները, նրանցից ոչ ոք չի փրկվել 1915 թվականի թուրքերի կողմից կազմակերպված ջարդերից, բացառությամբ պապիկիս ու նրա երկու եղբայրներ Աբրահամից ու Պողոսից), իրենց հողամասում զբաղվում էին բամբակի և ցորենի մշակմամբ: Սակայն ունեին նաև պտղատու ծառերով մեկ այլ այգի, որտեղ կային մեծ թվով անասուններ:

Պապիկիս ընտանիքը հայերի ու քուրդերի շրջանակում, ինչպես նաև Վան նահանգի այլ բնակիչների ու նրանց

ընտանիքների կողմից շատ հայտնի էր, անգամ նրանց տունը ուղեցույցի դեր էր կատարում, որտեղ գալիս էին տարածաշրջանի համարյա բոլոր ֆերմերները, իրենց անասունների հիվանդությունների, զուգավորման, ինչպես նաև վար ու ցանքի ճիշտ ժամկետների մասին տեղեկություններ ստանալու համար:

(Անգամ երբ տատիկս պապիկիս մեծ ընտանիքում նորահարս էր, պատմում էր, որ շատ հաճախ մարդիկ գիշերով ծեծում էին իրենց տան դուռն ու պապիկիս, նրա հայրիկին կամ պապիկին հրավիրում իրենց անասունների ծննդաբերությանը, որովհետև այդ ոլորտներում մեծ փորձ ունեին):



*Երկրորդ գլուխ*

*Ողբի մեղեդիներ*

Մանկությունս, պատանեկությունս ու երիտասարդությանս նախնական տարիներն ապրել եմ տատիկիս ու պապիկիս հետ, որոնք գրավյալ հողերը լքած վերջին սերնդի ներկայացուցիչներն էին, այն երկիրը, որն իրենց հանձնել է բազմաթիվ էջերից բաղկացած ու արյամբ գրված մի նամակ, որի բառերը կազմված են ցավ ու արցունքից:

Ժամանակակիցն եմ եղել այդ երկու դեմքերին, որոնք ականատես վկաներն էին այն սարսափելի ջարդերին, որոնց միջով անցել են, ու նրանց սրտերում մնացել էր ցավոտ հետքը, փոխանցելով այն հաջորդող սերունդներին:

Այն որբերն ու այրիները, որոնք փրկվել էին այդ սարսափելի ջարդերից, ու փոքր տարիքում դիմակայել կյանքի ծանր բեռն ու վշտերը:

Փրկված սերունդը դպրոցներում ուսում ստանալու բախտին չարժանացավ, սակայն չնայած իրենց անգրագիտությանը,

իրենց պարգույթամբ ու անմիջականությամբ նրանց հաջողվեց տարբեր մեթոդներով հյուսել հողի և գրավյալ հայրենիքի պատմությունները, փորձելով անգամ ամենապարզունակ եղանակներով շարադրել, մարմնավորել ու հավերժացնել բոլոր այն անարդարությունները, դաժանությունը, մարդը մարդու նկատմամբ ունեցած ասելությունը, որոնց ականատեսն են եղել:

Նրանք արտահայտել են իրենց ապրած ամենատարբեր ձևերի ցավերն ու տխրությունը, անգամ հորինել են երաժշտական պատմողական ոճ, որը ոռոգել են արցունքով, ողբով ու կարոտով: Այն հանձնել են հաջորդող սերունդներին, որպեսզի նրանք էլ զգան իրենց աչքերով տեսած ջարդերի ու սպանությունների, բռնազավթումների ու բռնազա-ղթի դաժանությունը:

Պապիկս ուներ բարձր ու տխուր ձայն, նա վարպետորեն, երաժշտական , պատմողական , ողբերգական ոճով նկարագրում էր իրական դեպքերը, (ինչպես որ պատմել են ինձ), նա իր երիտասարդ տարիներից ամեն օր երեկոյան հանդիպում էր գյուղացիների հետ, Հավրեզք գյուղում (1920 թվականին ստեղծված հայկական գյուղ, որի հիմնադիրն էր

Լևոն փաշա Շադոյանը, երբ տեղափոխել էր Օսմանյան ջարդերից փրկված հայ գաղթականներին, որոնք մուտք էին գործել Իրաք, բնակություն հաստատել Իրաքի հարավային (Օմարի գետ) ճամբարում, որտեղից տեղափոխվել են Իրաքի հյուսիսային Իրաք - Թուրքիա սահմանի մոտակայքը գըտնվող տարածք, որը հատկապես մոտիկ է (ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող Վան) նահանգին, որովհետև նրանց թվացել էր, թե հեշտությամբ կարող էին հատել սահմանն ու վերադառնալ իրենց հայրենիք (Վան), սակայն ցավոք, այդ երազանքն անկատար է մնացել):

Պապիկս իր շուրջն էր հավաքում ազգականներին, նստած երգում ու պատմում էր սարսափելի ջարդերի մասին, որոնց միջով անցել էին բոլորով: Նրա երգը սգո նամակ էր, ուղղված՝ երկրորդ սերնդին, այսինքն նրանց որդիներին ու դուստրերին, որոնք ծնվել էին Իրաքում:

Նա պատմողական տխուր երգեցիկ ոճով հարստացնում էր այն ամենն ինչ նոր սերունդը լսում էր ցեղասպանության մասին՝ ջարդերից փրկված իրենց հայրերի ու մայրերի շուրթերից:



Այդ որբերն ու այրիները, որոնք երբևէ ոչ մի կինոնկար չեն տեսել, սակայն տեսել են այն, ինչ ոչ մի կինոթատրոնի էկրաններին ոչ ոք չէր տեսել կամ ականատես եղել սարսափի, սպանության ու արյան մասին պատմող ֆիլմերում:

Այդ հայրերն ու մայրերը, որոնք իրենց կյանքում ոչ մի գիրք չեն կարդացել, սակայն իրենց որդիներին, դուստրերին ու թոռներին պատմել են այնպիսի դեպքերի մասին, որոնք մարդկության կողմից հեղինակված որևէ գրքում կամ հեքիաթում ոչ ոք չի կարդացել:

Արդյո՞ք ես բախտավոր եմ եղել, որ օրերից մի օր ականջալուր եմ եղել նրանց վկայություններին:

Ես լսել ու իմ երևակայության մեջ իմ լսածների հիման վրա նկարել եմ պատկերներ, տեսարաններ, որոնք բառացիորեն փոխանցվել են կենդանի վկաների շուրթերից ու աչքերից, որոնք ապրել էին միայն սարսափելի դեպքերի, Օսմանցիների կողմից հայոց կոտորածների այն հատվածը, որը բաժին էր հասել իրենց:

Երբ պապիկս նստում էր առանձնացած, ես լսում էի նրա ողբերգական ցածրաձայն երգերի տխուր մեղեդին, մինչդեռ բառերը հագիվ էի լսում, առանց ոչինչ հասկանալու, որովհետև դրանք ո'չ հայերեն էին, ո'չ արաբերեն, ես նեղվում էի, երբ լսում էի այդ ողբերգական մեղեդիները, քանի որ կյանքի գարունը նոր մուտք գործած երիտասարդ էի, և ինձ առավել շատ հրապուրում էին այդ օրերին տարածում գտած երգերը:

Սակայն Բաղդադում ձմռան ցուրտ գիշերներին ու ամռան զով երեկոներին, երբ ամբողջ ընտանիքը հավաքվում էր, պապիկս (Հարությունը) կամ (Արթինը) առիթից օգտվելով սկսում էր երգել:

Նա երգում էր մեզ՝ իր որդիների, դուստրերի, թոռների ու երեք հարսների համար, երգում էր իր բարձր, թավ ու գեղեցիկ ձայնով այն երգերը, որոնք հորինել ու ձայնավորել էր ինքը, դրանք շատ տխուր երգեր էին, նա երգում էր հայերեն, սակայն Վանի գյուղերի բնակիչների բարբառով:

Ընտանիքի բոլոր անդամները նստում և ունկնդրում էին այդ բարձրակարգ ողբի երգերը, նրանք հուզվում էին բառերից, երաժշտությունից և բարձրակարգ կատարումից:

---

## *Պապիկիս գութանը*

---

Նրանց արցունքները հոսում էին, անգամ եթե հնչած որոշ բառեր հայերենիքից հեռու այլևս չէին օգտագործվում, սակայն դա արգելք չէր հանդիսանում, որպեսզի հասկանալին երգի ամբողջական բովանդակությունը, որովհետև բոլորի կողմից այդ բառերը հասկանալի էին, անկախ իրենց առօրյա խոսակցության մեջ դրանք չօգտագործելու հանգամանքից:

Պապիկս այդ պատմողական երգերը կատարում էր կատարյալ տխուր վիճակում, և ինչպե՞ս չէ, չէ՞ որ նա այդ բոլոր պատահածների ականատես վկան էր, այդ ջարդերից հրաշքով փրկվել էին միայն ինքն ու երկու եղբայրները, պապիկիս անձը, նրա ով լինելն ու անցած ուղին բավարար էին, որպեսզի լուրջ ու իրական մթնոլորտ տիրեր նրան ունկնդրողների շրջանում:

Ի՞նչ էր պատմում պապիկս այդ ողբի երգերի միջոցով:

Ինչի՞ մասին էր երգում պապիկս մե՛կ հայերեն ու մե՛կ քուրդերեն, որը սովորել էր գրավյալ հայրենիքում:

---

## Պապիկիս գութանը

---

Ինչո՞ւ էին պապիկիս երգերն ստիպում կանանց արտասվել, մինչդեռ տղամարդիկ տխուր իրենց գլուխներն էին օրորում՝ ոգելից խմիչքներին խառնելով իրենց արցունքները:

Այս բոլորի մասին մի օր հարց տվեցի տատիկիս ու ասացի. «Տատի՛կ, ի՞նչ է ասում պապիկս այս երգում, որի պատճառով նրանք արցունք են թափում»:

Տատիկս հոգոց հանեց, մի պահ թեքեց գլուխն ու տխուր ձայնով ասաց.

«Պապիկիդ երգի բառերն են.

Ծիծեռնակն այս տարի պատահաբար անցավ իմ գլխավերևով,

Տեսավ, որ օտար երկրում եմ,

Չարմացած հարց տվեց ու ասաց.

«Ընկե՛րս, ի՞նչ ես անում օտար երկրում,

Ինչպե՛ս ես հասել այստեղ,

Որտե՞ղ է քո ոչխարների հոտը,

Որտե՞ղ են քո մեծ ընտանիքի անդամները,

Ինչո՞ւ արտահանվեցիք ու եկար այս օտար երկիրը»

Թեքվեցի ծիծեռնակի ուղղությամբ և արտասվելով ասացի.

«Ա՛խ, իմ հին ընկեր, ես իմ կամքով չեմ եկել այստեղ, նրանք ինձ բռնի վտարել են:

Նրանք դանակահարելով սպանել են իմ երեք հորաքույրներին, իսկ երեք քույրերիս դանակներով մորթել են իմ մոր ու հոր աչքերի առաջ:

Հետո երկու կես են արել իմ մոր որովայնը:

Ձիերի ոտքերի տակ սպանել են հորս...

Իմ ընկե՛ր, ես չգիտեմ, թե ո՞ւմ համար լացեմ, ո՞ւմ ողբամ:

Իմ ընտանիքի՞ն, քեռիների՞ս, ազգականների՞ս:

Ինձ մի՛ մեղադրիր, որ այստեղ եմ...

Ես այլևս ոչ մի հանգրվան չունեմ, երկիր չունեմ, ես չունեմ տուն, որի տանիքի վրա կշինես քո բույնը:

Ասա՛ ինձ, իմ ընկե՛ր ծիծեռնակ, այս տարի այցելե՛լ ես դաշտերը,

Այնտեղ շուշանը կրկին բացվե՛լ է,

Սալորն ու խնձորը ծաղկե՛լ են,

Ճամփին դիակներ տեսե՛լ են»:

Ծիծեռնակն ասաց. «Ամեն բան նույնն է, ինչ կար, գարունը դեռ շարունակում է գալ, դաշտերը ամեն դարի ծաղկում են...

Սակայն նրանք, ովքեր քաղում էին ծաղիկները բեկորների վերածված տարածվել են ամեն կողմ...

Մի՛ հուսահատվիր, իմ ընկե՛ր, կառուցի՛ր տունդ, վառի՛ր ճրագդ, քանի որ դու պիտի վերադառնաս...

Դու պիտի մի օր վերադառնաս քո տունը, քո երկիրը, քո հայրենիքը»...

Ասացի նրան. «Ա՛խ... որքան եմ կարոտել այդ հայրենիքը»:



## Անվերջ ձմեռը

1915 թվականի ձմռան վերջերին, Հարություն (Արթին) պապիկս 17 տարեկան էր, և այդ տարիներին դա տղաների համար ամուսնանալու տարիք էր համարվում, ուստի նրա ընտանիքը, առանց իր կարծիքը հաշվի առնելու որոշում է իր համար հարմար հարսնացու գտնել:

Այդ օրերում ընդունված սովորույթի համաձայն, ընտանիքի ամենատարեց կինը պետք է գտներ հարմար աղջկան, որը կհամապատասխաներ ընտանիքի պահանջներին:

Աղջիկների ամուսնության տարիքի շեմը 12 տարեկանն էր, հետևաբար այն աղջիկը, որի ձեռքը խնդրելու գնացին (տատիկս) ամուսնացած օրը 12-13 տարեկան էր, տատիկիս անունը (Յալդուզ) էր, նրա հոր անունը՝ (Սարգիս), նա երկու փոքր եղբայր ուներ՝ Հակոբն ու Օհանես: Տատիկս պատմեց ինձ իր անցյալից ու ասաց.

«Մենք ապրում էինք (Կոնիս) կամ (Քոնիս) անունով մի գյուղում, մեր գյուղը դրախտից մի կտոր էր Երկրի վրա, բերք ու բարիք տվող հող ուներ:

---

## *Պապիկիս գութանը*

---

Կային տարբեր տեսակի պտղատու ծառեր, որոնք մեծ թվով տարածված էին մեր այգիներում, այնքան առատ բերք էին տալիս, որ պտուղները քաղում ու որպես կեր տալիս էինք մեր ոչխարներին ու կովերին:

Մեր գյուղում մեծ թվով գուլալ ջրի աղբյուրներ կային, այդ աղբյուրներից մեկն սկիզբ էր առնում մեր այգուց, և ջրերը արևի շողերի տակ փայլվելով հոսում էին, մենք ամեն տեսակի բարիքներով ինքնաբավ էինք:

Ես ու երկու եղբայրներս՝ Հակոբն ու Օհանեսը փոքր էինք, ողջ գարնանն ու ամռանը օրնիքուն խաղում և զվարճանում էինք այդ մարգերում ու այգիներում, երբեմն ինձ թվում էր, որ սա է իրական դրախտը:

Իսկ ձմեռը սաստիկ դաժան էր, վեց իրերահաջորդ ամիսներ անցկացնում էինք տանը, առանց այնտեղից դուրս գալու, ձյունը մինչև մեր տների դռները ծածկում էր, մեր անասունները նույնպես ամբողջ ձմռանը մնում էին գոմերում:

Մեր գյուղում կար միայն 15 տուն, որոնցից 10-ը հայերի տներ էին, դրանք իմ հորաքույրների և քեռիների տներն էին,



խսկ մնացածը քուրդերին էին պատկանում, նրանք մեր անասունների հովիվներն էին, ովքեր տարվետարի տեղափոխվում ու փոփոխվում էին, նրանց տները մի փոքր հեռու էին մեր տներից, սակայն նրանք գործնական կապեր ունեին գյուղի տղամարդկանց հետ:

Մենք մեր ազգականների հետ ընտանյոք զբաղվում էինք սալորի, տանձի ու ընկույզի այգիների մշակմամբ, որոնք ժառանգել էինք սերնդեսերունդ:

Աշնանային օրերից մեկի կեսօրից առաջ մեր տան դիմաց կանգնեց մի պառավ կնոջ ավանակը, հայրս շտապեց ողջունել նրան, այնուհետև օգնեց, որպեսզի իջնի ավանակից, նա իջավ ու մտավ մեր տուն որպես օտարական հյուր...

Մի փոքր հանգստացավ, ճաշ կերավ ու կաթ խմեց, որից հետո պարզվեց, որ մեր տուն եկել էր իր թոռան՝ համար իմ ձեռքը խնդրելու (սովորույթի համաձայն, ընտանիքի տարեցներն էին ներկայանում հարսների ձեռքը խնդրելու), հայրս անմիջապես մերժեց նրա խնդրանքը, և առարկեց իմ ամուսնության գաղափարի դեմ ու ասաց.

«Դուստրս՝ Յալդուզը շատ փոքր է... նա տնային աշխատանքներ կատարել չգիտի, ինչպե՞ս ամուսնացնեմ նրան » ( Նասա ասաց, որովհետև ինձ չափազանց շատ էր սիրում և չէր ցանկանում, որ տունը լքեմ...):

Սակայն պառավ կինը նրան հարց տվեց.

«Դուստրդ ջրի առվակներ մաքրել գիտի՞»

Հայրիկս ասաց. «Այո՛, անշուշտ գիտի»:

Նա հայրիկիս պատասխանեց ու ասաց. «Դա մեզ համար բավարար է, մեզ մեր այգում, իմ դուստրերի հետ, նոր աշխատող ձեռք է պետք »:

Չնայած, որ հայրիկս ինձ շատ էր սիրում, սակայն ավանդույթները պարտադրում էին աղջիկ երեխաներին փոքր տարիքում ամուսնացնել:

Նաև հաշվի առնելով հայրիկիս մեծ հարգանքը ամուսնու տատիկի նկատմամբ (հայրս երբեք իր գլուխը բարձրացնելով ամուսնու տատիկի դեմքին չէր նայել, չնայած, որ վերջինիս դեմքն ամբողջությամբ ծածկված էր սպիտակ քողով, ու նրա դեմքի վրա միայն աչքերն էին երևում):

Մայրիկս ոչ մի բառ չարտասանեց ու ոչ մի հարց չտվեց, նա զբաղված էր հյուրի համար ճաշ պատրաստելով ու նրա հանգստի մասին հոգալով: Նրան անգամ չհարցրին, թե ով է, մինչև որ տատիկը ինքն իրեն ներկայացրեց ու ասաց. « Որդի՛ս, գիտե՛ս ով եմ ես »

Հայրիկս պատասխանեց ու ասաց. «Ո՛չ...»:

Նա ասաց. «Ես (Մահտեսի Հարությունի) կինն եմ, Մոկս քաղաքից, այսքան ճանապարհ կտրել ու եկել եմ, որպեսզի քո դստեր ձեռքը խնդրեմ իմ թոռան՝ որդու որդու համար»:

Երբ հայրս լսեց այս հայտնի անվան ու ազգանվան մասին, անմիջապես համաձայնվեց, առանց իմ ու մայրիկիս կարծիքը հարցնելու, նա ասաց իմ ամուսնու տատիկին.

«Մայրի՛կ, ամբողջ այս ճանապարհն անցել ես, որպեսզի աղջկաս ձեռքը խնդրես՝, դու քո ցանկությունը չկատարած չես վերադառնա, աղջիկս կդառնա ձեր հարսը, շնորհավորում եմ, և խնդրում եմ, որ օրինես այս նշանադրությունը, իմ հարգելի՛ մայրիկ»:

Ամուսնու տատիկը վեր կացավ, գնաց դեպի իր ավանակը, ավանակի փականին ու կապոցից դուրս բերեց մի գունավոր կտոր և գլխաշոր, ու մեկ օսմանյան ոսկյա մետաղադրամ, այն դրեց իմ գիրկը մինչ ես նստած էի հատակին:

Այն որպես դրամօժիտ հանձնեց ինձ, և ես նշանադրված համարվեցի մի տղայի հետ, որի միայն ազգանունը գիտեինք, առանց անգամ փեսացուի տեսքն իմանալու:

Բնականաբար ես երեխա էի, ու չէի հասկանում, թե ինչ է ամուսինն ու ամուսնանալը, նվերները մի կողմ թողեցի ու ոտաբոքիկ վազեցի եղբորս ու գյուղի աղջիկների հետ խաղալու:

Ամուսնու ընտանիքի անունը (Մահտեսի Հարությունի ընտանիք) էր, այդ անվամբ էին ճանաչվում գյուղի ու (Վանի) քաղաքների շրջանակում, այս ընտանիքի անունը լսելով հայրիկս անմիջապես ճանաչեց նրանց (Մահտեսի Հարությունին):

Երբ ամուսնու տատիկն ու հայրիկս համաձայնության եկան, ամուսնու տատիկը գնաց նստեց իր ավանակը, և

հանգիստ սրտով վերադարձավ, որպեսզի պատրաստվի քառասուն օր անց տեղի ունենալիք հարսանիքին, որի համար պետք էր գար ու ինձ իր թոռան համար հարս տաներ:

Բնականաբար մենք օրերը հաշվել չգիտեինք, և ոչ էլ ամիսների անուններն ու ամսաթվերը գիտեինք, ուստի հայրիկս հետևեց ավանդական մեթոդներին, որով հաշվում էին օրերը, այսպես.

Հայրիկս եղբորս մատերից յուրաքանչյուրին ամրացրեց մի փետուր, և այն կրկնեց չորս անգամ, արդյունքում ստացվեց քառասուն փետուր, այնուհետև քառասուն փետուրները տնկեց մի մեծ սոխի մեջ ու թելով կախեց առաստաղից, ամեն օր երեկոյան նա սոխից պոկում էր փետուրներից մեկը, որպեսզի կարողանանք իմանալ, թե քառասուն օրից քանի՞ն է անցել:

(Այս մեթոդը համարյա բոլոր տներում ծանոթ ու օգտագործվող մեթոդ էր, մասնավորապես պահքի օրերին և տոներին սպասելիս, իսկ քառասուն օր անց այդ սոխն ավելացվում էր գատկվա ճաշին՝ օրհնություն ստանալու համար):

Քառասուն օրերն անցան շատ արագ, մեր ազգական աղջիկներն ու կանայք հավաքվեցին մեր տանը, և կեսօրից առաջ, համաձայն պայմանավորվածության, ամուսնու տատիկը երկու ջորիների ուղեկցությամբ ժամանեց, նա նստած էր դրանցից մեկին, իսկ երկրորդն իր հետևից քարշ էր տալիս, դրանք զարդարված էին վարդերով ու գունավոր կտորներով, մի թեթև երգելով ու ծափ տալով մայրիկս արտասավալից հրաժեշտ տվեց ինձ, ինձ հրաժեշտ տվեցին նաև մեր ազգականների աղջիկները, հայրս ինձ դրեց իր ուսերին ու արտասավեց, այնուհետև ինձ նստեցրեց երկրորդ զարդարված ջորու վրա, որն իր հետ բերել էր տատիկը, որից հետո ամուսնու տատիկը գլուխիցս մինչև ոտքիս մատները հաստ կտորով ծածկեց: Կտորի միջից ոչինչ չէի տեսնում, և ոչ ոք ինձ չէր տեսնում:

Մեր փոքրիկ քարավանը շարժվեց, հայրիկս քշում էր իմ հեծած անասունին, որովհետև մեր գյուղից դեպի (Մոկս) քաղաք տանող ճանապարհին անցնում էր սարերի միջով, այդ տարի ձյունն առատ տեղացել էր, և ճանապարհը, որտեղից պետք է անցնեինք, ամբողջությամբ ծածկված էր ձյուններով, որոնք բավականին ավելի բարձր էին քան իմ հասակը:

Կեսուրս քշում էր իր անասունը, մինչդեռ հայրիկս առաջնորդում էր իմ հեծած ջորին, ձյունների միջով անցանք կեսօրվանից մինչև իրիկուն, երբ հասանք Մոկս քաղաքի մուտքին:

Մեզ դիմավորեց հրավիրյալների մեծ խումբը, որը բաղկացած էր տղամարդկանցից ու կանանցից, ճիչերով, պարով, զուռնով ու երգերով մեծ հարսանիքի հարսնևորների շքախումբը շարժվեց դեպի քաղաքի ներսը, մինչև հասանք եկեղեցու բակ, որտեղ կանգ առավ հարսնևորների շքախումբը, հայրիկս անմիջապես ինձ գրկեց ու իջացրեց ջորուց, մտանք եկեղեցի, որը լիքն էր հյուրերով, այնտեղ տեղի ունեցավ պսակադրության արարողությունը:

Ավանդույթի համաձայն, քահանան ինձ հարց չտվեց. «Այսինչին ընդունո՞ւմ ես որպես ամուսին», այլ հարցն ուղղեց հորս, ով կանգնած էր իմ կողքին, որովհետև կնոջ համար եկեղեցում խոսալը կամ նրա ձայնը լսվելը ամոթալի էր համարվում, հետևաբար իմ փոխարեն հայրիկս պատասխանեց քահանայի հարցերին ու ասաց. «Այո»:

---

## *Պապիկիս գութանը*

---

Իմ գլուխն ու դեմքն ամբողջությամբ ծածկված էին, անգամ եկեղեցուց դուրս գալուց հետո հաստ ծածկոցն իմ գլխից չհեռացվեց, մինչև ինձ տարան հարսանիքի վայրն ու նստեցրին կանանց մեջ, այդ պահին հաստ ու ծանր ծածկոցը գլխիցս հեռացվեց:

Երկօրյա մեծ հարսանիքից հետո, դեռ ես չէի տեսել իմ ամուսինը դարձած մարդու դեմքը, և ոչ էլ ինքն էր տեսել իմ դեմքն ու չգիտեր, թե ով եմ ես, նրան տեսել էր միայն հայրիկս:

Պսակադրության արարողությունից հետո ամուսինս հարսանիքից հեռացավ ու գնաց սարերում անասունների հոտերը խնամելու, առանց ինձ հետ խոսելու կամ դեմքս տեսնելու (նա երիտասարդ էր):

Նա գնացել էր սարերում անասունների հոտերին հետևելու, իսկ ես հաջորդ օրը գնացի ինձ հասակակից ամուսնուս ազգական ու հարևան աղջիկների հետ խաղալու:

Ամուսնուս ընտանիքը բաղկացած էր 14 անդամից, նրանք էին Պապիկն ու տատիկը, նրանց երեք լուսնի նման գեղեցիկ աղջիկները, իմ կեսուրն ու կեսրայրը, նրանք ունեին 4 դուստր ու 3 որդի, որոնցից մեկն էր ամուսինս:



Մեր ամուսնության առաջին գիշերվանից, տատիկը՝ ամուսնուս տատիկը, ինձ տարավ իր երեք աղջիկների հետ համատեղ մահճակալում որը հատակին էր, իր կողքը քնելու:

Կնոջ դեմքը ծածկելն ու տղամարդկանց հետ չխոսելն այդ օրերին ընդունված սովորույթ էր ու բարձր բարոյականության նշաններից, որը որևէ քննարկումից վեր էր:

Կնոջ ձայնի լսվելը անբարոյական էր համարվում, նրա դեմքը երևալը չափազանց ամոթալի էր: Սրանք էին պահպանվող ավանդույթները, մարմինը գլխից մինչև ոտքի մատները պետք է ծածկված լիներ, միայն աչքերն էին, որոնք կարող էին երևալ:

Երբ ես ամուսնուս տուն հարս եկա, ամուսնուս պապիկը տարիքով շատ մեծ էր, նա հիվանդ էր ու անկողնում պառկած: Մեկ օրից մյուսը նրա վիճակը ծանրացավ, ընտանիքն ու բոլոր ազգականները հավաքվեցին նրա շուրջ, հիվանդ պապիկը (Մահտեսի Հարությունը), ընտանիքի ավագը, բոլորի ներկայությամբ խնդրեց դեմքիս քողը վեր առնել, որպեսզի նա տեսնի իր թոռան հարսին, այն ամա-

չելով վեր հանեցի, առանց աչքերս բարձրացնելու ու իր դեմքին նայելու, նա ասաց.

«Աղջի՛կս, խոսի՛ր ինձ հետ, որպեսզի ձայնդ լսեմ»: Նա նաև մեկ բառով խնդրեց ձայնս լսել, բայց չհամաձայնվեցի...

Կեսուրս նույնպես պնդեց, սակայն չհամաձայնվեցի խոսել նրա հետ, ամաչում էի, այդ ժամանակ ամուսնուս տատիկն ասաց.

«Աղջի՛կս, համբուրի՛ր ամուսնուդ պապիկի ձեռքն ու խոսի՛ր նրա հետ, թեկուզ և մեկ բառ», ամուսնուս տատիկի ականջին փսփսալով ասացի.

«Եթե հայրիկս իմանա, նա ինձ կսպանի, չեմ կարող, ամոթ է»:

Բոլորի ներկայությամբ ամոթխած մոտեցա, համբուրեցի նրա ձեռքը, ձեռքը դրեցի գլխիս, առանց նրան իմ ձայնը լսել տալու, նստեցի հատակին, նրա ոտքերի մոտ, և նա ասաց. «Օրհնվես, փոքրի՛կս, մենք ճիշտ ընտրություն ենք կատարել...»:

Այսպիսով ամուսնուս պապիկը մահացավ, իսկ ես չկատարեցի նրա՝ իմ ձայնը լսելու ցանկությունը:

---

## *Պապիկիս գութանը*

---

Դրանք այդ օրերում մեր հասարակության մեջ տարածում գտած սովորություններն էին:

Հուղարկավորությունից հետո մարդիկ ցավակցություն հաայտնելու համար խմբերով մեր տուն այցելեցին, (Մահտեսի Հարությունի տունը), տասը օր շարունակ հարյուրավոր մարդիկ գալիս էին ցավակցություն հայտնելու, նրանցից տասնյակներ մեր տանն էին գիշերում, ամեն օր երեք անգամյա մեծ քանակությամբ սնունդ էինք պատրաստում ցավակցողների համար:

Մենք՝ աղջիկներն ու ազգականները, լուսաբացից մինչև ուշ գիշեր աշխատում էինք, թոնրի և ճաշ եփելու համար փայտ էինք հավաքում, խմորն էինք հունցում, կուժերով ջուր էինք տեղափոխում ցավակցողների համար, ափսեներն ու կայթասները լվանալու համար տանում էինք աղբյուրի մոտ, ցավակցողների համար անկողիններ էինք փռում, որպեսզի քնեին:

Առավոտյան անկողիններն էինք հավաքում, և այսպիսով արարողությունները տևեցին ավելի քան տաս օր:

Այդ օրերում տարածում գտած սովորությունների համաձայն, ամուսնությունից քառասուն օր անց հարսի հարազատները

գալիս ու իրենց աղջկան տանում էին ամուսնու տնից, որպեսզի որպես հյուր այցելի իր հայրական տունը:

Նշված սովորույթը կոչվում էր «Խերանց», այսինքն՝ ավանդույթի համաձայն հայրական տուն վերադառնալը:

Նշված անվանման նպատակը հարսին գերծ պահելն էր մարդկանց բամբասանքներից, որպեսզի երկու կողմերի ազգականներին չթվար, թե հարսը վրնտվել է ինչ որ անհամաձայնության պատճառով, կամ նրա մեջ ինչ որ թերություն է հայտնաբերվել:

Հետևաբար երբ նրա մասին ինչ որ մեկը հարցներ, ասում էին՝ «Խերանց» է գնացել, այսինքն՝ հեռացել է ամուսնական տնից, որպեսզի որպես հյուր այցելի հայրական տունը, և ավանդույթի համաձայն նա երկու շաբաթ մնում էր հայրական տանը, այնուհետև հարազատները նրան վերադարձնում էին ամուսնական տուն, որից հետո եթե որևէ հատուկ պատճառ չառաջանար, նա երբեք հայրական տուն չէր վերադառնում:

Այսպիսով, ընդունված ավանդույթի համաձայն, իմ ամուսնությունից քառասուն օր անց հայրս ինձ այցելության եկավ, որպեսզի ավանդույթի համաձայն ինձ երկու շաբաթով մեր տուն տաներ, հայրս եկավ իմ ամուսնական տուն, ամուսնուս հորը, որի անունը Հովսեփ էր, ցաավակցություն հայտնեց մեծ պապի մահվան կապակցությամբ (նրանք դեռևս չէին լսել Մահտեսի Հարությունի մահվան մասին), այնուհետև ամոթխած մոտեցավ ու համբուրեց ամուսնուս տատիկի ձեռքն ու ցավակցեց նրան, հետո խնդրեց նրա թույլտվությունը, որպեսզի ավանդույթի համաձայն ինձ տանի այն տունը, որտեղից որպես հարս դուրս եմ եկել:

(Ընդունված ավանդույթի համաձայն, ընտանիքի ամենատարեց անձն էր կայացնում ընտանիքին վերաբերող որոշումները, իսկ պապիկի մահից հետո տատիկը դարձավ որոշումներ կայացնող անձը, անգամ իր որդին՝ ամուսնուս հայրը, իրավասու չէր ընտանիքի հարցերով զբաղվելու, ինչը մեծահասակներին հարգելու դրսևորումներից էր):

Ամուսնուս տատիկը համաձայնություն հայտնեց հորս խնդրանքին, նրանք հորս խնդրեցին նստել ու ճաշել, հետո ուղևորվել, սակայն հայրիկս կտրուկ կերպով մերժեց

խնամիների տնից որևէ բան ուտել կամ խմել (հարսի ընտանիքի անդամների համար ամոթալի էր համարվում որևէ պատճառով խնամիների տանը ուտել կամ խմելը, բացառությամբ ինչ որ հարսանիքի հրավերք ստանալու կամ մի քանի օրով ցավակցություն հայտնելու համար մնալու դեպքերին): Հայրիկս մերժեց իր առաջ դրված բոլոր տեսակի ուտելիքները, չնայած, որ մոտ կես օր ոտքով քայլելով եկել էր, սակայն իմ ամուսնու տանը ոչինչ չկերավ ու չխմեց:

Ամուսնուս հայրը ինձ տեղափոխելու համար ջորի պատրաստեց, որի վրա դրեց մեկ տոպրակ (մեշոկ) չամիչ ու մեկ տոպրակ (մեշոկ) ցորեն, երկու կճուճ յուղ, և իրենց հարսի հետ որպես նվեր ուղարկեցին հայրական տուն:

Ինձ նստեցրին մեկ այլ ջորիի վրա ու հրաժեշտ տվեցին: Հայրիկս ոտքով քայլում ու առաջնորդում էր ջորիներին: (սա վերջին անգամն էր, որ տեսնում էի ամուսնուս ընտանիքին, որից հետո սկիզբ առան տեղահանություններն ու ջարդերը):

Իմ ամուսնական տնից դուրս եկա առանց ամուսնուս տեսնելու կամ ամբողջ այս ժամանակահատվածում հանդիպելու:

Մեր տուն (հորս տունը) հասնելուց մեկ շաբաթ անց, օրերից մի օր, կեսօրից առաջ մի ասպետ իր ձիով շտապ մոտեցավ, մեր տան դռան մոտ կանգնեց և կանչեց հորս, որպեսզի խոսի նրա հետ, հայրս դուրս եկավ նրան հանդիպելու և ներս հրավիրելու, որպեսզի հյուրը հանգստանա, սակայն տղամարդը մերժեց ու հայրիկիս խնդրեց մոտենալ իրեն, այնուհետև անլսելի ձայնով զրուցեց նրա հետ ու ասաց հորս. «Այս գիշեր գալու են քո մոտ որպես հյուր»: Երբ այդ խոսքերն ասաց, հրաժեշտ տվեց հորս ու արագ շարժվեց անհայտ ուղղությամբ:

Հայրս հասկացավ, թե ինչ նկատի ունեւ այցելուն, դա հորս համար տարօրինակ չէր և ոչ էլ նորություն էր:

(Ամեն տարի մեկ կամ երկու անգամ մեր տուն էին այցելում մի խումբ հայ ֆիդայիներ, որոնք տեղից տեղ էին գնում, և ժամանակ առ ժամանակ գիշերով գալիս էին նաև մեր տուն, հայրս նրանց մեր տանը ջերմորեն ընդունում էր, լավագույն ուտելիքն ու խմելիքն էր հյուրասիրում, նաև սարերում գտնվող իրենց եղբայրների համար որպես պահեստ ուտելիք էր ուղարկում նրանց հետ):

Հայրս անմիջապես դուրս բերեց յուղի մեջ պահածոյացված մսի (ղավուրմայի) կուժերը, դուրս բերեց նաև չորացված մրգերի տեսականին, որո-վիետն ձմեռ էր, այնուհետև բացեց (ժածիկի) հնեցված պանրի կուժը, մինչդեռ մայրիկս շտապեց թարմ հաց պատրաստել, և երբ մուրճն ընկավ, լսեցին ձիերի պայտերի սմպաքների ձայները, որոնք կանգ առան մեր տան դիմաց, ես, երկու եղբայրներս ու մայրիկս շտապեցինք դեպի մյուս սենյակ, հորս ֆիդայի հյուրերն իրենց զենքերով ու փափշտակալ գոտիներով մտն ներս, նրանք վեց հոգով էին, հայրս ողջունեց նրանց ու ինչպես միշտ հրավիրեց ընթերլու, սակայն այս անգամ նրանք ամեն անգամով պես չէին, նրանք ասացին. «Երկար չենք նստելու»:

Նրանք մերժեցին որևէ բան ուտել, որովհետև շտապում էին, նրանց դեկավարը, որի անունը (Ավետիս) էր ասաց հայրիկիս. «Սարգի'ս եղբայր, այս անգամ ուտելու և խմելու համար չենք եկել, ինչպես նախկինում, եկանք քեզ խնդրենք, որպեսզի ձեր գյուղի հայ ընտանիքներին տեղյակ պահես, որ երկու օրում պետք է ամեն բան թողնեք ու թաքուն դուրս գաք այս գյուղից, ուղևորվելով դեպի Վան քաղաք»:



Հայրս լսածից քարացած մնաց իր տեղում, խմբի ղեկավար (Ավետիսը) շարունակեց խոսել հայրիկիս հետ ու շեշտեց. «Խնդիրը շատ վտանգավոր է, թուրքերն ու քուրդերն սկսել են ամեն բան գողանալ ու թալանել, հայերին գյուղերում ու այլ քաղաքներում սպանել ու բռնաբարել:

Կասկած չկա, որ նրանց ավագակախումբը մեկ շաբաթվա ընթացքում կհասնի ձեզ մոտ, կրկնում եմ, ամեն բան թո'ղ և փրկի'ր ընտանիքդ, խոսքերս թաքուն կերպով հայտնի մյուս հայ ընտանիքներին, որոնք ապրում են գյուղում»:

Իրենց բերած գաղտնի նամակի բովանդակությունը հորս հայտնելուց հետո անմիջապես կայծակի արագությամբ դուրս եկան, առանց որևէ բան համտեսելու կամ իրենց հետ վերցնելու:

Հայրս տեղում քարացավ, ձեռքը դրեց գլխին ու բարձրաձայն ասաց. «Ի՞նչը թողնեմ, ի՞նչը վերցնեմ, անասունների հոտե՞րը, պապերիս հողե՞րը, այգիներ՞ը, դաշտե՞րը, աղբյուրներ՞ը»:

Մայրս սկսեց դառնորեն լաց լինել ու ասաց հայրիկիս. «Մենք պետք է մեր երեխաներին փրկենք, իսկ ինչը թողնում են, դա կարճ ժամկետով է լինելու, որից հետո վերադառնալու ենք մեր հողերը: Սարգիս, մենք երկու օր ունենք, որպեսզի ինչ հնարավոր է մեզ հետ վերցցնենք ու մեկնենք Վան, կգնանք այնտեղ մեր ազգականների մոտ, նրանց մոտ կմնանք, իսկ որոշ ժամանակ անց դու միայնակ կվերադառնաս ու այստեղ ամեն բան կստուգես (անշուշտ հայրս ու մայրս մյուսների նման չէին ըմբռնում իրավիճակն ու կատարվածը, որովհետև շատ խաղաղասեր էին, շատ մարդիկ վայելել էին նրանց գթասրտությունն ու սերը, նրանք չար ու քարսիրտ չէին, որպեսզի կարողանային պատկերացնել չարիքի, դաժանության ու անարդարության չափը, որը կարող էր մարդն ունենալ իր եղբոր նկատմամբ, նրանց մտքով անգամ չէր անցնում, թե ինչ է տեղի ունենալու)»:

Հայրս ողջ գիշերը կրակարանի կողքը նստած ծխախոտ էր փաթաթում, ու չգիտեր՝ որտեղից պետք է սկսել ու որտեղ ավարտել:

Առավոտ շուտ հայրս գնաց գաղտնի նամակը գյուղում մեզ հետ ապրող մեր մյուս ազգականներին փոխանցելու, սակայն

նրանցից ոմանք մերժեցին ու ասացին, որ ինչ էլ պատահի կմնան գյուղում, ուրիշներ հայրիկիս ասացին. «Մենք Վան քաղաք չենք գնա, որոնհետև այն հեռու է, այլ ժամանակավորապես լեռներ կբարձրանանք»:

Այսպիսով, երրորդ օրը, նախքան արևը ծագելը հայրս մի մեծ ցուլ բերեց, նրան բեռքերեց ուտելիքներով ու սնունդով, երկու եղբայրներիս՝ Հակոբին ու Օհանեսին նստեցրեց վրան, այդ օրերին Հակոբը տասը տարեկան էր, իսկ Սարգիսը՝ ինը տարեկան:

Գոմից մեկ այլ ցուլ բերեց, և վրան դրեց ծածկոցներ ու նորից ուտելիքներ, մորս նստեցրեց վրան, իսկ ջորիներից մեկին բեռքերեց անհրաժեշտ ապրանքներով և ուտելիքով, դրա վրա նստեցի ես, իսկ նա առաջնորդեց երկու ցլերն ու ջորին:

Այսպիսով, նախքան արևածագը լքեցինք մեր տունը, որը ժառանգել էր հայրս իր պապերից, թողեցին տասնյակ կովեր, հարյուրավոր ոչխարներ, այգիներ, և քայլեցինք դեպի Վան քաղաքը:

Սակայն մի փոքր քայլելուց հետո հայրիկս ասաց ինձ. «Նախ կգնանք Մոկս, քո ամուսնական տուն, որպեսզի նախ և առաջ քեզ վերադարձնեմ նրանց մոտ, որովհետև հիմա նրանք են քո ընտանիքը, այնուհետև մենք կշարունակենք քայլել դեպի Վան», ես սկսեցի բարձրաձայն լաց լինել (անպատեհ էր համարվում հայրիկիս որոշումը քննարկելը):

Երբ ձյունների միջով մի քանի ժամ քայլեցինք, հանդիպեցինք մեզ նման փախուստի դիմած հայերի մի փոքր քարավանի, նրանք մոտ հիսուն հոգով էին, նրանք մեզ կանգնեցրին, որպեսզի հայրիկիս հարցնեն, թե ինչ ուղղությամբ ենք գնում, և երբ իմացան, որ Մոկս ենք գնում, հայրիկիս ասացին.

«Երեկ երեկոյան Մոկս քաղաքը ենթարկվեց թուրքերի ու քուրդերի հարձակումների, այն թալանվեց, կողոպուտ ու սպանություններ տեղի ունեցան, իսկ ում հաջողվեց փրկվել, նա տարբեր ուղղություններով մեկնող քարավանների հետ դուրս եկավ, ամենայն հավանականությամբ թուրքերի և քուրդերի քարավանները մեզանից մի քանի ժամ հեռավորության վրա են գտնվում, փոխի՛ր ուղղությունդ ու փրկի՛ր

ընտանիքդ, նախընտրելի է, որ միանաք մեզ ու մեզ հետ միասին փախչեք դեպի Վան»:

Հայրս մեր խումբը միացրեց քարավանին, որին հանդիպել էինք, և որը մեզ նման ձյուների միջով գնում էր, մենք փոխեցինք մեր ուղղությունն ու այժմ շարժվում էինք դեպի լեռներ կամ լեռներին զուգահեռ ճանապարհով, որտեղ ձիերը կդժվարանային մեր հետքերը գտնել:

Մեր քարավանը ծանր քայլերով շարժվեց մինչև իրիկվա կողմ, երբ մեզ հանդիպեց թուրք ու քուրդ ավագակախմբերից ճողոպրած մի մեծ քարավան, նրանց թիվը գերազանցում էր հարյուր մարդը, նրանց հսկում էին մի խումբ հայ ֆիդայի ասպետներ, նրանք մեզ ստիպեցին միանալ իրենց՝ մեզ պաշտպանելու և մեր անվտանգությունն ապահովելու համար:

Մենք վրաններ լարեցինք ձյուների մեջ, առանց կրակ վառելու: Այդ գիշեր շատ սարսափելի էր, ինձ թվաց, թե այն մեր ճանապարհորդության ամենադաժան գիշերն էր, սակայն ճակատագիրը մեզ առավել սև գիշերներ էր խոստանում:

Մինչ մենք նստած էինք, ասպետներից մեկը մոտեցավ մեզ ու հայրիկիս խնդրեց քարավանի հետ կիսել մեզ հետ եղած ուտելիքն ու խմելիքը, որովհետև նրանց ուտելիքը սպառվել էր: Նրանք իրենց տներից դուրս էին եկել չորս օր առաջ, մինչդեռ մենք նույն օրն էինք լքել մեր տունը:

Հայրս նախ մերժեց ու ասաց. «Ինձ մոտ եղած ուտելիքը հագիվ իմ ընտանիքին կհերիքի»:

Սակայն նկատի ունենալով, որ կարիքը մեծ էր, և կարճատև զրույցից հետո հայրս մեզ մոտ եղած չամիչն ու հացը տվեց նրան, նա վերցրեց ու տարավ, որպեսզի բաժանի բոլորին, ու այսպիսով մեր ուտելիքը սպառվեց:

Մինչ գիշերով հանգստանում էինք, կեսգիշերին մեզ արթնացրին, որպեսզի շարունակենք քայլել, ու երբ վեր կացանք, տեսանք, որ ցլերից մեկը սովից ու ցրտից սատկել է, մայրս սկսեց լաց լինել ու ձեռքերով հարվածել իր դեմքին այն ցլի համար, որն երկար տարիներ ծառայել էր մեզ որպես ընտանիքի անդամ:

Մինչ մայրս լաց էր լինում ու ողբում էր ցլի կորուստը, ասպետներից մեկն եկավ ու ասաց իրեն. «Մի' լացիր, քույրիկ, պահի'ր արցունքներդ, լաց լինելու համար դեռ շուտ է»: (Երևի նա շատ ավելի ցավալի ու տխուր իրավիճակներում էր գտնվել, քան մայրս կարողանում էր ընկալել):

Այսպիսով անմիջապես հայրիկս ինձ ու երկու եղբայրներիս նստեցրեց մյուս ցլի վրա, իսկ մորս՝ ջորու վրա, հայրիկս ոտքով քայլելով քարավանի մյուս անդամների հետ միասին առաջնորդում էր երկու կենդանիներին, նրանք սաստիկ ցրտի ու ձյան պայմաններում դժվարությամբ էին կտրում իրենց ճանապարհը:

Երբ արևը ծագեց, լեռներից կրակոցների ձայներ լսեցինք, ֆիդայի ասպետներից մեկը մոտեցավ ու խոսեց քարավանի առաջնորդի հետ, վերջինս անմիջապես փոխեց մեր ուղղությունը դեպի լեռներ:

Մոտ կես օր քայլելուց հետո առաջին անգամ տեսանք տղամարդկանց դիակներ, որոնց վերջույթները թրերով անդամահատվել էին, տեսանք բռնաբարված ու որովայնը պատռված կանանց ու աղջիկների:

Նրանք թշնամու դաժանություններից փախուստի դիմած հայկական քարավաններից մեկի մնացորդներն էին, Թուրքական ու քուրդական ավազակախմբերը հետևելով նրանց անգութ կերպով բոլորին կեղեքել էին ու նրանց դիակները տարածել ձյունների մեջ, մենք՝ կանայք սկսեցինք լաց լինել ու բղավել, դաժան ու մեզ համար աննախադեպ տեսարաններից ազդված մեր քարավանի կանայք սկսեցին իրենց դեմքերին հարվածել, ու այդ տեսարաններին ականատես լինելուց հետո հասկացանք իրավիճակի լրջությունը, և այն, որ ամեն բան մի շաբաթում կամ մի ամսում չի ավարտվի:

Մյուս կողմից հորս դեմքի արտահայտությունը փոխվել էր, նա առավել քան երբեք մտահոգված էր մեզ համար: Մեր քարավանից մի քանի տղամարդ անմիջապես այդ դիակները ծածկեցին ձյունով, սակայն ֆիդայիների առաջնորդն իր ձիով մոտեցավ նրանց, կանգնեցրեց ու ասաց. «Նման մարդասիրական գործերի համար ժամանակ չունենք, եթե չշտապեք, ապա բոլորդ նրանց պես կսպանվեք»:



Տղամարդիկ ետ կանգնեցին իրենց նախաձեռնությունից, և մեր քարավանն արագ շարժվեց դեպի լեռները, երեկոյան կողմ էր, երբ հասանք ժայռոտ ու շատ խորը մի հովիտ:

Մեզ խնդրեցին իջնել այդ հովիտ, շատերի նման մենք նույնպես լքեցինք մեր անասուններն այնտեղ, մեզ հետ վերցրինք միայն այն, ինչ կարողացանք շալակել, և սրածայր ու գլորվող ժայռերի կտորներից կախվելով փորձում էինք ներքև իջնել, մինչև նշված հովիտը:

Գիշերը վրա հասավ ու մենք դեռ կառչած էինք ժայռերից, փորձում էինք իջնել հովիտը, որտեղ անասելի խավար էր տիրում:

Երբ հասանք հովիտի խորքը, ինչ որ մեկը բղավեց ասելով. «Զգո՛ւյշ եղեք... Զգո՛ւյշ եղեք... Մենք մարդկային դիակների վրայով ենք քայլում»:

Այո՛, դա հովիտն էր, որտեղ մեր ոտքերի տակ բազմաթիվ դիակներ էին, ես անձամբ զգացի, որ ոչ պակաս քան քսան դիակի վրայով քայլեցի, ոտքերիս մատներով փորձում էի զգալ, թե որտեղ կարելի է դնել ոտքս ու մտածում.

«Արդե՞տ՞ք սա մարդու փորն է, թե՞ մեջքը: Արդե՞տ՞ք սա երեխա է»,

ու կրկնում էի. «Տե՛ր իմ... Տե՛ր իմ...», և ոտքերովս զգում էի գետինը, որպեսզի կարողանայի քայլել:

Մինչ մենք քայլում էինք դիակների վրայով, կանայք սկսեցին լաց լինել, աղջիկներն ու երեխաները բղավում էին, տղամարդիկ փորձում էին լռեցնեն նրանց, որպեսզի աղմուկ չբարձրանա ու թշնամու ուշադրությունը չգրավենք, որովհետև հավանական էր, որ թուրքական և քուրդական ավագակախմբերի մնացորդները դեռևս մոտիկ էին ու հսկում էին տարածքը:

Եվ իրո՞ք, մի քանի րոպե անց թշնամիներն իմացան, որ այդտեղ մարդիկ կային, ովքեր փորձում էին անցնել հովիտը, նրանք սկսեցին կրակել հովիտի վերևից դեպի մեր հետևում գտնվող տարածքը, խավարի պատճառով նրանք ոչ հստակ ուղղությամբ, սակայն և շատ ինտենսիվ էին կրակում:

Մենք վազեցինք ու հովիտի մյուս կողմից սկսեցինք բարձրանալ, այնտեղ մի հսկա լեռան լանջն էր: Մինչ փամփուշտները անձրևի պես տեղում էին մեր վրա, և մեկ -

մեկ հաջողվում էր ինչ որ մեկին թիրախավորել ու տապալել այս ու այն կողմ, կանայք, տղամարդիկ, երեխաներն ու երիտասարդները գոռում էին, սակայն այնուամենայնիվ, փառք Աստծուն, որ գիշեր էր, և խավարի շնորհիվ նրանց կրակոցներն անմիջականորեն մեր ուղղությամբ չէին արձակվում, նրանք մեզ չէին կարողանում տեսնել, հետևաբար շատ քիչ մարդ գոհվեց պատահական կրակոցներից, մինչդեռ մենք՝ փրկվածներս, շարունակեցինք մազցել քարքարոտ հովտի ժայռերը, հետո՝ բարձր լեռը, որտեղ հայրս շալակեց եղբորս՝ Հակոբին, իսկ մայրս՝ Օհանես եղբորս, ես նրանցից առաջ էի մազցում, մենք մի փոքր մազցում ու հետո հանգստանում էինք, փորձում էինք կողքկողքի մնալ, մինչև որ արևածագին հասանք լեռան լանջին գտնվող մի մեծ վանք:

Վանքի անունը (Սուրբ Մարութա) կամ (Մարութի):  
Զիմացա՝ հայկական վանք էր, թե՛ ոչ:

Այնքան հոգնած ու սոված էինք, որ վանքի բակում մենք՝ բոլոր փրկվածներս, փռվեցինք գետին, ձյուների մեջ, սովածությունը, սարսափն ու հոգնածությունը դիմակայելով հանուն կյանքի, և այդ դաժան պայքարի ամենաթեժ

պահերին պառկեցինք ու մի քանի ժամով քնեինք, երբեք չեմ կարող բառերով բացատրել այն տառապանքը, որն ապրել ենք այդ գիշեր:

Երբ արթնացանք, վեր կացանք երեխաների լացի ձայներից, տեսա, որ վանքն ու վանքի մեծ հրապարակը լիքն են հարյուրավոր կանանցով ու երեխաներով, վիրավորված տղամարդկանցով, չէի կարողանում զանազանել, թե ովքեր են քնած ու ովքեր՝ մահացած:

Այդ սև պահին Օհանեսին եղբայրս գոռաց. «Մայրի՛կ, մայրի՛կ, չշարժվի մայրի՛կս», մայրս դեմքով պառկած էր եղբորս կողքը, տակը՝ արյան ավազան էր, հայրս շտապեց մոտենալ նրան, և հենց պտտեց մեջքի վրա, ես բարձրաձայն գոռացի.

«Մայրի՛կ... Մայրի՛կ»:

Իսեղճ գթառատ մայրիկս իր աջ կողմից վիրավորում էր ստացել, երբ բարձրանում էինք հովիտն ի վեր, սակայն ցավին ու արյունահոսությանը դիմացել էր, որովհետև եղբորս էր շալակած տանում, ու ոչ ոքի բան չէր ասել, երևի ողջ գիշերն արյունահոսել էր, առանց ոչ մի բառ խոսելու, մինչև որ մահացավ՝ վանքի հրապարակում պառկած:

Ես սկսեցի լաց լինել ու ողբալ մորս կորուստը, ձեռքերով հարվածում էի գլխիս ու ոտքերիս, եղբայրներս գոռում էին, սակայն ոչ ոք մեզնով հետաքրքրված չէր, տասնյակներ մեր նման ողբում էին ու լաց լինում իրենց հարազատների և սիրելիների կորստի ցավից, իմ ձայնը շատ ուրիշների ձայների բազմության մի մասն էր կազմում:

«Ա՛խ... Մայրի՛կ, ա՛խ... Մայրի՛կ...» ու մինչև այսօր, դեռ հիշում եմ մորս արյունաթաթախ պատկերը, հայրիկս շալակեց մորս դիակը, վանքի հրապարակում իր ձեռքերով մի փոս փորեց ու այդ փոսում թաղեց նրա դիակը. «Կարող է պատահել, որ մի օր այցելեք այդ վանքը, հիշե՛ք, որ ձեր տատիկի դիակն այնտեղ է թաղվել»:

Երբ հայրս ավարտեց մորս դիակի թաղումը, դիտորդներն սկսեցին բղավել. «Ջուրդերը, քուրդերն են, պատրաստվե՛ք փախուստի», ես բռնեցի երկու եղբայրներից ձեռքերը, և մենք քայլեցինք հորս հետևից, որպեսզի միանանք քարավանին, որի անդամների թիվն արդեն գերազանցում էր չորս հարյուրը՝ այդ վանքում գտնվողերը մեզ միանալուց հետո,

իսկ մեր ճակատագիրն արդեն կապված էր այս քարավանի ճակատագրից:

Մենք մեկ անգամ ևս դուրս եկանք վանքից, մեզ տանջում էին սովն ու ծարավը մի կողմից և ցուրտն ու թշնամիները մյուս կողմից:

Հայրս գիտակցում էր, որ փախչելիս յուրաքանչյուր քայլ մեզ հեռացնում էր մեր հողից ու մեր տնից, ես լսում էի, թե ինչպես էր հայրս ինքն իրեն խոսում ու ասում. «Ինչպե՞ս կվերադառնանք, ե՞րբ կվերադառնանք, որտե՞ղ է ճանապարհը»:

Բնականաբար քարավանն անհայտ ուղղությամբ չէր գնում, ո՛չ... քարավաններն ունեին փրկության ճանապարհներ, և յուրաքանչյուր քարավանի առջևից քայլում էր մեկ առաջնորդ՝ մինչ այն ճեղքում էր իր ճանապարհը ձյունների ու լեռների միջով:

Այդ իսկ պատճառով հայրս շփոթված հարց էր տալիս. «Ո՞ր կվերադառնանք, ինչպե՞ս կվերադառնանք.... և այլն»:

Մենք մի ամբողջ օր անվտանգ քայլեցինք, ու մեր մեծ քարավանը չհայտնաբերվեց թուրքերի ու նրանց օգնականների կողմից: Սովը սաստկացել էր, իմ երկու եղբայրներն

իրենց փոքրիկ ազգականների հետ սովից լաց էին լինում, հայրս ասաց ինձ. «Ձգո՛ւյշ եղիր, Յաղուգ, աղջի՛կս, ես առաջանամ, գուցե ձեզ համար ուտելիք գտնեմ»:

Հայրս մեծ քարավանում քայլող բազմության մեջ արագ շարժվեց առաջ ու ետ վերադարձավ, իր հետ բերելով մի փոքր բուռ ցորենի հատիկներ, ու չգիտեմ, թե որտեղից էր բերել, նա դրանք սովեց ինձ ու փոքրիկ եղբայրներին և ասաց. «Բոլորը միանգամից չուտե՛ք, հատիկ առ հատիկ կերե՛ք, որպեսզի կուշտ զգաք»:

Ես ու եղբայրներս դեռ լաց էինք լինում մորս համար, ով սպանվել էր թուրքերի փամփուշտով, ու հաց էինք տալիս. «Ինչո՞ւ, նա ի՞նչ էր արել, մենք ի՞նչ էինք արել»:

Հազիվ քարավանը կանգ էր առել ու մի փոքր հանգստացել էինք, երբ քարավանն արագ կրկին շարժվեց, որպեսզի շարունակի ճանապարհը, այդ ժամանակ մենք հանդիպեցինք այլ քարավանների, որոնք եկել էին տարբեր քաղաքներից ու գյուղերից, մեր քարավանն արդեն շատ շատ մեծացավ, հավանաբար մարդկանց թիվը գերազանցել էր երկու հազարը, որոնք միացել էին մեզ, նրանք իրենց հետ տոպրակներով չամիչ էին տանում, մեզ հետ կիսեցին դրանք, ու ավելի քան մի շաբաթ անց առաջին անգամ եղբայրներս, ես և հայրս կերանք ու մի քիչ կուշտ զգացինք:

Մինչ մենք գետնին նստած հանգստանում էինք, ֆիդայիներից մեկը գոռաց. «Շտապե՛ք, վե՛ր կացեք, թշնամին մեզ հետևում է ու արագ առաջանում է, քուրդ ավազակախմբերը հասնելու են մեզ...»:

Նրա բարձր գոռոցը վտանգի ազդանշան էր և մարրդկանց մեջ մեծ իրարանցում առաջացրեց, բոլորը շտապեցին շարժվել, թողնելով իրենց մոտ եղած ամեն բան, նրանք անգամ իրար թողեցին, ու նա, ում հաջողվեց վեր կենալ ու վազել, արագ հեռացավ, իսկ ով տարեց էր և ուշացավ, մնաց այնտեղ՝ իր անխուսափելի ճակատագրին դեմ առ դեմ:

Ես արագ բռնեցի երկու փոքր եղբայրներիս ձեռքերը, վազեցինք ու հայրիկս հետևեց մեզ, սիրելի հայրիկս փորձում էր հանգստացնել մեզ ու թեթևացնել մեր վախն ու սարսափը, որովհետև մենք գոռում ու լաց էինք լինում մյուսների նման:

Լացի, գոռոցի ու ողբի ձայները բարձրանում էին այդ մեծ հովիտը շրջապատող լեռներն ի վեր, այդ լեռները շրջապատում էին հովիտը ամեն կողմից:



Քարավանը մեկ անգամ ևս շարժվեց ավելի մեծ թվով մարդկանցով: Ո՛չ, չեմ կարող ասել քարավան, որովհետև արդեն խառնաշփոթ վիճակ էր, մեծ թվով տարեց մարդիկ իրենց երեսի վրա ընկել էին ժայռերի մեջ, ուրիշներ քայլում էին նրանց վրայով, առանց իմանալու, թե արդեոք ողջ են, թե մահացած:

Մինչ մենք վազում էինք, տեսա ժայռերի մեջ մնացած հղի կանանց, որովհետև նրանք չէին կարողացել փախչել ու արագ շարժվել, տեսա, թե ինչպես են վախեցած ցլերը տրորում կանանց ու երեխաներին և նրանց ճգմուն իրենց ոտքերով:

Մեր ընտանիքից փրկվածներս՝ ես, երկու եղբայրներս ու հայրս, առաջին անգամ էր, որ նման իրավիճակում էինք հայտնվել, այս անգամ թշնամին մեր հետևում էր ու օրը ցերեկով շատ մոտ էր մեզ:

Ֆիդայիները հավաքվեցին ու պաշտպանական գիծ կազմեցին անմեղ քաղաքացիների հետնամասում, որպեսզի խանգարեն թշնամու առաջխաղացումը, մինչդեռ քարավանի ահաբեկված անդամներն իրենց փոքր երեխաներին, երիտասարդ-երիտասարդուհիներին հրում էին առաջ, իսկ

մեծահասակները մնում էին հետևում, որպեսզի պաշտպանեն ու իրենց մարմնով դիմադրեն թշնամու փամփուշտները:

Այդպես էր վարվում նաև հայրս, նա հետևից մեզ գրկել էր իր թևերով, որպեսզի իր թիկունքով պահի թշնամու փամփուշտն ու այն մեզ չվնասի:

Այդ օրը նմանը չունեցող մարդկային մեծ ողբերգության օր էր, բառերով անկարող եմ նկարագրել այն իր ողջ տգեղությամբ, սարսափով, ցավով ու տխրությամբ:

Այսպիսով, նա ով կարողացավ վազել, նա վազեց մինչև մարդկանց առաջ բացվեց մի լայն ու սարսափելի հովիտ, այնտեղ երկու ավերի վրա տաքօրինակ կերպով հոսում էին մահացու ջրեր, որոնք իրենց հետ քաշում ու տանում էին ողջերն ու մահացածները, ոչ ոքի մտքովը երբեք չէր անցել, որ օրերից մի օր ինքն իրեն վտանգելով կանգնեի այդ հովիտը, առնվազն այդ վայրից ու տարվա այդ եղանակին:

Երկու ավերի ժայռերի վրա ջրի ալիքների ձայնը նման էր մահացու օձերի փշոցին, ջրերն անողոք էին, ալիքներն իրենց հետ տանում էին մեծ ու փոքր բոլորին: Դա սարսափելի էր, ու ես անկարող եմ այն նկարագրել իր ողջ էությանբ:

Հիմա մենք արդեն ոչ մի այլընտրանք չունենք, կա'մ պետք էր գնալ վտանգին ընդառաջ ու անցնել այդ հովիտը, կա'մ մնալ մինչև թուրքերի ու քուրդերի ավազակախմբերը կհասնեին մեզ... ուրեմն ի՞նչ պետք էր անենք:

(Հետագայում հայերն այդ հովիտը կոչեցին (Կոտորած Քալի կամ Կոտուլի Քալի) անվամբ, և հովիտն ստացավ այդ արյունալի անունը, որ նշանակում էր (Մահվան հովիտ), հայոց կոտորածներից հետո, խորհրդանշելով այն բազմաթիվ մարդկանց, ովքեր իրենց հոգիներն ավանդեցին դրա մեջ, դրա ափերին կամ դրա պատճառով):

Հայրս ասաց. «Հե'տ քաշվենք»: Մինչ հարյուրավոր մարդիկ շտապում էին դեպի հովիտ՝ իրենց նետելու ջրերի մեջ, ես տեսնում էի հարյուրավոր դիակներ՝ դիակներ երեխաների, կանանց, տղամարդկանց, երիտասարդների, որոնք գնում էին հովտի ջրերի հոսանքով, նրանցից ոմանք գոռում էին օգնություն խնդրելով, ուրիշներ մահացած դիակներ էին, որոնց տանում էին հովտի ալիքներն ու անողորմաբար ոսկորները ջախջախում ժայռերի վրա:

Տեսարանն ահագոյու էր ու արյունալի. Դիակներ... գոռոց... փամփուշտ... և հետևից թշնամին: Իմ այս աչքերով տեսա, թե ինչպես շատ մայրեր դեպի ծառերն էին քաշում ու միացնում իրենց երեխաների ոտքերից, և թողում էին իրենց երեխաներին հովտի ժայռերի մեջ՝ նրանց փրկելու հույսով, մինչդեռ նրանք իրենց նետում էին հովտի ջրերում, որպեսզի մահաճան ու թշնամու պիղծ ձեռքերը չդիպչեն իրենց անարատ մարմիններին:

Տեսա, թե ինչպես տասնյակ հղի կանայք ու երիտասարդ աղջիկներ իրենց նետում էին հովտի ջրերի մեջ, որպեսզի անարատ մահով մեռնեն ու թշնամու ձեռքը գերի չընկնեն:

Իմ գույգ աչքերով տեսա ծեր տղամարդկանց, ովքեր իրենց որդիներին դրած իրենց ուսերին ցատկում էին հովտի ջրերի մեջ, փորձելով տեղափոխել իրենց զավակներին հովտի մյուս կողմը: Նրանցից շատերին հովտի մահացու ջրերը տարան, ու միայն քչերին հաջողվեց փրկվել:

Իմ գույգ աչքերով տեսա հողերին վրա գլորվելով լքված հարյուրավոր նորածին ու փոքրիկ երեխաների, մինչ շներն ուտում էին նրանց վերջույթները:

Մինչ ես, հայրս ու երկու եղբայրներս շփոթված կանգնել էինք ու մտածում էինք. «Ի՞նչ անենք», մանավանդ, որ փամփուշտների ձայներն արդեն ավելի մոտիկից էին լսվում, չգիտեմ, թե հայրս ինչպես հեռվից, ծառերի միջից մի մեծ ցուլ նկատեց, նա մեզ թողեց ու վազեց, հետո վերադարձավ ցլի հետ, ինձ ու եղբայրներիս նստեցրեց ցլի վրա, այնուհետև մեզ իրար կապեց ու բազմության մեջ շտապեց քշել ցուլը դեպի հովտի ջրերը, մենք սարսափելի տեսարանից վախեցած լաց էինք լինում ու գոռում էինք. «Տե՛ր իմ, օգնի՛ր մեզ, հայրի՛կ... հայրիկ», մի խումբ երիտասարդ աղջիկներ շտապեցին մեզ հետ միասին բռնվել ցլից, ու ցուլը կատաղի ալիքների ու դիակների միջով կտրեց իր ճամփան, հայրս մեկ բռնում էր ցլի գլխից, մեկ բռնվում էր կոտոշներից:

Կրակոցներ լավեցին, դրանք արձակվում էին մեզ շատ մոտիկ գտնվող քուրդ ավազակախմբերի կողմից, փամփուշտը անձրևի նման տեղում էր ամեն կողմից ու սպանում բոլոր նրանց, ում թողել էինք մեր հետևում՝ մյուս ափին, անգամ դրանց սուլոցը լսում էինք մեր գլխավերևում:

Յուլը հրաշքով մեզ տեղափոխեց մյուս ափ (այս ցույլը երկնքից ուղարկված օգնություն էր), ու հենց հայրիկս ոտք դրեց ցամաքին, դողացող ձեռքերով բռնեց ինձ ու եղբայրներիս և մեզ շալակած տեղափոխեց ցամաք, այնուհետև օգնեց այն աղջիկներին, ովքեր նույնպես բռնվել էին ցլից, մինչդեռ ցուլը, որ ալիքների ուժգնությունից հոգնատանջ էր եղել, մյուս ափ հասնելուն պես, հենց մենք ոտք դրեցինք գետնին, նա ուժասպառ ալիքների հետ հեռացավ, կարծես ծառի ճյուղ լիներ:

Մեր փրկությունը հրաշք էր, իսկական հրաշք, բայց հիմա, հովտի մյուս կողմում շատ քիչ թվով փրկված մարդ կար, ովքեր մեզ հետ էին քարավանում:

Այս անիծված հովտի ջրերն սպանել էին հազարավոր երեխաների, կանանց, հղի կանանց, տարեցների, տղամարդկանց ու երիտասարդների, իսկ ովքեր հովտի ժայռերի մեջ թաքնվել էին, նրանք սպանվեցին թշնամու դանակներով, թրերով ու փամփուշտով...

Հիմա այլևս ոչ ոք լաց չէր լինում, փրկվողը նոր ծնվածի պես էր: Իսկ ովքեր կորցրել էին իրենց ընտանիքի անդամներին,

հիմա արդեն չէին ողբում, որովհետև անխուսափելի մահից առնվազն իրենց նոր կյանք էր գրվել:

Մի պահ մենք մեզ ապահով զգացինք, անկարելի էր ու անգամ խելագարություն կլիներ, եթե թշնամին իր ձիերով անցներ այս հովիտը:

Այդ հովտից մոտ կես օրվան ճանապարհ գնացինք մի լեռան լանջի տակով, ու քարավանը հանգստանալու համար կանգ առավ, քիչ թվով փրկվածները դուրս եկան ժայռերի մեջ ուտելիք գտնելու նպատակով, մեզանից ոմանք մի քանի օր է, ինչ ոչինչ չէին կերել, ուտելու ոչինչ չկար, և սաստիկ սովից ոմանք ստիպված եղան խոտ ուտել, սակայն հայրիկը մեզ արգելեց նման բան անել, որոնհետև սաստիկ սովի հետևանքով խոտ ուտողների փորը մի քանի ժամ անց ուռեց, ու նրանք հաջորդ օրը մահացան իրենց կերած խոտի պատճառով:

Հայրիկս ծանոթացել էր հայ ֆիդայիներից մեկի հետ, ում հետ նաև ազգականական կապ ուներ, նա հայրիկիս տվեց մի կտոր չոր հաց, վրան յուղ քսած որը մեր միջև բաժանեցինք:

Հաջորդ օրը մեզ միացավ մեկ այլ քարավան, որտեղ կային Վան քաղաքից փախուստի դիմած ընտանիքներ այն բանից հետո, երբ ճանապարհին քարավանը հազարավոր զոհեր տվեց այդ մահաբեր հովիտում, այդ քարավաններում կային Վանի քաղաքներից՝ Վան, Մոկս, Հարմաշ, Հայոց Ձոր, Շատախ և այլ քաղաքներից գաղթած անձինք, հայրս անմիջապես գնաց այդ քարավանների անդամներն ստուգելու, այն հույսով, որ կգտնի իմ ամուսնուն կամ ամուսնուն ընտանիքին, կամ թեկուզ ազգականներից, կամ ընկերներից մեկին, կամ գոցե սովից տառապող երկու փոքր եղբայրներիս համար ուտելու բան կգտնի, նա փրկվածների մեջ միջին տարիքի մի տղամարդու հանդիպեց, նրա անունը Դավիթ էր, նա մեր ազգականներից էր, ով բնակվում էր Մոկս քաղաքում, որտեղ ես ամուսնացա, նա 16 հոգուց բաղկացած իր ընտանիքի բոլոր անդամներին կորցրել էր:

Հայրս նրանից հետաքրքրվեց ամուսնուն ընտանիքի ու ամուսնուն մասին, այն հույսով, որ նրանց ճակատագրի մասին մի բան կիմանա, նրան հորեղբայր Դավիթը պատասխանեց.



«Չեմ կարծում, որ նրանցից ինչ որ մեկը փրկված լինի: Ու մի' տխրիր, որովհետև անգամ մեզանից ոչ ոք չի փրկվելու: Դուք իմ տեսած արհավիրքը դեռ չեք տեսել, երբ թուրք ու քուրդ ավազակախմբերը հարձակվեցին Մոկս քաղաքի տների վրա, տղաներին ու երեխաներին սպանեցին, իսկ աղջիկներին առևանգեցին ու բռնաբարեցին, հետո սպանեցին:

Չեմ կարծում, որ Մահտեսի Հարությունի ընտանիքից ինչ որ մեկը փրկված լինի»:

Հորեղբայր Դավիթն իր հետ կտորից տոպրակ ուներ, դրա մեջ մի քանի կտոր չորացրած մածուն կար, ու նա դրանցից հազիվ չորս կտոր տվել էր հայրիկիս, և հայրիկս ուրախ վերադարձավ մեզ մոտ՝ գրպանում իր հետ բերելով չորացրած մածունի կտորները, նա զգուշությամբ ու կամաց դրանցից երկուսը դուրս բերեց, որպեսզի շրջակայքում ոչ ոք չտեսնի, այնուհետև փաթաթեց մի կտորով, գետնից մի քար վերցրեց ու սկսեց կապոցի մեջ գտնվող չորացրած մածունի կտորները կամաց - կամաց ճզմել:

Այնուհետև ասաց ինձ. «Աղջի՛կս, Յալդուզ, դու մեծ ես, խոշորագույն բաժինը թո՛ղ եղբայրներիդ, որովհետև նրանք փոքր են», ու չնայած, որ շատ սոված էի, և ուժերս սովից սպառվել էին, սակայն հորս ասածի նկատմամբ անհնազանդ չգտնվեցի:

Երբ տեսա, թե ինչպես է հայրս արտասվում, խնդրելով ինձ ուտելիքի իմ բաժինը զիջել եղբայրներիս, ու նախքան իր բերնով դա ինձ խնդրելը, սկսեցի բարձրաձայն լաց լինել մեր վիճակի վրա ու գոռալով ասում էին իրեն. «Հայրի՛կ... հայրի՛կ... ինձ հետ տար մեր գյուղն ու մեր տունը, ուզում եմ սալոր ու թուզ ուտել, մայրիկիս թխած հացով»:

Հայրս լաց եղավ ու ասաց. «Ամեն ինչ ավարտվել է, աղջի՛կս, ամեն բան վերջացավ այնպես, ինչպես վերջացավ մայրիկդ»:

Այստեղ ու այս վշտալի իրավիճակում երբ տեսա հորս արցունքները, զգացի, որ մենք էլ չենք վերադառնա բարիքների երկիրը, մեր տունն ու հողը, ու ես հավիտյան կորցրի մորս ու հայրենիքս:

Նախքան այս երկխոսությունը ցնցված էի ու զգում էի, որ հորձանուտի կամ երագի մեջ էի, ու այն շուտով ավարտվելու էր, և ամեն բան դառնար այնպես, ինչպես նախկինում էր, սակայն հիմա, երբ գաղթականներ էինք մի երկրի սահմանին, որը Իրան էր կոչվում, զգացի, որ այն ամենն ինչ կատարվեց իրական էր: Մեր տանն ու գյուղում մեր երջանիկ ու փառքի օրերն ավարտվեցին, հավիտյան ավարտվեցին...

Հայրս չորացրած մածունի փոշուց մի քիչ դատարկեց. Հակոբ եղբորս բերնում, հետո մի որոշ քանակությամբ էլ Օհանես եղբորս բերնում, իսկ այն, ինչ մնած կապոցի մեջ, դատարկեց իմ բերնում, մինչդեռ կապոցի ծալքերի մեջ մնացած փոշին հայրիկս թափ տվեց իր բերնի մեջ, քչով բավարարվելով, այնուհետև մեզանից յուրաքանչյուրին մի կում ջուր տվեց, սակայն փոքր եղբայրներս դեռ տառապում ու լաց էին լինում սաստիկ սովից, հայրս եղբայրներից կշտացնելու համար արդեն այլընտրանք չուներ, ուստի ստիպված եղավ մեզ թողնել, որպեսզի գնա հեռու և դիմացի հովտից ուտելու ինչ որ բան գտնի, ես երկու ձեռքերով գրկել ու փոքրիկ գրկումս պահել էի եղբայրներիս և արցունքոտ աչքերով հետևում էի հայրիկիս, թե ինչպես էր նա հեռվում, ժայռերի մեջ ուտելու բան փնտրում:

Մեկ ժամ կամ մի քիչ ավելի ժամանակ անց հայրս արագ քայլերով վերադարձավ, նա իր ձեռքերում ուներ բույսերի արմատներ, նա գիտեր, որ դրանք ուտելի էին, ինչպես նաև ժայռերի մեջ թռչուններից մեկի բնում թողած հինգ հավկիթները:

Հորս երջանկությունն այդ պահին անբացատրելի էր, նա արագ արմատները դրեց փայտյա մի ամանի մեջ ու սկսեց քարով ճզմել, մինչև վերածվեցին խմորի, դրանց վրա ավելացրեց իր մոտ եղած չորացրած մածունի մանցորդը, և խառնուրդին ավելացրեց փոքրիկ հավկիթները, նա ուրախ ու արագարագ սկսեց հունցել այն, նա անընդհատ աջ ու ձախ էր նայում, որ հանկարծ ոչ ոք մեզ չտեսնի, այնուհետև մի քիչ ջուր ավելացրեց խառնուրդին ու այն մատուցեց եղբայրներիս, որոնց աչքերը հետաքրքրությամբ հետևում էին հայրիկիս ձեռքի շարժումներին, երբ նա իրենց համար ուտելիք էր պատրաստում, փոքրիկ եղբայրներս կերան խառնուրդը, մինչև կշտացան ու պառկեցին գետնին, որպեսզի քնեն, իսկ ամանում մնացած ուտելիքը ես ու հայրս կիսեցինք մեր մեջ:

Երեկոյան մարդիկ հուսադրող լուրեր տարածեցին. «Հայ մեծ ֆիդայի հրամանատարներից մեկն իր խմբով եկել է, որպէսզի առաջնորդի ու պաշտպանի մեր քարավանը, որը շատ էր մեծացել այն բանից հետո, երբ մի խումբ մեծ ու փոքր փրկված քարավաններ ու անհատներ էին միացել դրան»: Մի տեսակ հանգստություն ու ապահովություն տիրեց մարդկանց մեջ:

Մենք բոլորով վեր կացանք քաջ ու անվախ և կազմակերպված քարավանում սկսեցինք քայլել բլուրների ու լեռների միջով, քարավանի անդամների թիվը հազարներով էր, նրանք շրջապատված էին ֆիդայի հայ ասպետներով, ովքեր զինված էին:

Մենք ողջ գիշեր ու մինչև առավոտ քայլեցինք, ու ոչինչ տեղի չունեցավ, սակայն հենց արևը ծագեց ու օրը բացվեց, մենք թիրախավորվեցինք թշնամիների՝ թուրքական կանոնավոր բանակի կողմից, ովքեր այս անգամ մեզ սպասում էին հրետանիներով:

Հենց հասանք բաց հարթավայր, թուրքերն սկսեցին իրենց թնդանոթների արկերն արձակել մեր քարավանի ուղղու-

թյամբ: Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, արկերը աշ ու ձախ տեղում էին, մենք չգիտեինք, թե որ կողմ պետք է փախչեինք:

Բոլորը բղավում էին. «Աստվա՛ծ իմ, ո՛վ Հիսուս, փրկի՛ր մեզ», ոչ ոքի չէինք տեսնում, միայն արկերի սուլոցն էինք լսում, թե ինչպես էին դրանք անողորմաբար տեղում մեզ վրա՝ կտոր-կտոր անելով անգեն, կոտրված, ընտանիք, երեխաներ, ծնողներ ու ազգականներ կորցրած գաղթականների մարմինները:

Անգամ այդ վիճակում և նման օտար վայրում սրիկաները հետևում էին մեզ, որպեսզի վերջնականապես ոչնչացնեին:

Մարդիկ փորձեցին այս ու այն կողմ ժայռերի և փոսերի մեջ, լայն հարթավայրում թաքստոց գտնել:

Սակայն մեզ հսկելու համար ժամանած ֆիդայական խմբի հրահանգն էր. «որ մենք շարունակենք արագ քայլել, և անգամ ռմբակոծման դեպքում չկանգնենք»:

Մենք երեքով գոռում էինք, շարունակում էինք կառչած մնալ հայրիկից հագուստներից, երբ նա վազում էր, իսկ ռումբերն ընկնում ու սպանում էին մարդկանց, մեծ ու փոքր բոլորին անխնա, նրանց վերածելով տարտղնված բեկորների,

մենք մյուսների նման խենթացած վագուս էինք, մինչև որ հասանք մի վայր, որտեղ արկերը մեզ չէին հասնում:

Մի փոքր սարսափելի թություն տիրեց, հայրս արագ ինձ ու եղբայրներիս առավ իր թևերի մեջ, մենք մյուս փրկվածների նման գետնին ծածկոց փռեցինք, որպեսզի շունչ քաշենք ու վայելենք խաղաղությունը, սպասելով, թե ինչ կկատարվի:

Շատ կարճ ժամանակ անց հեռվից անբնական լացի ու գոռոցի ձայներ լսվեցին, ֆիդայի մարտիկներից մի քանին իրենց ձիերով շտապեցին լացի ու գոռոցի ձայնի ուղղությամբ:

Մեզ թվաց, թե անբնական ինչ որ բան է կատարվել: Փրկվածների փոքր թիվը նույնպես շտապեց նույն ուղղությամբ, և մինչ մենք գետինն էինք փռում, մի տղամարդ արագ անցավ մեր կողքով, հայրս շտապեց կանգնեցնել նրան ու հարց տվեց.

«Ի՞նչ է պատահել»,

տղամարդը պատասխանեց.

«Հրամանատարը, ով իր զինվորների հետ եկել էր մեզ պաշտպանելու, զոհվեց, ռմբակոծության ժամանակ զոհվեց»:

Հայրս իր ծնկներին ծեծելով ասաց. «Ի՛նչ ողբերգություն, ի՛նչ փորձանք», ու հայրս վեր կացավ, մեզ նույնպես ոտքի կանգնեցրեց, մենք վեր կացանք, ու միասին արագ գնացինք այնտեղ, որտեղ հավաքվել էր մարդկանց բազմությունը, ես տեսա, թե ինչպես էին զինյալները գետնի մեջ մի փոս փորում, որպեսզի թաղեն իրենց հրամանատարի մարմինը:

Ու մինչ ինչ որ մեկը սպանողներից վրեժխնդիր լինելու կոչեր էր անում, ուրիշներ շտապում էին թաղել նրան, և բոլոր ներկաները լաց էին լինում, կանայք ողբալով իրենց դեմքերն ու գլուխներն էին ծեծում ձեռքերով, քարավանի համարյա բոլոր փրկվածները, բացառությամբ վիրավորերին, խմբված էին այնտեղ, թաղման վայրում, ու հենց դիակը իջեցվեց գերեզման, թուրքերը վերսկսեցին մեզ ռմբակոծել հրետանիներով, բոլորը վազեցին, մենք նույնպես սկսեցինք վազել, մարտիկները շտապում էին մարդկանց օգնելու:



Այսպիսով մեկ անգամ ևս, ավելի քան մեկ ժամ քայլեցինք հրետանու կրակների տակ, ու դարձյալ հարյուրավորների կյանքեր խլվեցին:

Առավոտյան, երբ դեռ արևը ծագում էր, հասանք իրանական Սալմաստ կամ Սալմասա քաղաքի մուտքին:

Այդ քաղաքի բնակիչ հայերը դուրս եկան մեզ օգնելու: Նրանք մեզ ուտելիք ու խմելիք, հագուստ տվեցին:

Հայրս արագ սկսեց փնտրել մի ընտանիքի, ովքեր մեր ազգականներն էին ու երկար տարիներ է, որ ապրում էին այդ քաղաքում: Նրանց գտավ, նրանք եկան ու մեզ տարան իրենց տուն, և այդտեղ իրենց հետ մնացինք:

Նրանք մեզ իրենց տանը սենյակ հատկացրին, սակայն ո'չ կարողանում էի հանգստանալ, ո'չ քնել այն ամեն ինչից, որ տեսել էի, ու ինչի միջով, որ անցել էինք, ես գիշեր-ցերեկ լաց էի լինում մորս համար, լաց էի լինում ազգականներիս ու ընկերներիս համար, ովքերի անմեղ արյունը թափվեց:

Այդ սարսափելի արյունալի տեսարանները, որոնց ակա-նատես էինք եղել երբ փախչում էին, ինձ հանգիստ չէին

տալիս քուն թե արթուն, ու երբ ինչ որ ձայն էի լսում, սարսափից գոռում էի:

Ընտանիքը, որ մեզ հյուրընկալել էր, հորեղբայր Գուրգենի ընտանիքն էր, նա մորս ազգականներից էր ու մեծ ընտանիք ուներ, նրանք 22 անդամ էին, ու անկարելին արեցին, որպեսզի ինձ իմ այդ ծանր հոգեկան վիճակից դուրս բերեն:

Օր օրի սարսափը մտավ հորեղբայր Գուրգենի ընտանիքի անդամների մեջ, որովհետև այն հայերը, ովքեր ապահով ու խաղաղ ապրում էին Սալմաստ քաղաքում, սկսել էին վախենալ, որ հայերի կոտորածները կազմակերպած թուրք ու քուրդ ավազակախմբերը նրանց հետևից կհասնեն Սալմաստ քաղաք, և առավել մեծ կոտորածներ կկազմակերպեն այդ քաղաքում ապրող բոլոր հայերի նկատմամբ, ուստի հորեղբայր Գուրգենն իր կնոջը, աղջիկներին ու փոքր տղաներին ասաց, որ իրենց թանկարժեք իրերը վերցնեն ու գնան Թեհրան քաղաք, այնտեղ տուն վարձակալեն ու որոշ ժամանակ մնան, մինչև այստեղ իրավիճակը հանդարտվի, հորեղբայր Գուրգենը խնդրեց հորս, որ մենք նույնպես միանանք իր ընտանիքին ու մեկնենք Թեհրան, սակայն հայրս պատասխանեց. «Մենք կմնանք այստեղ, գաղթականների խմբերի հետ, հավանաբար խաղաղության համա-

ձայնագիր կնքվի ու մենք վերադառնանք մեր հայրենիք ու մեր հողերը»:

Այդ օրերին, տարբեր հայկական քաղաքներից ու գյուղերից ամեն օր հայ անհատներ ու խմբեր օսմանյան կոտորածներից փրկված հասնում էին իրանյան Սալմաստ քաղաք:

Հայրս ամեն օր հորեղբայր Գուրգենի հետ գնում էր նոր եկածներից լուրեր լսելու, փորձում էր տեղեկանալ ամուսնուս ու նրա ընտանիքի ճակատագրի մասին, սակայն նրա մասին ոչինչ չիմացավ:

Երկու ամիս անց լուրեր տարածվեցին, թե կոտորածներից փրկվածներին տանելու են Հայաստան, հայրս լուրը լսելով ուրախացավ ու ասաց. «Եթե Հայաստան գնանք, որոշ ժամանակ անց հեշտ կլինի այնտեղից անցնել ու վերադառնալ մեր հողեր»:

Հորեղբայր Գուրգենը մեզ ճանապարհի համար սննդի պաշար տվեց, հրաժեշտ տվեցինք մեզ երկու ամիս իր տանը հյուրընկալած հորեղբայր Գուրգենին ու դուրս եկանք մյուս

հայ գաղթականների հետ, մեզ հետ տանելով մեր ցավերն ու հուշերը, կոտորածներից փրկված հազար հազարավոր հայերի հետ մեծ խմբերով քայլեցինք:

Մեզ էին ուղեկցում, ինչպես ասել էին, ֆիդայիների մի խումբ, ովքեր առաջնորդում էին խումբը դիմացից ու հետևից: Այս անգամ իրավիճակն ավելի լավ էր, քան նախորդ անգամ, մենք մեր ուժերը հավաքել էինք, բավարար ուտելիք ունեինք, ու համեմատաբար ավելի անվտանգ ճանապարհով էինք գնում, կարծես ժամանցային զբոսանքի էինք դուրս եկել, որքան հիշում եմ, մենք ուղևորվում էինք դեպի Ուրմիա քաղաք, որպեսզի այնտեղից անցնենք Հայաստան:

Առաջին ու երկրորդ օրերը քայլեցինք, սակայն երրորդ օրը հրահանգ եկավ, որ կանգ առնենք ու մնանք մի ընդարձակ հարթավայրում, մեր կանգ առնելը անբնական էր, հազարավորներ տարծվեցին այդ ընդարձակ մարգերում, ու սպասում էինք, թե երբ կհրահանգեն քայլել, սակայն այդ հրահանգը չստացանք և չշարժվեցինք:

Ի՞նչ պատահեց. Բոլորն սկսեցին մտահոգվել ու հարց տալ. «Ինչո՞ւ կանգ առանք, ինչո՞ւ չենք առաջանում», մեր այստեղ մնալը երկար տևեց, իսկ երեկոյան սարսափելի մի լուր

տարածվեց, թե օսմանցի թշնամիները կտրել են մեր ճանապարհին ու պայմաններ են դրել, որպեսզի մեզ թույլ տան անցնելու Հայաստան, տարածվեցին նաև այլ լուրեր, թե «Հայ ֆիդայիների ու օսմանցի թշնամիների միջև բանակցություններ են տեղի ունենում»:

Հայրս մոտեցավ ու ասաց մեր խմբի անդամներին. «Իրավիճակը հուսադրող չէ, եկե՛ք վեր կենանք, լուռ հետ քաշվենք ճամբարից ու վերադառնանք Սալմաստ, որովհետև եթե թուրքերը հարձակվեն մեզ վրա այստեղ, բաց մարզերում, մեզանից ոչ ոք չի փրկվի»:

Ոմանք կտրուկ կերպով մերժեցին հորս առաջարկն ու ասացին.

«Ո՛չ... եթե մեծ խմբից առանձնանանք, անապատում կկորչենք, իսկ մենք տեղի բնակչության լեզուն չգիտենք, ու շատ հավանական է, որ մեզ վրա հարձակվեն վայրի կենդանիները: Սպասենք մինչ առավոտ ու տեսնենք, թե ինչ կլինի»...

Հաջորդ օրը նույնպես լրիվ լրություն էր տիրում: Ոչ մի լուր չկար: Հազարավորներ գետնին փռած սպասում էին: Ի՞նչ էր լինելու:

Կեսօրից առաջ բոլորը վեր կացան, հրահանգ ստացանք վեր կենալ ու քայլելու, սակայն մեր մեծ քարավանն իր ճանապարհը շեղեց ու գնաց այլ ուղղությամբ:

Հայրս զարմացած ասաց.

«Կարծես թե վերադառնում ենք այն ճանապարհով, որտեղից եկանք»,

մեկ այլ տղամարդ, ով իր դստեր ու հոր հետ էր քայլում, պատասխանեց նրան.

«Այո', եղբա'յրս, կարծես թե մեկ այլ վայր ենք գնում»:

Մարդկանց մեջ կայծակի արագությամբ լուր տարածվեց, թե. «Թուրքերի հետ բանակցությունը ձախողվեց, նրանք փակել են ճանապարհը մեր առաջ, ու մեք չենք կարող անցնել Հայաստանը»:

Կանայք սկսեցին լաց լինել... տղամարդիկ հարց էին տալիս. «Ո՞ր ենք գնում, մեզ ո՞ր են տանում»:

Կես օր քայլելուց հետո, երբ իրիկունը վրա հասավ, գետնին փովեցինք, որպեսզի քնենք: Տարօրինակ լռություն էր երկրում ու երկնքում, բացի այդ ժամանակ առ ժամանակ մի

քանի երեխաների լացի ձայներից ուրիշ ոչինչ չէր լսվում, երկնքում աստղերը փայլում էին, ու բոլորը քնեցին:

Նրանք քնած չէին: Ինչպե՞ս կարող էին խաղաղ քնել, երբ նրանցից յուրաքանչյուրը կորցրել էր ընտանիք ու սիրելիներ, ինչպե՞ս կարող էին խաղաղ քնել, երբ թուրքերի սպանության, բռնաբարության, վայրագության ու բարբարոսության տեսարանները անգամ երագում հանգիստ չէին թողնում նրանց, ինչպե՞ս կարող էին խաղաղ լինել, ո՞ր էր խաղաղությունը, չէ՞ որ մենք հենց տառապանքի կենտրոնում էինք:

Առավոտյան, երբ դեռ արևի ճառագայթները չէին հասել այն հողին, որտեղ մեր ցեղակից հազարավոր հայ գաղթականներ պառկած էին, հեռվից ուժգին ձայն լսվեց:

Բոլորն սկսեցին հարց տալ. «Արդյոք ի՞նչ ձայն էր, որտեղի՞ց էր գալիս», ինչ որ մեկն ասաց.

«Շեփորի ձայն էր, զինվորական շեփորի ձայն», մեկ ուրիշն ասաց.

«Որտեղի՞ց էր գալիս», պատասխանեցին.

«Ա՛խ... այո՛, անգլիացիներն են»,

հայրս մյուսների նման հարցական եղանակով ասաց. «Ուրբե՛ր են այդ անգլիացիները, նրանք հայե՛ր են, թուրքե՛ր են, իրանցիներ՛ են»,

մեկ այլ մարդ պատասխանեց.

«Ո՛չ, ո՛չ, նրանք բարեկամներ են, նրանք մեզ պաշտպանելու են, նրանք մեր նման քրիստոնյաներ են»:

Առաջին անգամ էր, որ լսում էինք. «անգլիացի կոչված ազգի մասին»: Մեզ այս ամենի մեջ միակ հետաքրքրողն այն էր, որ նրանք մեր թշնամիները չէին...

մենք նոր կոտորածների չէինք դիմանա: Սակայն կարծես ապահովության ու հույսի նախադրյալներն սկսեցին ի հայտ գալ, նրանք նոր բարեկամներ էին, ուրբեր տաք ուտելիք մատուցեցին բոլոր հայ գաղթականներին, վիրավորների վերքերը բուժեցին, հղիներին ու երեխաներին խնամեցին ու մեր մասին հոգացին:

Սակայն շատ չանցած մեծ խումբը շարժվեց:

Դեպի ո՛ւր, ոչ ոք չգիտեր, ու ոչ ոք չէր կարող հարց տալ, սակայն այն ինչ բոլորը հաստատ գիտեին այն էր, որ. «Մեր նոր ուղղությունը դեպի Հայաստան չէր, և ոչ էլ դեպի



հայրեինքը, ուր մեր հողերն ու կավածներն էր, ո՛չ, մենք նոր ուղղությամբ էինք քայլում... մենք պարզապես պարտավոր էինք քայլել ու քայլել...»:



*Իրարի արմավենին ու խաղաղության  
ավետիսը.*

Մի քանի օր քայլելուց հետո մենք մուտք գործեցինք մի օտար տարածք, որտեղ գետինը հարթ էր ու չոր ավազից, այնտեղ ցանք չկար, համարյա անապատային էր, նման բան երբեք նախկինում չէինք տեսել, եղանակը անտանելի շոգ էր:


Հեռվից մեզ հայդնվեցին բարձր ու տարօրինակ տեսքով ծառերը, որոնց նմանը երբեք չէինք տեսել, դրանք ունեին սլացիկ ու երկար կոճղեր, կանաչ գլուխ, որից կախված էին կանաչ կոնաձև տերևներ ու դեղին խոշոր ողկույզներ:

Հայրիկիս հարց տվեցի. «Հայրի'կ, սրանք ի՞նչ ծառեր են», հայրս մի պահ լռեց ու աչքերը սևեռած նայեց դրանց, հետո ասաց. «Չգիտեմ, աղջի'կս»:

Մեր կողքից իր երկու դուստրերի հետ քայլող մի տղամարդ պատասխանեց. «Սրանք արմավենիներ են, արմավի արմավենիներ»:

Մինչ մենք քայլում էինք, անցանք բազմաթիվ արմավենիների այգիների կողքով, մենք զարմացած ու հիացմունքով էինք նայում արմավենիներին, մինչև որ ի վերջո հասանք մի տարածք, որտեղ հազարավոր սպիտակ վրաններ էին պատրաստված, ու շուրջը փշաթելեր ու մեծ թվով զինված անգլիացի պահակներ, մեզ էին սպասում:

Հիմա արդեն մեզ մի փոքր ապահով էինք զգում, սակայն մենք օտարներ էինք...





Օսմանյան կոտորածներից փրկված հայ գաղթականների  
Բակուրա ճամբարից եզակի լուսանկար:

*Երրորդ գլուխ*

*Հյուրընկալ երկիրը, որ իր թևերը քացեց  
մեր առաջ*

Յաղուզ տատիկս շարունակեց ինձ պատմել դեպքերն  
ասելով.

«Հորս ասացի. «Հայրի'կ, հայրի'կ, սա ի՞նչ վայր է»,  
նա ասաց. «Չգիտեմ, աղջի'կս, վստահ եմ, որ մեր այս  
բարեկամները մեզ թույլ կտան այստեղ ժամանակավոր  
ապրել: Բռնի'ր եղբայրներիդ ձեռքերը, նրանք հոգնա-  
ծությունից սպառվել են»:

Այո', մենք բոլորս հոգնածությունից սպառվել էինք,  
նոտաբոքիկ խորդուբորդ, դժվար, ժայռային ու այնուհետև  
ավագային ճանապարհ էինք կտրել:

Խեղճ հորս ոտքերից արյուն էր հոսում, ու նրա արյունը  
հողի ու խոտերի հետ էր խառնվել, նրա ոտքերն այլևս չէին  
երևում...

Ես ու եղբայրներս հոգնածությունից ու հյուծվածությունից, մեր ոտքերի, դեմքերի ու ձեռքերի ճեղքերից, խոցերից և վերքերից մյուս փրկվածների նման տնքում էինք...

Մեզ նման հազարավոր փրկվածների նման մեր հագուստները նույնպես թուլացած ու պատռված էին, հազիվ ծածկելով մեր մարմինները, եղբայրներս համարյա մերկ էին, կեղտը ոտքից գլուխ ծածկում էր մեր մարմինները, ու մենք առհասարակ անմխիթար վիճակում էինք:

Անգլիացիներն այդ ճամբարի դրան մոտ մեզ երկար հերթերի մեջ կանգնեցրին, այդ երկար հերթերն անվերջ էին թվում: Մենք ողջ գիշերն ու ցերեկը հերթի մեջ մնացինք ու երրորդ օրը մեր հերթը հասավ, որպեսզի գրանցվենք ու մտնենք ճամբար:

Ես ու հայրիկս կանգնեցինք պատասխանատուների առաջ, որպեսզի գրանցվենք ու մեզ համարակալեն:

Հորս շալակին փոքր եղբայրս էր՝ Հակոբը, իսկ ես շալակել էի մեծ եղբորս՝ Օհանեսին:

Այդ անձինք, որոնց պարտականությունը կարգավորելն էր, ցավի ու ափսոսանքի զգացմունքով նայեցին մեզ, նրանք մեզանից առաջ երկար հերթերում մեզ նման հազարավորների էին տեսել...

Նրանցից մեկը թարգմանչի օգնությամբ հարց տվեց հայրիկիս. «Ի՞նչ է անունդ»,

հայրս պատասխանեց. «Անունս Սարգիս է...»,

այնուհետև հարցրեց. «Որտեցի՞ց ես»,

հայրս պատասխանեց. «Կոնիս գյուղից...»,

հորս հարց տրվեց. «Քանի՞ հոգու սպանության կամ մահվան ականատես ես եղել փախուստի ճանապարհին»,

հայրս ասաց. «Հաշվել չգիտեմ, բայց իմ աչքի առաջ շատերը մահացան, ճանապարհին շատերին մահացած տեսա...»,

նա հարց տվեց. «Որտե՞ղ է ընտանիքդ»,

հայրս մեզ մատնացույց արեց ասաց. «Մրանք են մնացել իմ ընտանիքից...»

Այս հարցերից հետո զրուցողը նշան տվեց կանգնածներից մեկին, ով մեզ ուղեկցեց մի առանձին վրան, յուրաքանչյուր վրանում ապրում էին միայն հինգ հոգի, սակայն մեզ առանձին վրան տրամադրեցին:

Յուրաքանչյուր վրանում կար մաքուր անկողին ու նոր հագուստներ մեզ համար: Մեզ տալիս էին տաք ուտելիք ու մաքուր ջուր, այնտեղ կար հիվանդանոց ու բժշկական անձնակազմ: Մենք շունչ էինք քաշում, այստեղ մենք իմացանք, որ մի երկրում ենք, որ կոչվում է Իրաք, իսկ այս վայրի անունն է Բակուրա (Հայ գաղթականների Բակուրա ճամբար):

Այս վայրում ու այս երկրում մենք անհոգ էինք քնում: Չորս կողմից տեսնում էինք արմավենիներն ու խաղաղ, ապահով և հանգիստ էինք զգում: Այստեղ մենք առաջին անգամ համտեսեցինք արմավը:

Օր օրի ճամբարը լցվեց փրկված հայ գաղթականներով, մարդիկ սկսեցին սգալ իրենց հարազատների մահերը:

Այստեղ փրկվածները հազարավոր վրանների մեջ սկսեցին փնտրել իրենց ընտանիքների անդամներին, հորեղբոր որդիներին, ազգականներին:



Հայրս ամեն առավոտ դուրս էր գալիս ու երեկոյան վերադառնում, ամբոխի մեջ ազգականներից մեկին գտնելու հույսով...

Օրերից մի օր հայրս դուրս եկավ, որպեսզի սովորության համաձայն փնտրի ու հարցուփորձ անի, սակայն այդ օրը միայնակ չվերադարձավ:

Գիտե՞ս, թե ում հետ վերադարձավ նա, գիտե՞ս, թե ում էր գտել», ես տատիկիս հարց տվեցի.

«Ո՞ւմ», և նա ասաց. «Նա գտավ պապիկիդ ու իր երկու փոքր եղբայրներին: հայրս այդ օրը վերադարձավ ամուսնու՝ Հարությունի ձեռքը բռնած: Նա նրան իր երկու եղբայրների՝ Պողոսի ու Աբրահամի հետ էր գտել, նրանց առանձին վրան էին տրամադրել:

Ես քո պապիկին, այսինքն՝ իմ ամուսնուն չէի ճանաչում, որովհետև նրան չէի տեսել, սակայն եղբայրներին ճանաչում էի, որովհետև մենք միասին խաղում էինք իրենց տանը:

Երբ նրանք մտան մեր վրան, պապիկդ ու նրա եղբայրներն ընկան իրենց ծնկների վրա, գրկեցին եղբայրներիս ու հորս և սկսեցին լաց լինել:

Ես նստած էի վրանի անկյունում, այնտեղից լացելով գոռում էի. «Մորս սպանեցին փամփուշտով... երանի ինձ սպանեին...»:

Այդ ճամբարում ամբողջ մի շաբաթ յուրաքանչյուր վրանից լաց ու կոծի ձայներ էին լսվում: Հարություն պապիկիդ հետ զրուցելիս նրանից իմացանք, որ այդ մեծ ընտանիքից՝ պապիկիդ ընտանիքից ոչ ոք չէր փրկվել, բացի պապիկիցդ ու նրա երկու եղբայրներից (Պողոսը 12 տարեկան էր, Աբրահամը՝ 10):

Հիմա արդեն բոլորով մեկ վրանում էինք ապրում: Ես, չնայած փոքր տարիքիս, մայրություն էին անում չորս որբ երեխաների: Ամուսինս ու հայրս վրանի մեկ անկյունում էին քնում, իսկ ես ու երեխաները մյուս անկյունում միասին էինք քնում:

Անգլիացի զինվորները հետևում էին, որպեսզի ճամբարը շատ շատ մաքուր մնա: Վրաններից մեկի կողքը աղբ տեսնելիս նրանք շատ խիստ կերպով պատժում էին վրանի բնակիչներին, ճամբարի պատասխանատուները ուժի կիրառմամբ առողջապահության մասին իրազեկություն էին տարածում, որովհետև գիտեին, որ ճամբարի բոլոր փրկված

գաղթականները գյուղացիներ էին, մենք սովոր չէինք հավաքական գուգարանների կամ բաղնիքների, և այլն:

Մենք նախկինում փոքր տարածքի մեջ վրաններում չէինք ապրել: Սակայն ի՞նչ կարող էինք անել, մեկ օրում դեպքերն այսպես պատահեցին, հետևաբար ուժի կիրառումն ու ատիժը միակ բաներն էին, որոնք կարող էին սահմանափակումներ մտցնել ու բնակիչներին սովորեցնել մաքրության ու առողջապահության պայմաններին:

Այդուհանդերձ, չնայած այդքան խստության ու մաքրության պահանջներին, Բակուբա ճամբարում մեր բնակվելուն հազիվ քառասուն օր էր անցել, երբ ճամբարում մարդկանց մեջ տիֆ համաճարակ տարածվեց, հայրս ճամբարի հարյուրավոր բնակիչների նման վարակվեց այդ հիվանդությամբ (տիֆ), ու ամուսինս նրան հիվանդանոց տարավ:

Հիվանդանոցը բաղկացած էր մի խումբ վրաներից, որոնց շուրջ փշալարեր ու պահակներ էին ճամբարի հեռու մի անկյունում, այնտեղ կային անձինք, որոնք սպիտակ

հագուստներ էին հագնում, որոնց նմանը նախկինում չէինք տեսել:

Սակայն նախքան հիվանդանոց գնալը հայրս հավաքեց բոլորիս, կանչեց ինձ ու ասաց. «Արի', Յալոդ'ւզ, աղջի'կս»:

Նա ձեռքը մեկնեց իր հագուստներից մեկի մեջ, դուրս բերեց հինգ ոսկե մետաղադրամ ու ասաց ամուսնուն՝ Հարությունին. «Սա ի պահ եմ հանձնում քեզ, ողջ ճանապարհին ես դրանք թաքուն պահել եմ, դրանք իմ երկու որդիներին՝ Հակոբին ու Օհանեսին են պատկանում, դրանք ի պահ եմ հանձնում քեզ: Երբ երկիր վերադառնաք, ու իմ երկու որդիները մեծանան, տա'ր նրանց մեր գյուղ Կոնխի իրենց տունն ու հողը, նրանցից յուրաքանչյուրին այս ոսկե մետաղադրամներից երկու հատ տո'ւր, որպեսզի սերմեր գնեն ու ցանեն հողի մեջ, իրենց համար կենդանիներ առնեն, որպեսզի վերադառնան ու խաղաղ ապրեն իրենց պապերի հողում...

Իսկ հինգերորդ ոսկե մետաղադրամը քոնն է, դա ինձնից քեզ նվեր է, դու այժմ պատասխանատու ես այս ընտանիքի համար»:

Հայրս ոսկե մետաղադրամները հանձնեց ամուսնուս՝ Հարությունին, (ես չափազանց զարմացած էի, թե հայրս ինչպես էր կարողացել այդ դժվար ճանապարհին իր գոտու մեջ պահել հինգ ոսկե մետաղադրամները, առանց նկատելի դառնալու), այնուհետև մենք նրան հրաժեշտ տվեցինք ու նրանք երկուսով՝ հայրս ու ամուսինս մեկնեցին դեպի հիվանդանոց:

Որոշ ժամանակ անց ամուսինս վերադարձավ, սակայն հորս խնդրել էին մնալ հիվանդանոցում: Հաջորդ օրը երկու եղբայրներիս հետ գնացի հորս այցելության, երբ հասանք հիվանդանոցի փշալարերի մոտ, այդ փշալարերի շուրջ հարյուրավոր մարդիկ էին խմբված, ովքեր եկել էին իրենց հիվանդ հարազատներին տեսնելու:

Դժբարությանը ամբոխի մեջ ճանապարհ բացեցի ու երկու եղբայրներիս ձեռքերը բռնած հագիվ հասա ցանկապատին ու սկսեցի գոռալ, գոռացի ու գոռացի. «Հայրի՛կ, հայրի՛կ»:

Մեզ նման փշալարերի շուրջ հավաքված հարյուրավոր այցելուների ձայների մեջ դժվար թե նա լսեր իմ ձայնը, սակայն չգիտեմ, թե հայրս ինչպե՞ս զանազանեց իմ ձայնն ու

վրանի ճեղքից դուրս հանեց գլուխը, որպեսզի մեզ տեսնի, նա հյուծված էր, հագիվ էր վրանի վարագույրի հետևից ձեռքով անում ինձ:

Նա մեզ նշան էր անում, թե. «Գնացե՛ք, գնացե՛ք, ես լավ եմ...», մենք վերադարձանք մեր վրան:

Հաջորդ օրը նույնպես գնացինք հիվանդանոց ես, երկու եղբայրներս ու ամուսնուս եղբայրը՝ Աբրահամը: Մենք նույն տեղում կանգնեցինք ու ցանկապատի հետևից սկսեցինք գոռալ.

«Հայրի՛կ, հայրի՛կ»,

եղբայրներս նույնպես գոռում էին... մեզ նման հարյուրավոր մարդիկ կանչում էին իրենց հիվանդների անունները...

Երկար ժամանակ շարունակեցինք գոռալ, ես սկսեցի լաց լինել... եղբայրներս լաց էին լինում... վրանի հետևից սպիտակ հագած մի մարդ դուրս եկավ, նա մոտեցավ մեզ, ձեռքով ու դեմքով նշան արեց ինձ, փորձելով հասկացնել, թե հայրս մահացել է:

Նա կռացավ, իր ձեռքերով մի բուռ հող վերցրեց, այնուհետև հողը լցրեց իր ձեռքին, հուշելով, որ հայրս արդեն մահացել է,

ու նրան տարել և թաղել են... նա պտտվեց ու գնաց... նա նույն պատասխանը տվեց այնտեղ հավաքված հարյուրավոր մարդկանց, դա մահացու համաճարակ էր...

Ես սկսեցի հարվածել գլխիս ու դեմքիս և գոռալ. «Որտե՞ղ եք թաղել, որտե՞ղ եք դրել նրան, հայրիկիս եմ ուզում», սակայն ոչ ոք չէր պատասխանում:


Ես ու եղբայրներս գետնին գալարվելով լաց էինք լինում, մեզ նման հարյուրավոր մարդիկ կային, ովքեր լաց էին լինում ու ողբում էին իրենց հարազատների մահվան գույժից, այդ պահին հեռվից մոտեցավ ամուսինս ու մեզ ուղեկցեց դեպի վրան:

Խեղճ հողագործ խաղաղասեր հայրս մահացավ, մահացավ բաժանումի այդքան մեծ ցավը, կարոտն ու սարսափն ապրելուց հետո: Մենք անգամ չիմացանք, թե որտեղ ու ինչպես թաղեցին նրան:

Նա մահացավ ապահով ափեր հասնելուց հետո, նա ինձ վերադարձրեց իմ ամուսնուն, որպեսզի իր բացը լրացնի... հայրս մահացավ... նա իր մեջ ուներ անասելի կարոտ իր հողին, տանը, երկրին... հայրս մահացավ... նա մեզ հանձնեց

ամուսնուս՝ Հարությունի խնամքին...մայրս սպանվեց, երբ փախչում էինք, ու հիմա մահացավ հայրս:

Ես այդ օրերին 13 տարեկան էի, ամուսինս՝ 18... հորս կորստի պատճառով մեր վիշտն ու տխրությունն անսահման շատ էին: Ես իմ ոսկեգույն երկար մազերը կտրեցի, ի նշան հորս մահվան սգի, այդ օրերին այդպես էր ընդունված: Կնոջ համար ամոթալի ու չարագուշակ էր մազ կտրելը, բացի այն դեպքից, երբ իր ընտանիքի տղամարդկանցից մեկը՝ հայրը, եղբայրը կամ ամուսինն էր մահանում:





### Անվերջ տեղահանություն...

Չեմ հիշում, թե որքան ժամանակ մնացինք Բակուբա ճամբարում, որից հետո անգլիացիները մեզ գետի նավակներով տեղափոխեցին Բադդադ, իսկ Բադդադից մեզ գնացքով տարան Նահր Ալ Օմար կոչված շրջանը:

Այս դաժան ճանապարհորդությունը տևեց ավելի քան 10 օր: Մեզ համար լարված նոր ճամբարը գետի ափին անապատային մի տարածքում էր, կողքը գյուղ կար, այն մոտիկ էր նաև Բասրա քաղաքին:

Նույն Բակուբա ճամբարի նման էր կազմակերպված: Այնտեղ նույնպես կար հիվանդանոց, սակայն Նահ Արլ Օմար ճամբարում արդեն ուտելիքը գնելու և պատրաստելու պատասխանատվությունն ամբողջությամբ գաղթականների վրա էր դրված, մեզ ապահովել էին հանրային փռերով և ճաշարաններով, յուրաքանչյուր ընտանիք ինքնուրույն էր զբաղվում իր կարիքները հոգալու գործով:

Օրերից մի օր մեր վրան մտավ անգլիացիների մի հանձնաժողով, իրենց թարգմանչի հետ, նրանք գրանցում էին յուրաքանչյուր վրանում գտնվող որբերի անուններն ու

քանակը: Այդ պահին, երբ հանձնաժողովը մտավ մեր վրան, ամուսինս ու իր երկու եղբայրները մեզ հետ վրանում չէին:

Այնտեղ էինք միայն ես ու եղբայրներս, նրանք որբերի ցուցակում գրանցեցին իմ երկու եղբայրների՝ Հակոբի ու Օհանես անունները, սակայն չգիտեինք, թե ինչու:

Այս ընթացքում երկու նավ ժամանեց Նահիր Ալ Օմար և հարյուրավոր հայ գաղթականների ճամբարից Հայաստան տեղափոխեցին, մենք մեր հերթին էինք սպասում, որպեսզի մենք նույնպես Հայաստան գնայինք: Հաշված օրեր անց զինյալ տղամարդիկ ներկայացան և շատ այլ որբ երեխաների հետ ինձնից խլեցին իմ երկու եղբայրներին, ես ու ամուսինս նրանց հետևից դուրս եկանք, նրանց տարան գետի մոտ ու այնտեղ համախմբեցին, այնուհետև մի այլ՝ երրորդ նավ ժամանեց, և փոխանակ ընտանիքներին բարձրացնեն այնտեղ, երեխաներին՝ որբ երեխաներին ստիպեցին բարձրանալ ու ասացին, որ որբերին Հայաստան են տեղափոխելու, որպեսզի այնտեղ խնամեն ու կրթություն տան նրանց:

Մայրի վրա կանգնած գոռում ու լաց էի լինում, եղբայրերիս էի կանչում, շատ կանայք էին իմ նման լաց լինում ու գոռալով կանչում օսմանյան կոտորածներից փրկված իրենց որբ երեխաներին, քույրերին ու եղբայրներին:

Ամուսինս՝ Հարությունը բռնել էր ինձ, որպեսզի գետը չընկնեմ, ու ասում էր ինձ. «Թող գնան, այնտեղ նրանց կրթություն կտան, կսովորեցնեն, նրանց ապագան կապահովեն, բառիս բուն իմաստով տղամարդ կդառնան, իսկ մենք հաջորդ (չորրորդ) նավով կհասնենք իրենց հետևից, այն մեկ շաբաթից կժամանի...», սակայն ես մտահոգ էի, ու իմ սրտում ինչ որ բան ասում էր, որ էլ նրանց երբեք չեմ տեսնի»:

(Իսկապես այդ հրաժեշտից հետո իմ Յալդուզ տատիկն այլևս երբեք չի տեսել իր երկու եղբայրներին՝ Հակոբին ու Օհանեսին, մինչև անցել է 45 տարի, երբ նա մի նամակ է ստացել, թե իր երկու եղբայրները Հայաստանի որբանոցում ուսում են ստացել ու ամուսնացել են, նրա մեծ եղբայրը՝ Օհանեսը ունեցել է երկու որդի, որոնց կոչել է Համլետ և Էդմոն, իսկ փոքր եղբայրը՝ Հակոբը ամուսնացել է, սակայն երեխաներ չի ունեցել, նրանք 1940-1945թթ. մասնակցել են երկրորդ համաշխարհային պատերազմին որպես զինվո-

րականներ, և երկուսն էլ սպանվել են ռուսգերմանական ճակատում, նրանցից մեկն սպանվել է գետնային ականով, մյուսը՝ մեշքից փամփուշտ ստանալով... ՝ Օհանես իր կնոջը պատմել էր, որ ինքը Իրաքում Յալդուզ անունով մի քույր ունի, նրա ամուսնու անունը Հարություն է, և խնդրել էր կնոջը. «Եթե ինքը պատերազմից չվերադառնար, նա պետք էր փնտրեր ու կապ հաստատեր իր քրոջ ու նրա ամուսնու հետ, որպեսզի գտներ նրանց», Յալդուզ տատիկիս վիշտն առավել մեծ էր, երբ նա եկեղեցու միջոցով 1968 թվականին նամակ ստացավ, որտեղ նշված էր իր երկու եղբայրների երկրորդ համաշխարհային պատերազմում մահացած լինելու մասին, ինչպես նաև նրանց ընտանիքների կյանքի մանրամասներն ու հասցեները: Նա մի քանի ամիս նյարդային խանգարումով հիվանդ պառկեց: Առավել ցավալի էր այն, որ նա նամակի հետ ստացավ իր երկու երիտասարդ եղբայրների լուսանկարները՝ իրար գրկած: Ու ինչպես տատիկս էր պատմում, մեծ եղբայրը նույնությամբ հոր պատկերն էր, նրա կրկնօրինակը: Երկար տարիներ անց, ութսունականների սկիզբը, երբ տատիկս ստացել է իր երկու եղբորորդիների Հայաստան գնալու և իրենց հետ հանդիպելու հրավերը, նա գնացել ու տեսել է նրանց, նրանք իրեն տարել են պատերազմի վայրը, որտեղ սպանվել են իր

եղբայրներն ու թաղվել են զանգվածային գերեզմանում՝ մի հուշակոթողի տակ: Տատիկս ասաց. «Գլուխս հարվածեցի այդ հուշակոթողին ու գոռացի՝ ձեզ գրկած գիշեր ու ցերեկ փախցրել եմ, որպեսզի մահից փրկեմ: Դիմացել եմ սովին, որպեսզի դուք կուշտ լինեք, թուրք բարբարոսներից փրկել եմ ձեզ, սակայն չեմ կարողացել նրանց հետ պահել ձեզ այդ չարաբաստիկ նավով տեղափոխելուց: Մեր ծնողներն սպանվեցին ու մենք անօթևան մնացինք, դուք որբացաք, ձեր մարմինները պատառտվեցին, և դուք թաղվեցիք օտար հողում: Վե՛ր կաց, Հակոբ՛... վե՛ր կաց, Օհանես, մեր դաշտերը ձեզ են սպասում, մի՛ թողեք, որ մի օր միայնակ վերադառնամ՝ այդ հողերը ցանելու և հնձելու, երանի ձեզ հետ մահանայի),

Տատիկս շարունակեց ու ասաց. «Այսպիսով, լաց լինելով, գոռալով ու ողբալով եղբայրներս նավից բղավում էին. «Յալդո՛ւզ, մի՛ լքիր մեզ», իսկ ես մայթից գոռում էի. «Ես չեմ կարող ձեզ հետ բերել», մինչև որ նավը շարժվեց ու հեռացավ:

Մենք վերադարձանք վրան, ու ես մի ամբողջ շաբաթ ո՛չ կերել եմ, ո՛չ խմել, մինչև որ մահվան շեմին հասա: Ես կորցրել էի իմ ամբողջ ընտանիքը՝ մորս, հորս, երկու եղբայրներիս... Աստվա՛ծ իմ, մինչև ե՛րբ կտևեր մեր տառապանքը:

Ամուսինս մի քանի կանանց հետ եկավ, նրանք նստեցին ու փորձում էին ինձ հանգստացնել, նրանք ստիպողաբար իմ բերանում ուտելիք ու ջուր դրեցին...

մենք բոլորով սպասում էինք չորրորդ նավի ժամանումը, որպեսզի մեզ տեղափոխել Հայաստան, սակայն այդ սպասված նավը երբեք էլ չեկավ:

Իսկ ամենավատն այն էր, որ օրերից մի օր արթնացանք ու տեսանք, որ անգլիացիները հեռացել էին, իրենց հետ տանելով փշալարերն ու չբնակեցված վրանները, որոնց բնակիչներին տեղափոխել էին Հայաստան, իսկ մնացողներս անապատում անօգնական էինք:

Այստեղ մեծ դեր խաղաց փաշա մականունը կրող պարոն Լևոն Ծաղոյանը: Նա ճամբարի երիտասարդներից կազմված պահակախմբեր ու հսկիչներ նշնակեց ճամբարի համար, նա հեծնում էր իր ձին ու ամեն օր պահակախմբի ուղեկցությամբ շրջում էր ու ստուգում ճամբարի վիճակը՝ մաքրության և այլ հարցերի առումով, նա իր վրանի կողքը դպրոց բացեց, և հոգ էր տանում մարդկանց համար, բոլորը նրանից վախենում ու նրան հարգում էին... այս ընթացքում

որոշ մարդիկ հեռացան ճամբարից, նրանք իրենց համար կավից կամ թիթեղից սենյակներ կառուցեցին, ու յուրաքանչյուր ոք ինքն էր հոգում իր ապրուսը:

Սակայն այս երկար չտևած ժամանակահատվածում էր, երբ շատերի սրտերը հուսահատությամբ լցվեցին, ու հայրենիք վերադառնալու հույսը սպառվում էր:

Ճամբարն այլևս հովանավորներ ու տիրություն անողներ չուներ, յուրաքանչյուր ոք ինքն էր իր կյանքի ու ընտանիքի պատասխանատուն:

Մարդիկ սկսեցին մոտիկ քաղաքներում, ինչպիսին էր Բասրան, աշխատանք գտնել ու իրենց ընտանիքներին տեղափոխել այնտեղ:

Ուրիշներ տեղափոխվեցին այլ քաղաքներ՝ աշխատանք գտնելու և օրվա ապրուստը հոգալու համար: Լևոն փաշա Շաղոյան մականունը կրող պարոն Լևոն Շաղոյանը (ով օսմանյան ջարդերի օրերին հարյուրավոր հայ ընտանիքներ փրկած վետերաններից էր, ու նրա արիության, քաջության և իր ազգի զավակների համար նվիրվածության մասին վկայում էին բոլորը) հավաքեց ճամբարում մնացածների մեծամասնությանը, ովքեր գյուղացի գաղթականներ էին, ու ասաց նրանց. «Մենք բոլորով կգնանք Վանի սահմանին գտնվող մի շրջան, այնտեղ կհիմնենք ժամանակավոր գյուղ,

սակայն երբ ամեն բան հանդարտվի, մենք դարձյալ կվերադառնանք հայրենիք, ու մեզանից յուրաքանչյուրը կվերադառնա իր տունը, իր հողն ու ունեցվածքը»:

Ոմանք դրական արձագանք տվեցին այդ մտքին, ուրիշներ մերժեցին այն... մենք շատերի հետ լքեցինք Նահիր Ալ Օմր ճամբարն ու մեր վրանները շալակած գնացքով տեղափոխվեցինք Իրաքի հյուսիս, թուրքական լեռների հարևանությամբ մի բաց հարթավայր, այնտեղ մեր վրանները լարեցինք, և Լևոն փաշան անձամբ մեզ հողեր բաժանեց, որպեսզի տներ կառուցենք և վար ու ցանքով զբաղվենք: Մենք շատ տառապեցինք և մեզ համար կավից տներ կառուցեցինք: Այդ օրերին, ըստ իմ լսած տեղեկությունների, այնտեղ մարդկանց քանակը չորս հարյուր ընտանիքից ավելի էր, նրանց մի մասն իրար հետ միախառնված:

Այնտեղ օսմանյան կոտորածներից փրկված հայերը հիմնեցին փոքրիկ գյուղ, որին Լևոն Շադոյան փաշան տվեց (Հավրեզ կամ Հավրեզք, որ արտագաղթի ժամանակ սպանված իր քրոջ անունն էր)...: Նա ըստ մեր նախկինում ունեցած արհեստների մեզ աշխատանք բաժանեց:



Ովքեր գյուղատնտեսությամբ զբաղվող ընտանիքներից էին, նրանց գյուղատնտեսական նշանակության հողեր տրվեցին, իսկ ովքեր հովիվներ էին, ապա նրանք այդ նույն գործով զբաղվեցին, ու այդպես...:

Հավրեզ գյուղում մարդիկ իրար օգնում էին, նրանք կավե պատերով տներ կառուցեցին, առաստաղները փայտից էին, ու նույնպես կավով պատված, նման այն տներին, որտեղ անցյալում ապրում էինք մեր հայրենիքում:

Մենք կառուցեցինք նաև կենդանիների համար գոմեր, սակայն կենդանիներ չունեինք, ամուսինս Հարությունը հորս նվիրած մեկ ոսկե մետաղադրամով տան համար ապրանք և դաշտում աշխատելու համար սարքեր ու մեզ համար հագուստ գնեց, նա ստիպված էր նաև օգտագործել հորս կողմից եղբայրներիս համար իր մոտ ի պահ հանձնվածը, նա ցուլ գնեց, որպեսզի հողը հերկեր, տասը ոչխար ու մեկ կթան կով:

Առաջինից մինչև չորրորդ տարին այդ գյուղում կյանքը շատ դժվար էր: Ընտանիքներից շատեր ստիպված եղան լքել գյուղն ու գնալ Մոսուլ, Քարքուք և Խսանկին քաղաքները կամ այլ վայրեր, որպեսզի աշխատանք գտնեն ու իրենց ընտանիքների ապրուստը հոգան:

Այն հողը, որ հատկացվել էր մեզ ցանելու համար, շատ կարծր էր, այն ժայռոտ ու քարքարոտ էր, այնտեղ մեծ թվով օձեր ու կարիճներ կային, այն լքված անապատային տարածք էր, որտեղ ոչ ոք չէր ապրել երբեք:

Մենք արևածագից մինչև մայրամուտ այնտեղ էինք լինում, փորում ու դուրս ենք բերում քարերը հողից, որպեսզի այն ցանենք:

Մենք մեր հողից հազարավոր քարի կտորներ ենք տեղափոխել, և նույն բանն արել են ուրիշներ:

Նոր հողը մեր հայրենի հողի նման բերրի չէր: Մեք մեր կենդանիների աղբերը մեր ձեռքերով տեղափոխեցինք ու խառնեցին հողին, այն հույսով, որ բերք կտա, մենք հերկեցինք ու ցանեցինք, սակայն արդյունքը վատ էր:

Ամուսինս ստիպված եղավ վաճառել երկրորդ ոսկե մետաղադրամը, որպեսզի հացի համար ցորեն գներ, և նոր սերմեր ու կաթի համար երկրորդ կով գներ: Նաև ստիպված էր մեր տան մեջ փոքրիկ խանութ բացել, որպեսզի մեր ապրուստը հոգար, և երբ ես նրան ասացի. «Այս մետաղադրամները եղբայրներիս համար են, մոռացե՛լ ես հորս տված խոստումդ», նա ինձ ասաց.

«Եթե ես ինձ ի պահ հանձնվածը չծախսեմ, ապա մենք ու մեր երեխաները սովից կմեռնենք: Այս գումարն իմ ճտի պարտքն

է, և ես անպայման այն կվերադարձնեմ քո եղբայրներին: Այս պահին այլ ելք չունեմ, դու տեսնում ես, թե ինչ վիճակ է»:

Չորս տարի չարչարվելուց, ցանելուց ու բերքահավաքից հետո իրավիճակը մի փոքր բարելավվեց, մենք ունեցանք երեխաներ, նրանք հիվանդությունների պատճառով մահացան, հետո ծնվեց հորաքույրդ, որից հետո հայրդ ու մյուսները:

Այդ տարիներին քուրդ հովիվներ սկսեցին Հավրիզի ու Թուրքիայի սահմանը անխափան հատել: Մենք լսեցինք, որ Հարություն պապիկիդ փոքր քույրը, որի անունը Լիան էր, ընտանիքի մյուս անդամների հետ չէր սպանվել, այլ ըստ երևույթին, սպանությունները կատարողներից մեկը նրան արևանգել ու մեծացրել էր:

Նա ստիպված էր եղել այնտեղ նրանցից մեկի հետ ամուսնանալ, նա հիմա Մոկսում իրենց նույն հին տնում է ապրում, ու նա մեզ հրավիրում է անցնելու սահմանն ու երաշխավորում մեր անվտանգությամբ, որպեսզի մենք վերադառնանք մեր հողեր:

Սակայն երբ Հարություն պապդ լսեց այդ մասին, նա սաստիկ զայրացավ, ու լրաբերին ասաց. «Եթե նա մահացած լիներ, շատ ավելի լավ կլիներ իր ու մեզ համար: Մեզ համար

նա մահացողների հետ մահացել է, և եթե նա քեզ հարց տա, ասա նրան՝ «եղբայրներդ մահացել են»»:

Մեկ տարի անց Լիանը դարձյալ մեկին ուղարկեց ու աղաչեց, որպեսզի իր եղբայրներն իրեն ներեն, որովհետև կատարվածի մեջ ինքը ոչ մի մեղք չուներ: Սակայն Հարություն պապդ ու նրա եղբայրները՝ Աբրահամն ու Պողոսը, իրենց խոսքը մեկ արած, լրաբերին ասացին. «Ասա՛ նրան, որ չասի, թե ինքը Մահտեսի Հարությունի թոռն է: Ասա՛ նրան, որ մեզ այլևս երբեք չփնտրի»: Այդ լրաբերի մեկնելուց հետո մենք այլևս ոչինչ չլսեցինք իր մասին:

Հավրեզ գյուղում մեր հաստատվելու հինգերորդ տարում ցորենի ու գարու դաշտերը գյուղատնտեսական վնասատուներով վարակվեցին, և այն տևեց երեք իրարահաջորդ սեզոն:

Գյուղում աղքատությունն ու սովը տարածվեց, որի հետևանքով շատ հայ ընտանիքներ, համարյա բնակիչների կեսը, լքեց Հավրեզ գյուղը, ու գնացին Քարքուք, Մուսուլ ու Բաղդադ քաղաքներում ապրելու, նրանց մեծ մասը Բասրա մեկնեց, որովհետև կյանքը Հավրիզում շատ դժվարացել էր:

### *Թանկ ժառանգություն.*

Պապիկիս ձայնը շատ բարձր էր ու զրնգում, նրա կատարումը չէր կարող երգեցողություն կոչվել բառիս բուն իմաստով, որ այսօր հասկանում ենք, սակայն երգեցողության յուրահատուկ ժանր էր, որ գրավյալ հայրենիքում լեռնային գյուղերի բնակիչների մոտ տարածված էր:

Մարդիկ հնում սովորություն ունեին կարևոր դեպքերն ու անհատական կամ զանգվածային հերոսական դրվագներն անմահացնել չափածո պատմողական երգի հրաշալի միաձուլմամբ, որ հեշտ յուրացվող էր լինում ու մեկից մյուսը տարածվում:

Այն շատ յուրօրինակ ու չկրկնվող երևույթ էր, այդ յուրահատկությունն զգացի այն բանից հետո, երբ տատիկս մանրամասնորեն ինձ պատմեց այդ ցավոտ անցյալի մասին, այդ տառապանքի, որն ապրել էր այն պարզ մարդկանց խավը, ովքեր բացի առօրյա հոգսերից որևէ այլ հետաքրքրություն չունեին: Նրանք շատ պարզ էին, Աստվածավախությունը պատում էր նրանց սրտերը: Նրանց միակ ձգտումը իրենց պարզ հավատքն էր առ Օրհնյալ Զրիստոսն ու երկրնային Ավետարանի ուսմունքներին հետևելը այնքանով, որքանով որ լսել էին, իրենց արդար

քրտինքով օրվա հացը վաստակելը, իրենց ընտանիքներն ու սովորությունները պահպանելը:

Գյուղացիների մեծ մասը անգրագետ էր, նրանք հաշվել, գրել ու կարդալ չգիտեին: Նրանք բացի բարիք գործելուց, այլոց սիրելուց, հյուրին պատվելուց ու բոլոր մարդկանց համար խաղաղություն ցանկանալուց, ուրիշ ոչինչ չգիտեին:

Ու ինչպես ոչ, եթե սուրբ Ավետարանն ուսուցանում է սիրել թշնամուն:

Հայրս հաճախ էր կատաղում ու բարկանում (դրական իմաստով) իմ տատիկի ու պապիկի վրա՝ իրենց պարգույթան, բարության ու բարի տրամադրվածության պատճառով, նույնն էր անում նաև Գեղանուշ հորաքույրս: Մինչև օրս հիշում եմ, երբ օրերից մի օր հավաքված էինք պապիկիս տանը, այնտեղ խոսք բացվեց գաղթի ու ջարդերի օրերին տատիկիս ու պապիկիս ապրած արհավիրքի ու հին հուշերից, պապիկս խոսեց, ու բոլորս ունկնդրեցինք, թե ինչ էր ասում, երբ նա դիմեց մեզ ասելով. «Գաղթի ժամանակ մի տարեց կնոջ կողքն էի նստել, թուրքերը նրա ընտանիքի բոլոր անդամներին սպանել էին, բացի այդ տարեց կնոջից ոչ ոք կենդանի չէր մնացել այդ ընտանիքից:

Երբ մենք ուրիշների նման գետնին նստած էինք, որպեսզի հանգստանանք մինչև քարավանը կշարունակեր իր

ճանապարհը, մեր կողքով անցավ Ֆիդայի զինվորներից մեկը, նրա զենքի սվինը երկար էր: Սվինը արևի լույսի տակ փայլում էր, Ֆիդային այդ կնոջը հարց տվեց. «Մայրի'կ, մոտոջ ջուր կա՞», նա ասաց. «Այո', որդի'ս, նստի'ր, որպեսզի քեզ ջուր տամ», երիտասարդը նստեց, որպեսզի ջուր խմի ու նրան հարց տվեց. «Մայրի'կ, դու միայնա՞կ ես, որտե՞ղ են ընտանիքիդ անդամները», կինը տխուր ու արցունքոտ աչքերով պատասխանեց. «Որդի'ս, ես այլևս ոչ ոքի չունեմ, նրանց բոլորին թուրքերը սպանեցին...», ու նա սկսեց լաց լինել», այնուհետև կինը նկատեց մարտիկի զենքի սվինի փայլքն ու հարց տվեց. «Որդի'ս, ի՞նչ է այս փայլուն ու երկար բանը, որ զենքիդ գլխից դեպի վերև է բարձրանում», երիտասարդը պատասխանեց. «Մայրի'կ, այն սվին է», ու նա ասաց. «Իսկ ի՞նչ ես անում դրանով», երիտասարդ մարտիկը ոտքի կանգնեց ու ասաց. «Նայի'ր, զենքը ձգում եմ դեպի ետ, այնուհետև դեպի առաջ եմ հրում, ու այս սվինը մտնում է թուրքերի փորն ու նրանք մահանում են»: Տարեց կինը տխուր ձայնով ասաց նրան. «Ո՛չ... ո՛չ, որդի'ս... նրանք խեղճ են: Թող նրանք դատաստանի օրը Տիրոջը հաշվետու լինեն...»:

Երիտասարդ մարտիկը զայրացած գոռաց ու ծանր ձևով պատասխանեց տարեց կնոջը. «Ի՞նչ պատահեց քեզ, ա՛յ կին,

խենթացել՝ ես, նրանք քո ընտանիքն են սպանել ու քեզ անօթևան թողել, չե՛ս ցանկանում վրեժխնդիր լինել», ու պապիկս ասաց. «Ես իմ տեղից թռա, գրկեցի երիտասարդ մարտիկին ու ասացին նրան. «հանգստացի՛ր, եղբա՛յրս... թո՛ղ նրան, նա չգիտի, թե ինչ է ասում...»»:

(Այո՛, հայերը քրիստոնյա էին, նրանք անսահման խաղաղասեր էին, նրանք իրենց հողերում ապրած օրերին խաղաղասեր էին, ու խաղաղասեր էին, երբ իրենց վռնդեցին ու աքսորեցին, մորթեցին, նրանք այլ բան չէին անում, քան իրենց աչքերը երկինք բարձրացնելը):

Այդ օրը, երբ հայրս լսեց այս պատմությունը, նա նույնպես կատաղեց ու ասաց. «Այո՛, դուք բոլորդ ոչխարներ էիք, դուք չէիք մտածում զենքեր գնելու մասին, որպեսզի դրանցով դուք ձեզ պաշտպանեք, հետևաբար փախուստի դիմեցիք: Իսկ թշնամին հարձակվեց ձեր վրա, ոմանց սպանեց, ոմանց բռնաբարեց, որոնհետև դուք խաղաղասեր էիք, դուք բոլորդ այդպիսին էիք, այդ տարեց կնոջ նման...», ու հայրս ծաղրական ոճով հարց տվեց պապիկիս. «Դու ինչպե՛ս լեռներում կպաշտպանեիր քո ոչխարներին, եթե գայլը հարձակվեր նրանց վրա», պապիկս պատասխանեց ու ասաց. «Գավազանով, քարերով, շներով»:

Բոլոր ներկաները ծիծաղեցին ու գրույցի թեման փոխվեց..



*Չորրորդ գլուխ*

*Պապիկիս գութանը.*

Ես պապիկիս ու տատիկիս շատ էի սիրում: Օրերից մի օր առավոտյան, երբ պապիկս իր սովորության համաձայն նստած էր ճոճանակին, գնացի, որպեսզի իր կողքը նստեմ, նա պտտվեց իմ կողմ ու ասաց ինձ. «Արդեն մեծացել ես, թոռնի՛կս, մեծացար ու երիտասարդ դարձար, որդի՛ս, ես քո տարիքում էի, երբ ամուսնացա քո տատիկի հետ», ես ամոթխած ժպտացի նրան:

Ես շատ էի սիրում տատիկիս ու պապիկիս հետ նստել, նրանք տարօրինակ առողջանությանը էին խոսում հայերենը:

Այդ բարբառը բոլորովին տարբեր էր այն բառբառից, որը սովորել էինք ու խոսում էինք մենք, որոշ բառեր հազիվ էի հասկանում, սակայն սիրում էի այն ու փորձում էի երբեմն այդ բարբառով խոսել, նրանց բարբառը Վանում ու դրա գյուղերում տարածված բարբառն էր:

Ես պապիկիս տվեցի այն հարցը, որ երկար ժամանակ հուզում էր ինձ, ասացի պապիկիս. «Պապի՛կ, երբ երիտասարդ էիր, լեռներում բաց երկնքի տա՛կ էիր քնում»,

նա ասաց. «Այո՛, ի հարկե, ես լեռներում ու արոտավայրերում շաբաթներ շարունակ բաց երկնքի տակ էի քնում»,

ու ես հարցրեցի. «Չէի՞ր վախենում դրսում քնելուց»,  
պապիկս ժպտաց ու պատասխանեց. «Ո՛չ, ես երբեք չգիտեի, թե ինչ է վախը, որովհետև մանկուց իմ հոր ու պապիկի հետ լեռներում էի... սակայն երբ տասնվեց տարեկան դարձա, սկսեցի ոչխարների հոտը միայնակ առաջնորդել, որպեսզի լեռներում արածեն, ամառները նրանց տանում էի ամառային արոտավայրեր, իսկ ձմռան վերջերին՝ ձմեռային արոտավայրեր:

Շատ էի սիրում լեռները, հովիտները, արոտավայրերը: Այդ տեղերից շատ բան եմ սովորել, շատ էի սիրում ոչխարների հոտերը: Հիշում եմ, երբ հարսանիքիս օրը, (չնայած չգիտեի, թե ինչ է նշանակում ամուսնանալ, միայն գիտեի, որ ծնողներս մեր տուն աշխատող ուժ պետք է բերեին ամուսնության ճանապարհով, որպեսզի մեզ օգներ մեր առօրյա գործերում...), հայրիկս ստիպեց, որ իջնեմ սարից ու տուն գամ, որովհետև իմ հարսանիքն էր: Ես չէի ցանկանում լքել սարը, սակայն ծնողներիս պնդումներից հետո ստիպված եղա տուն գալ, ու հենց եկեղեցում պսակադրության

արարողությունն ավարտվեց, ու մենք դուրս եկանք, ես հարսանիքից հեռացա ու վազեցի դեպի լեռներ»:

Պապիկս հոգոց հանեց ու մի պահ լռեց, հետո տխուր ձայնով ասաց. «Անգամ երբ ընտանիքս սպանվեց, ես լեռներում էի, ու այդ պատճառով կարողացա փրկվել...», ես զարմացա պապիկիս ասածից... ու հարց տվեցի նրան. «Ինչպե՞ս փախուստի դիմեցիր լեռներից...», ու պապիկս ասաց. «Մեր գաղթից մեկ տարի առաջ, երբ օրերից մի օր տանը հավաքված էինք, հայրս ասաց, որ մեր փայտյա գութանն արդեն մաշվել է, այն շատ հին է, և վերանորոգելն իմաստ չունի, մենք պետք է նոր ու ավելի լավ որակի գութան գնենք, որ երկաթից լինի... պապիկս հայրիկիս պատասխանեց ու ասաց. «Երկաթյա գութանը շատ թանկ է», ու հայրս ասաց նրան. «մեկ ցուլ ու երկու կով կվաճառենք, ու դրանցից ստացված գումարով ես ու Հարությունը (Տիգրանակերտ) այսինքն՝ (այժմ Թուրքիայի տարածքում գտնվող Դիարբեքիրը) կգնանք ու այնտեղից երկաթյա գութան կգնենք, որպեսզի հողը ավելի լավ ու խորը հերկենք»:

Ու պապիկիս համաձայնությունն ստանալուց հետո հայրս վաճառեց ցուլն ու երկու կովերը, դա շատ տխուր ու դժվար էր մեզ համար: Մայրիկս ու տատիկս մի ամբողջ շաբաթ լաց էին լինում այդ կորստի համար, ցլի ու երկու կովերի կորստի

համար, սակայն այդ գոհողությունը պարտադիր էր, որպեսզի կարողանայինք երկաթյա գութան գնել:

Գումարը, որ մի քանի օսմանյան արծաթե մետաղադրամից էր բաղկացած, մայրիկս դրեց կտորից տոպրակի մեջ, այն կարեց ջորիի վրա բերված տոպրակի փալանի ներքևի հատվածում, որպեսզի եթե ճանապարհային ավազակները մեր ճամփան կտրեին, այն հեշտությամբ չգտնեին ու չգողանային:

Ես ու հայրիկս ոտքով քայլելով ճանապարհ ընկանք, ու այն օրեր տևեց, հավանաբար մեկ ամբողջ շաբաթ քայլեցինք, այնտեղ բաց երկնքի տակ երեք օր գիշերեցինք, որովհետև Տիգրանակերտ քաղաքում ոչ ոքի չէինք ճանաչում, հետո շուկաներից մեկից երկաթյա նոր գութան գնեցինք:

Այն բեռքերինք ջորիին, ու մի ամբողջ շաբաթ քայլելով վերադարձանք Մոկս քաղաքի մեր տունը:

Մեր ընտանիքի ուրախությունն անսահման էր: Այդ գութանի ձեռք բերումն ընտանիքում հարսանիքի հավասարագոր էր:

Հայրս գնաց և դիոլ ու գուռնա նվագողներ բերեց, ընտանիքն ու ազգականները հավաքվեցին, որպեսզի մասնակից դառնան մեր ուրախության:

Բոլորը մեզ հետ պարեցին, երգեցին, կերան ու իրենց ուրախությունն արտահայտեցին: Մեր ընտանիքը սերնդե սերունդ փայտյա գութաններ էր օգտագործել, ու սա առաջին անգամն էր, որ երկաթյա գութան էր գնում:

Մեր Մոկս քաղաքում քիչ էր այն գյուղացիների թիվը, ովքեր երկաթյա գութաններ ունեին, որովհետև այն շատ թանկ էր:

Հաջորդ օրը վաղ առավոտյան, հայրիկս եկեղեցի գնաց ու վերադարձավ քահանայի ուղեկցությամբ, նա քահանային խնդրեց աղոթել ու Աստծու օրհնությունը խնդրել, որպեսզի գութանն օրհնվի, քահանան իր պարտականությունը կատարեց, որից հետո հայրս նրան երկու հատ արքադաղ նվիրեց»:

Այնուհետև հայրս ու հարևանները գութանը բեռքերին ավանակին, ու մենք բոլորով մեկնեցինք դաշտ (պապիկս, հայրս, տատիկս, քույրերս, եղբայրներս, հորաքույրներս, մայրս, ես ու հարևանի մի քանի տղամարդ ու կին), պապիկս աջ ձեռքով մի գավազան էր բռնել, իսկ ձախ ձեռքով պահում էր այն առաջին ցլին կապված պարանը, որ պետք էր քաշեր գութանը, մինչդեռ տատիկս պահում էր երկրորդ ցլի պարանը:

Մենք բոլորով, մեծ բազմությամբ քայլեցինք, կարծես հարսնեվորների խումբ լինեք, քույրերս ծաղիկներ էին

քաղում ու ավանակին զարդարում՝ ի նշան այդ օրվա իրենց ուրախության... Երբ դաշտ հասանք, մի խումբ գյուղացիներ, ովքեր հեռվից տեսել էին մեր խումբը, մոտեցան ու սկսեցին թանկ գութանը ձգելու և օգտագործելու հետ կապված խորհուրդներ տալ հայրիկիս: Մինչ պապիկս ու հայրս զբաղված էին գութանը երկու ցլերին ամրացնելու գործով, գյուղացիներից մեկը դիմեց պապիկիս ու հարցրեց. «Մահտեսի՝ Հարություն, ի՞նչ վաճառեցիր, որպեսզի այս երկաթյա գութանը գնես...»,

պապիկս պատասխանեց. «Մեկ ցուլ ու երկու կով վաճառեցինք, որպեսզի այս գութանը գնենք...», տղամարդը խենթացած սկսեց ավերն իրար հարվածել ու ասել. «Օհ... Օհ... մեկ ցուլ ու երկու կով ես վաճառել», մեկ ցուլ ու երկու կով վաճառելը շատ շատ մեծ գոհողություն էր համարվում այդ օրերին:

Երեք ցուլ ու մի քանի կով ունեցողը հարուստ էր համարվում: Պապիկս ասաց. «Այո՛, մենք ստիպված էինք դա անել, որպեսզի այս գութանը գնենք, որպեսզի հողն ավելի արագ ու խորը հերկենք, և ավելի մեծ տարածությամբ»:

Տղամարդը պապիկիս պատասխանեց ու ասաց. «Շնորհավորում եմ, շնորհավորում եմ... լավ ու ապահով պահի՛ր այն...», այնուհետև հայրս, պապս ու իրենց հետ եղող մարդիկ

գութանն ամրացրին երկու ցերին, միաժամանակ ձայներ տալով ցերին, աղոթելով Աստծուն, խոսելով ցերի հետ, և երկու ցերը քարշ տվեցին գութանն այն... Հողը ճեղքվեց ու այնտեղից պապերիս հողի հոտը բուրեց, այդ հոտը, այդ բույրը, որ մինչ օրս հիշում եմ, կարծես քթիս մեջ ցանված մնացած լինի:

Ես երբեք դրանից հետո այդքան բերրի հող չեմ տեսել, իմ պապերի Մոկսում գտնվող հողի նման բերքատու հող երբեք չեմ տեսել: Ա՛խ...» Պապիկս երկար հոգոց հանեց...

Արցունքները փայլեցին նրա աչքերում, մինչ նա հիշում էր այդ գեղեցիկ ու պայծառ առավոտը, հոտ էր քաշում իր հողից ու հայրենիքից, մինչ նոր գութանը ճեղքում էր արտը, խառնում էր հողն ու պատրաստում այն ցորեն ցանելու...

Պապիկս մի պահ լռեց ու շարունակեց պատմել.

«Այդ օրը երջանիկ և ուրախ օր էր, մայրիկս ու աղջիկներն արագ գետնին փռեցին այն, ինչ տնից իրենց հետ էին բերել, նրանք դուրս բերեցին հացը, պանիրը, մածունը, կաթը, երկու եղբայրներս շտապեցին մոտակա աղբյուրից լցնել կուժերը... Կիները երկու սեղան փռեցին նախաճաշի համար, դրանցից մեկը տղամարդկանց համար էր, մյուսը՝ կանանց ու երեխաների... որքան ուրախ էր հայրիկս, երբ քշում էր գութանն ու երկու ցերին:

Նրա դեմքը շողում էր երջանկությունից: Ինչպես չլիներ, երբ երկաթյա գութան ունենալու իր կյանքի երազանքն էր իրականացել: Տղամարդիկ ձայն տվեցին հորս ու ասացին. «Հովսեփ... Հովսեփ... դադարեցրո՛ւ հերկելն ու արի, որպեսզի մեզ հետ նախաճաշես»: Սակայն հայրս այնքան հիացած էր նոր գութանով, որ մերժեց հողը հերկելը դադարեցնել ու ասաց. «Դուք կերե՛ք, ես ավելի ուշ կուտեմ»:

Երեկոյան, հայրս քանդեց երկաթյա գութանը, մաքրեց հողերից, կենդանական յուղով պատեց, ու մենք տուն տարանք այն:

Այն ինչ մնացել էր ցլի ու երկու կովերի վաճառքի գումարից, պապիկս պահեց ու դրանով ինձ ամուսնացրեց»:

Պապիկիս հարց տվեցի. «Դու իրո՞ք հարսանիքիդ օրը լեռներ բարձրացար»,

պապիկս ասաց. «Այո՛, չնայած, որ հայրս ու պապս խնդրեցին, որ մնամ ու հարսանիքը շարունակեմ, բայց ես նախընտրեցի գնալ այնտեղ, որտեղ ձմռան մեր ոչխարների հոտն էր մնում»:

«Իսկ որքա՞ն ժամանակ մնացիր այնտեղ», նա ասաց.



«Ես այնտեղ մնացի մեկուկես ամիս կամ մի քիչ պակաս: Մնացի այնքան, մինչև հայրս մարդ ուղարկեց ու ինձ կանչեց»:

Պապիկիս հարց տվեցի. «Ինչո՞ւ հայրիկդ քեզ կանչել տվեց», նա ասաց. «Պապիկս էր մահացել, իսկ ես չէի իմացել նրա մահվան մասին, որովհետև քաղաքից դեպի լեռներ, մեզ մոտ արոտավայրեր եկող մարդ չի եղել, նա ինձ ասաց. «Հայրիկդ խնդրում է, որ անմիջապես տուն վերադառնաս», հաջորդ օրը հովիվներին թողեցի ու գնացի Մոկս քաղաքի մեր տունը, որովհետև ժամանող հովիվը մեզ վատ լուրեր էր փոխանցել...

Ես իջա տուն, ու ամեն բան շատ վատ էր, պապիկս մահացել էր, և բոլորը տխուր էին:

Հաջորդ օրը հայրիկս ինձ տեղեկացրեց. «Թե լուրեր են պատվում այն մասին, որ քաղաքը թուրքական խմբավորումների կողմից կազմակերպված հարձակման է ենթարկվելու, նրանց են միանալու քուրդերը, և շատ ընտանիքներ հեռացել են Մոկսից դեպի Վան քաղաք, ուրիշ ընտանիքներ պատրաստվում են, որպեսզի իրենք նույնպես անմիջապես մեկնեն Վան քաղաք:

Իսկ մենք չգիտենք, թե ինչ անենք, որդի՛ս, արդյո՞ք մեկնողների նման մեկնենք, թե՞ մեծամասնության նման

սպասենք», ես հայրիկիս ասացի. «Դու ի՞նչ կառաջարկես, հայրի'կ», ու նա ասաց. «Կարծում եմ, որ մի քիչ պետք է սպասենք, որպեսզի տեսնենք, թե ինչ կլինի: Հավանական է, որ այս վատ լուրերը սուտ լինեն»:

Սակայն իրավիճակը հուսադրող չէր, համընդհանուր մտահոգության, վախի, զգուշավորության ու սուտ լուրերի մթնոլորտ էր տիրում հարևանների և ազգականների մեջ:

Նրանք լուրեր էին տարածում այն մասին, որ ավազակախմբեր են հարձակվել շատ հայկական գյուղերի վրա, ոմանց սպանել են, մյուսները փախուստի են դիմել:

Հայրս ասաց. «Հարություն, որդի'ս, վաղը գնա' ու կնոջդ բեր իր հայրական տնից»:

Ես ասացի նրան. «Ես ճանապարհը չգիտեմ, հայրի'կ, թող տատիկս գնա, կամ միասին գնանք», ու երբ հայրս իր մոր, այսինքն տատիկիս կարծիքը հարցրեց, տատիկս ասաց. «Մենք պետք է սպասենք, մինչև իր հայրը ետ կբերի իրեն, դա է ընդունված կարգը, որովհետև երկար ժամանակ չի անցել իր հոր տուն գնալուն, մյուս կողմից ճիշտ չէ, որ հայրիկիդ մահվանից հետո երկար ժամանակ չանցած ես տնից դուրս գամ»:

Հայրիկս ասաց. «Ուրեմն դու պետք է պատրաստ լինես ցանկացած վատ ու անսպասելի դեպքի»: Ես նրան ասացի.

«Ի՞նչ ես ցանկանում, որ անենք», հայրիկս ասաց. «Մենք պետք է պահենք գութանը, այն մեծ գանձ է, պետք է ապահով տեղ պահենք, ու եթե ստիպված լինենք երկար ժամանակով հեռանալու տնից, գութանն ապահով տեղում կմնա այնպես, որ եթե գողերը տուն մտնեն, չկառդանան գտնել գութանը, մինչև որ կրկին մեր տուն վերադառնանք, դուրս բերենք այն ու դարձյալ օգտագործենք»:

Հորս ասացի. «Ինչպես կցանկանաս, հայրի՛կ, որտե՞ղ ես ցանկանում, որ պահենք այն», հայրս ասաց. «Ընկուզենու տակը»:

Մեր տան բակում հսկա մի ընկուզենի կար, այն այնքան մեծ էր, որ մեր մեծ տան վրա երկինքն էր ծածկում: Ես ու հայրիկս փոքր եղբայրներիս հետ միասնական ուժերով մեծ ու խոր փոս փորեցինք այդ ընկուզենու տակը: Մենք երկու օր շարունակ փորում էինք: Այնուհետև հայրս հավիող յուղ քսեց գութանին, հետո մեծ կաշվե կտորով փաթաթեց այն, ու ես լսեցի, թե ինչպես էր խոսում գութանի հետ ու ասում էր.

«Մի՛ վախեցիր, այ մոգիե (մոգիե բառը գեղեցիկ էր նշանակում, ու այն հավանաբար հայերեն չէր, սակայն բոլորիս կողմից օգտագործվող բառով կոչում էինք այն գեղեցիկ կենդանիներն ու կարևոր առարկաները):

Սիրելի՛ս, մի՛ վախեցիր, մի՛ վախեցիր, եթե գնանք, մենք շուտ ենք վերադառնալու, ու քեզ կարճ ժամանակ անց դուրս ենք բերելու:

Դու կրկին վերադառնալու ես ու հողն ես հերկելու:

Մի՛ վախեցիր, մեր վերադարձը չի ուշանա, դու այս փոսում երկար չես մնա»:

Այս խոսքերը հայրիկս մի քանի անգամ կրկնեց մինչ յուղում էր գութանն ու կաշվով փաթաթում այն, որպեսզի պատրաստ լինի թաղվելու:

Կարոտի ու սիրո այս խոսքերով մենք հրաժեշտ տվեցինք մեր թանկ գութանին, որ մեր ընտանիքի մի մասն էր դարձել:

Եկավ նաև մայրիկս, իր հետ բերելով սենյակներից մեկի պատից կախված մի գորգ, հայրս գութանը փաթաթեց այդ գորգի մեջ, և մայրս ու հայրս գութանն իջեցրին փոսի մեջ, որը նախորոք փորել ու պատրաստել էինք, այնուհետև գութանը ծածկեցինք հողով, եղբայրներիս իջեցրինք փոսի մեջ, որպեսզի ցատկոտեն ու հողը տափակեցնեն:

Հետո մայրիկս մի քարուք բերեց (քարուքը փայտյա փոքրիկ անկողին է, որի մեջ նորածին երեխաներն են պառկեցնում,

ու այն հեշտությամբ է աջ ու ձախ օրորվում, որպեսզի երեխան շուտ ու հանգիստ քնի):

Հայրս ու հորաքույրներս այդ քարուքի մեջ են պառկել, նաև եղբայրներս, քույրերս ու ես, և մայրս խնամքով էր պահում այն, որպեսզի դրա մեջ պառկեցնի իր թոռներին:

Մայրս այն փաթաթեց հնացած հագուստներով, ու մի քանի պղնձյա իրերի հետ թաղեցինք հողում:

Հորս հարց տվեցի. «Ինչո՞ւ այն գութանի հետ չդրեցինք, որպեսզի միասին թաղենք», հայրս ասաց. «Ո՛չ, որդի՛ս, եթե գողերը փոսը գտնեն, նրանք փորելու են ու գտնեն քարուքն ու այս պղնձյա իրերը և այլևս ավելի խորը չփորեն, որպեսզի գութանին հասնեն, այդպիսով գութանն ապահով տեղում կմնա, մինչև վերադառնանք»:

Այնուհետև փոսն ամբողջությամբ ծածկեցինք հողով, վրան թոնրից բերված տաք ածուխ ու մոխիր թափեցինք, որպեսզի ածուխը հողը չորացնի, և ծառի շուրջը փորված ու չփորված հատվածներն իրարից չզանազանվեն...

Ես մոտ երեք օր տանը մնացի, սակայն քաղաքում մարդկանց սիրտը լցված էր շփոթվածությամբ ու լուրերի սպասելով, մենք ամեն օր մարդկանց մեջ տարածված լուրերն էինք լսում, թե ինչպես հայկական գյուղեր կողոպուտի էին ենթարկվում ու ողջ բնակչությունն սպանվում էր:

Երբեմն լսում էինք, թե ինչպես որոշ ճանապարհորդներ իրենց անցած ճանապարհներին գլխատված դիակներ էին տեսել:

Սակայն քաղաքը ցնցող ամենածանր լուրը այն էր, թե հայկական ընտանիքներին մեծ քարավաններով բռնի քշում ու տանում էին, որպեսզի հարավային շրջաններում նրանց բնաջնջեն..

Հայրս ու մյուս տարեցները քաղաքի տարբեր անկյուններում խմբերով հավաքվում էին, որպեսզի լուրեր փոխանակեն և փորձեն ինչ որ բանի շուրջ պայմանավորվածություն ձեռք բերել:

Այնուամենայնիվ, ամեն օր տարբեր շրջաններից փրկված ընտանիքներ ու անհատներ էին հասնում մեր քաղաք՝ Մոկս,

քաղաքի տղամարդիկ նրանց համար ուտելիք ու խմելիք էին բերում, կամ նրանց հյուրընկալում էին իրենց տներում, լսում էին նրանց պատմած տխուր լուրերը, որոնք արդեն ամենուր տարածվել էին:

Ընդհանուր տարածված միտքն այն էր, որ այդ դեպքերն ու ջարդերը տեղի էին ունենում փոքր ու մեկուսացած գյուղերում, և դրանց կատարողները ավագակախմբերն ու ճանապարհային ավագակներն էին, ուրիշ ոչինչ:

Բոլորը բացառում էին այն միտքը, թե նույն բաները կարող են տեղի ունենալ Մոկս քաղաքում, անգամ շրջակա գյուղերի բնակիչները գաղթել ու տեղափոխվել էին Վան ու Մոկս քաղաքներ, որովհետև բացառում էին թուրք ու քուրդ մարդասպանների հասնելը այդ քաղաքներ:

Մինչ ես դեռ տանն էի, օրերից մի օր մեր տան դուռը ծեծեց մի քուրդ շրջիկ վաճառող, ով մեր ընտանիքի ծանոթն էր ու բոլորի կողմից ճանաչված անձ, նա ցանկացավ հորս հետ հանդիպել, մեզ թվաց, թե նա եկել էր պապիկիս մահվան համար ցավակցություն հայտնելու, սակայն նա ցավալի լուրեր փոխանցեց հայրիկիս ու ասաց նրան, որ իր ամենօրյա շրջելու ընթացքում երբ անցնում էր Կոնիս գյուղի միջով,

որտեղ ապրում էր իմ կնոջ գերդաստանը, տեսել է, թե ինչպես գյուղում հայերի տներն այրվում էին, իսկ ովքեր դեռ այնտեղ էին մնացել, սպանվել են, նրանց կենդանիներն ու ունեցվածքը թալանվել են, և այնտեղ ոչ մի հայ կենդանի չի մնացել:

Հորս ասաց. «Դու ինձ չէի՞ր ասել, որ քո խնամիներն այդ գյուղում են ապրում», ու հայրս ասաց. «Այո»:

Նա ասաց. «Չեմ կարծում, որ նրանք փրկված լինեն այդ կոտորածից»:

Երբ այս լուրը լսեցինք, տատիկս, մայրս ու քույրերս սկսեցին լաց լինել ու գոռալով ասում էին. «Վստահ ենք, որ մեր հարսն ու նրա ընտանիքը սպանվել են»: Լաց ու կոծի ձայնից հարևանները հավաքվեցին, ու այսպիսով մեր տնից մի այլ լուր տարածվեց այն մասին, թե Կոնիս գյուղի բոլոր հայ բանկիչները սպանվել են, անգամ (Մահտեսի Հարությունի) հարսը ու իր ընտանիքն ու հարազատները, իսկ նրանց ունեցվածքը քուրդ ավազակների կողմից հափշտակվել է:

Բոլոր լուրերը տխուր էին, և ամենուր վախի ալիք էր բարձրանում, գյուղացիներն ամեն օր իրար հետ զրուցում ու հարց էին տալիս. «դաշտերում ցանք անե՞նք, թե՞ այս սեզոնին հեռանալու ենք»:



Հայրս ինձ ասաց. «Որդի՛ս, Հարություն՛ն, գնա՛ արոտավայրեր ու ստուգի՛ր կենդանիները, որևէ բան պատահելու դեպքում, մենք անմիջապես մարդ կուղարկենք ու քեզ կկանչենք»:

Մեր կենդանիների հոտը լեռներում էր արածում, քանի որ ես շտապելիս դրանց այնտեղ էի թողել ծանոթ հովիվների հետ, ու այդ հովիվները Մոկսի բնակիչ քուրդեր ու հայեր էին:

Ես հորս ասացի. «Լավ, հայրի՛կ, վաղը,, նախքան արևածագը կմեկնեմ արոտավայրեր»:

Ա՛խ, երանի չմեկնեի, երանի մնայի ու նրանց հետ մեռնեի...

Սովորության համաձայն վաղ առավոտյան, նախքան արևածագը արթնացա, առանց իմ մեծ ընտանիքի անդամներից մեկին արթնացնելու... չգիտեի, որ այլևս երբեք նրանց չեմ տեսնի:

Ա՛խ... մայրս... Ա՛խ հայրս... Ա՛խ քույրերս... Ա՛խ հորաքույրներս... Ա՛խ տատիկս... չգիտեմ՝ արդյոք ե՛ս հեռացա, թե՛ նրանք հեռացան:

Ես անձայն դուրս եկա մեր տնից, այն տնից, որտեղ էլ երբեք չէի վերադառնալու...»

Պապիկս լռեց, նա կախեց գլուխը, որի վրա կրում էր սիդարան (սիդարան իրաքյան ժողովրդական գլխարկ է, այն հիմնականում կրում էին Բաղդադի բնակիչ տղամարդիկ, մինչև ութսունականների վերջերը):

Ես զգացի, որ պապիկիս սրտում կսկիծը շարունակում է նորոգվել, իսկ երկար տարիներն իր սրտի վերքը բուժելու անկարող են եղել, ու այն մինչ օրս արյունահոսում է:

Ես նույնպես մի պահ լռեցի, մինչև պապս հավաքեց իր մտքերն ու գրկեց իր ցավերը, որպեսզի վերսկսի իր պատմությունը, նա փորձում էր անտեսել ցավը:

Պապս շարունակեց պատմությունն ասելով. «Կեսօրին հասա լեռներում գտնվող արոտավայրեր:

Իմ քուրդ հովիվ ընկերներից մեկն ինձ ասաց. «Երկու օր առաջ մեզ մոտով անցան զինյալ տղամարդիկ, նրանք կարծես քուրդեր էին, մեզ հարց տվեցին այս հոտերի տերերի մասին: Մենք նրանց ասացինք. «Դրանք մերն են ու մենք քուրդ ենք», նրանք հարց տվեցին. «Ձեր մեջ հայ հովիվներ

կա՞ն», ու մենք ասացինք. «Այս սեզոնին այստղ հայեր չեն լինում»: Այսպիսով մենք պաշտպանեցինք մեզ հետ գտնվող մեր հայ հովիվ ընկերներին»:

Մեր Հայ հարևանի որդի Սմբատը, ով իմ ընկերն էր, ասաց. «Ի՞նչ վիճակ է տիրում քաղաքում, ինչպե՞ս են ընտանիքս ու ազգականներս», ու ես նրան ասացի. «Բոլորը լավ են, սակայն իրավիճակը հուսադրող չէ»:

Սմբատն ասաց. «Այո', Հարություն, ես ոչխարներին կառնեմ ու կվերադառնամ Մոկս, սակայն վախենում եմ ավազակախմբերի հանդիպելուց:

Ի՞նչ կասես, ինչո՞ւ միասին չենք վերադառնում:», ես նրան ասացի. «Արի' մեր հոտերն այստեղ թողենք, մեզ հետ տանենք բոլոր մյուս հայ հովիվներին ու վերադառնանք մեր տները»:

Սակայն երբ կիսվեցինք մյուս հայ հովիվների հետ, նրանք մերժեցին ու ասացին. «Ոչինչ չի պատահի, դրանք փոքրիկ ավազակախմբերի արարքներ են ու շուտով կավարտվեն»:

Ես մոտ մեկ շաբաթ մնացի լեռներում, և օրերից մի օր արևածագին հովիվներից մեկը նկատեց մի խումբ մարդկանց ստվերներ, որոնք մեր ուղղությամբ էին շարժվում, մենք՝ հայ հովիվներս փախուստի դիմեցինք ու թաքնվեցինք, մտածելով, որ նրանք օսմանցի ավազակախմբեր են, սակայն երբ մոտեցան, պարզվեց, որ նրանք հինգ հայ ֆիդայիներ էին, նրանք մեզ ձայն տվեցին, մենք մոտիկ գնացինք, առաջարկեցինք իջնել ուտելու և խմելու:

Նրանցից մեկը մեր դեմքին գոռալով ասաց. «Ա՛յ տղա, դուք խեղճ եք, ի՞նչ եք անում այստեղ, արագ փախե՛ք... պատերազմ է, բռնագաղթ, սպանություն, մորթում, իսկ դուք կենդանիների՞ն եք հսկում», հովիվներից մեկը, ում անունը Դավիթ էր, ասաց. «Ինչո՞ւ փախչենք, ի՞նչ է պատահել, եղբայրս»: Ու հայ մարտիկը պատասխանեց նրան. «Երկու օր առաջ Մոկսն այրվեց, տները քանդվեցին, բնակչությունը մորթվեց, ու հավանաբար բացի ձեզանից, ոչ ոք չի փրկվել»:

Այդ պահին մեր մեջ լռություն տիրեց, սարսափելի լուրը լսելով չգիտեինք, թե ինչ ասեինք, ու հայ ֆիդայի մարտիկն ասաց. «Հանկարծ քաղաք չվերադառնա՛ք, ամեն բան թողեք ու փախչե՛ք լեռները, որպեսզի փրկվե՛ք, ու արագացրե՛ք: Անգամ ձեզ հետ եղող այս քուրդ հովիվներին չվստահե՛ք:

Նրաց չասե՛ք, թե ուր եք գնում»: Այնուետև հայ ձիավորներն անմիջապես հեռացան անհայտ ուղղությամբ:

Հովիվներից մեկն ասաց. «Հավանական է, որ նրանց խոսքը ճիշտ չէր, կամ չափազանցված էր, հավանաբար նրանք այս լուրը հորինել էին, որպեսզի զգույշ լինենք»:

Մենք բոլորս լուրը հավատալու ու չհավատալու անորոշության մատնվեցինք: Մեզանից ոմանք սկսեցին լաց լինել ու իրենց հարազատների համար տխրությունից գոռալ, ու բոլորը որոշեցին իրենց հոտերն առնել ու լեռից իջնել քաղաք, չհավատալով հայ ձիավորների ասածներին, մեզանից ոչ ոք չէր հավատում, որ Մոկսի նման քաղաքը կարող էր այրվել, թալանվել ու բնակչությունը սպանվել... ինչպե՞ս կարող էր դա պատահել, դա խելքին անհասանելի բան էր:

Իմ հայ հովիվ ընկերներն անմիջապես շարժվեցին, նրանք թվով 14 հովիվ էին, ու իմ ազգականների երիտասարդ տղաներն էին, նրանք առաջնորդեցին իրենց կենդանիների հոտերն ու բարձունքներից քայլելով իջան իրենց տների ուղղությամբ, դեպի Մոկս քաղաքը:

Իսկ ես միայնակ մնացի լեռներում, իմ քուրդ հովիվ ընկերների հետ, որովհետև հայրս ասել էր. «Չվերադառնա՛ս, մինչև քո հետևից մարդ չուղարկենք»:

Ծանր ժամերն անցնում էին, ու ես անորոշության էի մատնվել, ընտանիքիս համար մտահոգվածությունն ինձ աջ ու ձախ էր անում, կարծես խենթ փոթորկի գրկում հայտնված նավ լինեի:

Մե՛կ նստում էի, մե՛կ ոչխարների հետևից էի վազում, սակայն իրականում տխրությունից էի վազվզում, իսկ ոչխարների հոտն անտեսում էի, չնայած, որ դրա հետևից առաջ էի գնում ու գալիս, սակայն իմ մեջ ինձ հարց էի տալիս. «Արդյո՞ք հետևեմ ընկերներիս օրինակին ու հոտի հետ քաղաք վերադառնամ: Արդյո՞ք գնամ ու միանամ մյուսներին, թե՛ տեղս մնամ», մեր վերջին հանդիպման ժամանակ հայրս ասաց. «Եթե ինչ որ բան պատահի, մենք հետևիցդ մարդ կուղարկենք, որպեսզի գաս մեզ հետ»: Իսկ նա մինչև հիմա ոչ ոքի չի ուղարկել... Սակայն նախքան երեկոն իջնելը, երբ նստած էի ժայռին ու փորձում էի մտքիս թնճկված թելերը քանդել, մի պահ գլուխս բարձրացրի և տեսա մեր ընկեր

քուրդ հովիվներից մեկին, ով հեռվից իմ ուղղությամբ էր գալիս վազելով:

Հենց նա հասավ ինձ մոտ, գլուխը աջ ու ձախ պտտեց, ու սաստիկ հոգնած վիճակում հագիվ կարողացավ ասել ինձ.

«Հարություն'Լն, Հարություն'Լն, շուտ արի' իմ հետևից...»,

ես նրան ասացի. «Ա'յ Ազատ, ի՞նչ է պատահել», նա կարծես սարսափելի կայծակի հարված ստացած լինեմ, չկարողացավ ինձ հետ խոսել ու նույն նախադասությունը կրկնեց. «Խնդրում եմ քեզ, Հարություն'Լն, շուտ արի'...», նա վազելով վերադարձավ այնտեղ, որտեղից եկել էր, ես լքեցի հոտն ու արագ քայլերով հետևեցի իրեն այնպես, կարծես վագրից կամ առյուծից էի փախչում, առանց իմանալու, թե ինձ ինչ էր սպասում:

Երբ մենք հասանք հսկա մի ժայռի մոտ, որը մոտ էր իրնեց հոտերին, տեսա մեր ընկեր քուրդ հովիվներին, նրանք թվով 6 հովիվ էին, ովքեր հավաքվել էին այդ ժայռի մոտ: Հենց մենք մոտեցանք, նրանք ինձ համար ճանապարհ բացեցին, ու ես տեսա իմ երկու եղբայրներին..., ինձանից փոքր եղբորս՝ Աբրահամին ու նրանից փոքր եղբորս՝ Պողոսին, ովքեր ձեռք-

ձեռքի բռնած ու գետնին պառկած լաց էին լինում ու խենթի պես գոռում էին:

Ես վազեցի, ծնկներիս վրա ընկա նրանց առաջ ու ասացի. «Ի՞նչ է պատահել, եղբայրներս, պատմե՛ք ինձ... Ի՞նչ է պատահել... խոսի՛ր, Աբրահա՛մ», հովիվներից մեկն անմիջապես մի բաժակ կաթ տվեց նրանց, ու ջրով լվացին նրանց դեմքերը... Իսկ ի՞նչ լուր էին բերել ինձ:

Ա՛խ... Ի՞նչ ողբերգություն էր... ա՛խ... Ի՞նչ չարաբաստիկ լուր էր. «Իմ ընտանիքի բոլոր անդամներն սպանվել էին, ու միայն այս երկու փոքրիկ գառնուկներն էին փրկվել»:

Երբ լուրը լսեցինք, քուրդ հովիվներից մեկը քուրդերենով գոռաց. «Վա՛յ, ափսո՛ւ... ափսո՛ւ... Մահտեսի Հարությունի ընտանիքին ափսո՛ւ»...

մեր հովիվ ընկերները նստեցին ու սկսեցին լաց լինել մեզ հետ, նրանք ողբում էին հորս ու մեր ընտանիքի մահը:

Նրանք շատ էին սիրում պապիկիս, և պապիկս ու հայրս շատ էին սիրում նրանց, նրանց հետ այս արոտավայրերում երկար



գիշերներ էին անցկացրել զրուցելով և հովվության ու դրականոնների մասին փորձի փոխանակումով:

Հենց եղբայրս՝ Պողոսն ինքզինքը գտավ և ուժերը հավաքեց (այդ օրերին 12 տարեկան էր), ես նրան հարց տվեցի. «Եղբա՛յրս, պատմի՛ր ինձ, այնտեղ ի՞նչ տեղի ունեցավ», նա արցունքոտ աչքերով ու քամուց դողացող փետուրի նման դողալով պատմեց. «Կիրակի օրը մեզ հավաստի լուրեր հասան, թե թուրք և քուրդ ավազակախմբեր երեք կողմերից գալիս են Մոկս քաղաքի ուղղությամբ, Վան քաղաք գնալն անկարելի դարձավ:

Բնակիչների համար միակ ելքն իրենց ճակատագրին դեմ հանդիման դուրս գալն էր:

Երկուշաբթի օր ամեն բան հանգիստ էր: Սակայն գիշերը, լուսաբացից առաջ, մենք կրակոցների ու գոռոցի ձայներ լսեցինք, հարևաններն շտապեցին ու մեզնից փորձեցին ճշտել, թե որն է այդ կրակոցների պատճառը:

Արևածագի հետ լսեցին փամփուշտների ձայներ, որոնք գնալով շատանում ու մոտենում էին մեր թաղերին: Որոշ հայ ընտանիքներ իրենց ունեցած պարզ հրացաններով դիմադրել էին ջարդարար առևանգողներին, այնուհետև փամփու-

շտները շատացան, կարծես պատերազմ էր, հայրս արագ մոտեցավ ինձ ու եղբորս ու խնդրեց բարձրանալ գոմի տանիք, որպեսզի այնտեղ ծղոտների մեջ թաքնվենք, և մենք տեսնում էինք, թե ինչ էր տեղի ունենում:

Հարյուրավոր ձիավորներ եկան թրերով, հրացաններով, դանակներով, ատրճանակներով: Նրանք իրենց հետևից քարշ էին տալիս Մոկսի բնակիչ սպանված տղամարդկանց դիակներ:

Հայրս դուրս եկավ, որպեսզի իրենց հետ խոսի, և ավելի քան քսան զինյալ մտավ մեր տուն, մյուսները հարևանների դռները ջարդեցին, քաշելով դեպի փողոց բերեցին տղամարդկանց ու գլխատեցին նրանց:

Մեր տուն մտնողներից ոմանք մեր հորաքույրներին մի քանի տեղից դանակահարեցին, նրանց զարդերը գողացան, այնուհետև մայրիկիս ու հայրիկիս աչքերի առաջ մորթեցին մեր երեք քույրերին: Երբ մայրս սկսեց գոռալ, զինվորներից մեկը թրով հարվածեց նրան ու փորը բացեց: Իսկ հայրիկիս քարշ տվեցին դեպի տան դուռը, և մեր հայրիկին սպանեցին ձիերի ոտքերով... իսկ մեր մանկահասակ քրոջը Լիանին մարդասպաններից մեկը կապեց ձեռքերից ու ոտքերից, նրան նստեցրեց իր ձիու վրա և իր հետ տարավ...», հենց լսեցի

եղբորս պատմածը, զմռսված դիակի վերածվեցի, և չգիտեի՝ արդյոք կենդանի՞ եմ, թե՞ մեռած:

Սաստիկ տխրությունից ու ցավից գետին ընկա, և հովիվները մեզ հետ սկսցին լաց լինել ու գոռալ. «Վա՛յ ողբերգության, վա՛յ հանցագործության, ի՞նչ էին արել նրանք, որպեսզի նման ճակատագրի արժանանային, ի՞նչ էին արել, ա՛յ հանցագործներ, Աստծուց չե՞ք վախենում... ա՛խ...», նրանցից մեկը հարց տվեց եղբորս՝ Պողոսին ու ասաց. «Իսկ ինչպե՞ս փրկվեցիր դու և եղբայրդ», եղբայրս պատասխանեց. «Երբ մեր ու մյուսների տները այրեցին, ամեն կողմ ծածկվեց ծխով, մենք երկուսով մնացինք գոմի տանիքում թաքնված: Սրիկաներն եկան ու մտան գոմ, որպեսզի թալանեն այն, ու դա մեր բախտից էր, նրանք կենդանիները գողանալու և թալանելու ժամանակ իրար մեջ մրցում ու կռվում էին, և հետաքրքրված չէին տանիք բարձրանալով և փախուստի դիմաձնեռին փնտրելով, որովհետև գոմում գտնվող կենդանիները մեծ հարստություն էին, և մարդասպաններն իրար մեջ մրցում էին, թե ով ավելի շուտ կտիրանա դրանցից մեկին կամ երկուսին:

Մենք երկուսով սպասեցինք գոմի տանիքում, մինչև մթնեց, և մենք միասին լուռ իջանք, մթին քայլեցինք, որպեսզի մեզ ոչ

որ չտեսնի: Մենք դուրս եկանք քաղաքից, որտեղ լռություն ու մահվան հոտ էր տիրում, այնտեղ բացի շների հաչոցից ոչինչ չէր լսվում: Մենք քայլեցինք, մինչև հասանք քաղաքից դուրս գտնվող դաշտերը, այնտեղ լուռ նստեցինք, մինչև արևը բացվեց, և մենք ուղղվեցինք այստեղ, մենք ճանապարհի վրա չքայլեցինք, այլ դաշտերի միջով, խոտերի և ծառերի մեջ թաքնվելով եկանք, մինչև հասանք լեռներ ու շտապեցինք այստեղ»:

Հովիվներից մեկը նրան հարց տվեց. «Ճանապարհին մեր ընկեր հովիվներին հանդիպեցի՞ք: Նրանք այս առավոտ իրենց հոտերով քաղաք իջան», եղբայրս Պողոսը լռեց ու եղբայրս Աբրահամը, ով 10 տարեկան էր, խոսեց ու ասաց. «Այո', հորեղբա'յր, մենք նրանց ճամփի եզրին տեսանք գլխատված, նրանց հոտերը գողացվել էին: Նրանցից ոչ ոք չէր փրկվել»:

Ես չգիտեի, թե ինչ պետք էր ասել: Արդյո՞ք իմ բարի բախտից էր, որ ընտանիքիս հետ չէի եղել, արդյո՞ք իմ բարի բախտից էր, որ այսօր առավոտյան հովիվ ընկերներիս հետ չէի գնացել, չգիտեմ, արդյո՞ք Տերն ինձ խնայեց, ինչ որ նպատակի համար...:

Քուրդ հովիվներից մեկը, ով բոլոր ներկաներից ավելի մեծ էր տարիքով, ինձ ասաց. «Հարություն'ն, հարցը հեշտ չէ, և դու այժմ պատասխանատու ես երկու եղբայրներիդ համար, մի կողմ թո՛ղ ցավն ու հավաքի՛ր ուժերդ: Վե՛ր կաց, քեզ հետ վերցրու երկու եղբայրներիդ, ու անմիջապես փախչի՛ր դեպի լեռները, որովհետև այդ հանցագործները անկասկած որ բազմաթիվ անգամներ գալու են այստեղ, և հավանաբար նրանք հիմա ճանապարհին են:

Վե՛ր կաց, թա՛փ տուր տխրությանդ փոշին ու շտապի՛ր փախչել, որպեսզի փրկվես ու փրկես եղբայրներիդ»:

Նա ճիշտ էր ասում, և ես այլ ելք չունեի, թողեցի կենդանիների հոտերը քուրդ հովիվների մոտ, և ես ու եղբայրներս մեզ հետ վերցրինք այնքան ուտելիք ու կաթ, որքան կարողացանք:

Մենք արցունքով ու ցավով հրաժեշտ տվեցինք մեր ընկերներին, նրանց մոտ թողեցինք կենդանիների մեր հարստությունը, և ես եղբայրներիս հետ քայլեցի դեպի լեռները, և հատկապես դեպի այն լեռը, որի բոլոր անկյունները, հովիտներն ու ժայռերը անգիր գիտեի»:

### *Երկնքի աստղերի ներքո.*

Պապիկս շարունակեց իր պատմությունն ու ասաց. «Գիշերը շատ լուռ ու կամաց քայլեցինք, առանց ոչ մի ձայն հանելու, իմ նպատակն էր լեռան վրա թաքնվելը, որպեսզի ժամանակ առ ժամանակ վերադառնայի հովիվների ու մեր կենդանիների մոտ, որպեսզի ստուգեմ դրանց, հույս ունենալով, որ կկարողանամ հեռու արոտավայրեր տեղափոխել, որտեղ թշնամիները չէին հասնի, և երբ խաղաղությունը կտիրեր, կվերադառնայի իմ պապերի տունն ու հողը, և կվերադարձնեի այն, ինչ կարելի կլիներ վերադարձնել:

Ես հեռու և անվերադարձ փախչելու նպատակ չունեի: Ես ու եղբայրներս ողջ գիշերը արցունքոտ աչքերով քայլեցինք, իմ ընտանիքի ու ծնողների կորստի ցավից սիրտս արյունահոսում էր, ու նախքան լուսաբացը հասանք մի փոքր քարանձավ, որն ինձ ծանոթ էր, և այնտեղ մնացինք, որպեսզի հանգստանայինք ու քնեին, սակայն ի՛նչ քնել...»

Եղբայրներս՝ Պողոսն ու Աբրահամը լաց էին լինում ու սաստիկ վախից և իրենց տեսած կոտորածների սարսափից դողում էին: Ես նրանցից ավելի լավ վիճակում չէի, սակայն ես

ինձ հանգստացնում էի, որպեսզի եղբայրներս հանդարտվեին:

Նրանց ծնոտների արանքը փաթաթված կտորներ դրեցի, որպեսզի նրանց լացի ձայնը դուրս չգա ու մեզ ոչ ոք չսի, որովհետև լեռան վրա շատ հանդարտ էր:

Հաշված թուփեր անց եղբայրներս սաստիկ հոգնածությունից ու լաց լինելուց քնեցին, մենք քարանձավում մնացինք մինչև կեսօրից առաջ:

Կեսօրից հետո հեռվից ծանր ոտնաձայներ լսեցի, որոնց արձագանքը տարածվում էր ամենուր: Խիստ ուշադիր ու զգուշավոր գլուխս դուրս հանեցի քարանձավից, որպեսզի տեսնեմ, թե որտեղից են գալիս այդ ձայները, և նկատեցի վեց հայ ֆիդայի զինվորների, որոնցից երկուսը վիրավոր էին, իսկ մյուս չորսն օգնում էին վիրավորներին, որպեսզի կարողանան քայլել:

Ես նրանց ուշադիր հետևեցի մինչև մոտեցան, և հանկարծ նրանցից մեկին ճանաչեցի, նա գարնանը հաճախ արոտավայրեր էր գալիս ու ինձնից իրեն և իր խմբի համար մածուն ու կաթ էր ուզում: Նրա անունը Սահակ էր, շատ ուրախացա,

դուրս եկա իմ քարանձավից ու գոռացի. «Սահա'կ... Սահա'կ...», նա կանգ առավ ու ասաց. «Ո՛վ է... ո՛վ է ինձ կանչում իմ անունով», ես անմիջապես դուրս եկա և դեպի իրենց իջա, օգնեցի, որպեսզի բարձրանան մեր քարանձավ ու հանգստանան:

Նրանցից տեղեկացա, որ իրենց խումբը կռվող չէր, այլ մեկ տեղից մյուսը մթերք ու ապրանք էր տեղափոխում, երբ հայտվեցին քուրդ ավագակախմբերի ծուղակում, թշնամուն մեծ կորուստներ պատճառելուց հետո նրանց խմբի բոլոր անդամները սպանվել էին, և միայն նրանք էին, որ կենդանի էին մնացել այդ խմբից, վիրավորների վիճակը ծանր էր: Նրանք դանակահարության էին ենթարկվել:

Ես անմիջապես դուրս եկա քարանձավից և ժայռերի մեջ կարմիր եղինջ փտրեցի: Մի քանի հատ գտա, բերեցի ու խառնեցի մեզ մոտ մնացած կաթի մեջ, շիլա սարքեցի ու քսեցի նրանց վերքերին, նրանք անմիջապես ուժեղ ցավ զգացին, որից հետո ցավը թմրեց ու վերացավ:

Նրանց մեզ մոտ գտնված կաթից և ուտելիքից տվեցի, և երբ ուտում էին, զինվոր Սահակն ասաց ինձ. «Դուք ինչո՞ւ եք այստեղ գտնվում», ես նրան ասացի. «Մենք այստեղ ենք ու այստեղ կմնանք, մինչև իրավիճակը հանդարտվի և



վերադառնանք...», նա ասաց. «Հարություն, ո՞ր ես ուզում  
վերադառնալ...

կարծում ես այս ամենը խա՞ղ է, կավարտվի ու դուք  
կվերադառնա՞ք, սա բնաջնջման պատերազմ է, հասկանո՞ւմ  
ես, ավարտը հեռու է, և մինչ այդ դու պետք է պաշտպանես  
ինքդ քեզ ու երկու եղբայրներիդ:

Դու գիտես, որ համայն հայության փրկության միակ  
ճանապարհը օսմանյան հողերը լքելն է, դուք կա՛մ կմնաք ու  
կբնաջնջվեք, կա՛մ կփախչեք հեռու և կփրկվեք:

Երրորդ այլընտրանք չկա ձեր ու մեր առաջ, հետևաբար  
որպեսզի փրկվենք կոտորածներից, մենք պետք է Իրան  
հասնենք, և Իրանից՝ Հայաստան: Բոլոր մյուս ճանա-  
պարհները թշնամին փակել է, որպեսզի մեզ շրջափակի,  
միամիտ մի՛ եղիր: Եթե քուրդերն ու թուրքերը ձեզ տեսնեն,  
նրանք անմիջապես սպանելու են, և նրանք ամենուր  
տարածվել են, այդ ավազակախմբերը շների նման գիշեր ու  
ցերեկ թափառում և փախուսի դիմած հայերի են փնտրում,  
իսկ դու ուզում ես այս քարանձավո՞ւմ մնալ, ձեր հոտերին  
տեր կանգնելու համար... խենթացե՛լ ես... նրանք մեզ  
բնաջնջում են, Հարություն, գիտե՛ս, թե ինչ է նմանակում  
մեզ բնաջնջում են... նրանք ցանկնում են վերացնել հայու  
ցեղը, հայու տեսակն առհասարակ, և հավանաբար այս

պահին Մոկս քաղաքից դուք երեքդ միակն եք, ովքեր կենդանի են, առնվազն այսօր: Իսկ թե ինչ տեղի կունենա վաղը, դա ոչ որ չգիտի... նրանք մեզ բնաջնջում են, մեզնից ոչ որի չեն խնայում: Դու հնարավորինս շուտ պետք է հեռանաս այստեղից ու այս հողերից... և ի գիտություն, անգամ դեպի Իրան փախչելու ճանապարհը այս պահին կարող է համարյա փակված լինել, նրանք մեզ շրջափակում են, որպեսզի մեզ վերացնեն: Արթնացի՛ր ու լրջորեն նայի՛ր հարցին, Հարություն՛ն»:

Ոչինչ չկարողացա ասել: Որովհետև հիմա արդեն գիտեի, որ այս հողերում մենք այլևս ոչինչ չունենք: Պետք է իմ նպատակը լինե՛ր՝ ես ինձ փրկել ու երկու եղբայրներիս փրկել, ու որպեսզի թուրքերը հայկական ցեղը բնաջնջելու իրենց նպատակին չհասնեին, ես պետք է զոհեի հողը, արոտավայրերը, հոտերը, գութանը, որպեսզի կենդանի մնայինք ու փրկվեինք: Սակայն Սահակի կողմից առաջնորդվող ֆիդայիների այս խմբի խնդիրն այն էր, որ նրանք մոլորվել էին, նրանք դեպի սահման հասցնող ճանապարհը չգիտեին: Նրանք շփոթված էին, ու ես նրանց ասացի. «Մի՛ վախեցեք, ես աստղերի միջոցով ճանապարհ գտնելու մեծ փորձ ունեմ,

Ես կգտնեմ ճանապարհը, սակայն մենք պետք է խորհուրդորդ ճանապարհով գնանք:

Սովորաբար ո'չ ճանապարհորդները, ո'չ առևտրական քարավաններն այդ ճանապարհով Իրան չեն գնում, հետևաբար մեծ է հավանականությունը, որ այդ ճանապարհով գնալով մեզ ոչ մի դահիճ չհանդիպի»:

Ես նրանց դեմքերի արտահայտություններից հասկացա, որ իմ խոսքերին չէին վստահում, որովհետև նախկինում այդ ճանապարհով երբեք Իրան չէի մեկնել, սակայն քանի որ այլ ուղեցույց գտնելու հույս չունեին, նրանք համաձայնվեցին:

Այդ օրը ողջ ցերեկն անցկացրինք նշված քարանձավում, ու հենց արևը մայր մտավ և հովիտում ու սարերում խավար տիրեց, ես դուրս եկա և հետևեցի աստղերին, դրանք, ի տարբերություն նույն ժամանակահատվածի այլ գիշերների, փայլվիլուն ու պարզ էին: Այնուհետև վերադարձա ու մտա քարանձավ, նրանց դուրս հրավիրեցի, որպեսզի քայլենք: Մեր նպատակն էր Իրանի սահման հասնել, և այսպիսով մենք առաջ գնացինք լեռնային ու խորհուրդորդ ճանապարհներով, որտեղից հավանաբար ոչ ոք մինչ այդ չէր անցել, ես

երկու եղբայրներիս ձեռքերը բռնած աստղերը դիտելով առաջ'նորդում էի խումբը:

Մենք շատ դանդաղ ու զգույշ էինք քայլում երկու պատճառներով. Նախ՝ որպեսզի որևէ ձայն չսվի և ջարդերից խույս տված հայերի որոնող մահաբեր խմբավորումների ուշադրությունը չգրավենք, երկրորդ՝ երկու վիրավորների համար, որոնց ցավերը հագիվ էին թեթևացել ու վերքերի արյունահոսությունը դադարել էր:

Մենք բացի վեց զինվորների մոտ եղած դաշույններից էլ ոչ մի զենք չունեինք, ու անգամ փրկվելու հույս չունեինք:

Մենք ծանր ու զգուշավոր քայլերով գնում էինք առաջ: Ինձ հետ գնացողները դեպի մեր ցանկացած ուղղությունը իրենց առաջնորդելու իմ ուժերի վրա վստահ չէին, որովհետև անչափահաս պատանի էի և ցամաքային ճանապարհորդությունների հետ կապված ոչ մի փորձ չունեի: Ես լսում էի, թե ինչպես խմբի հինգ անդամները շնչալով իրենց մտահոգությունն էին կիսում իրենց ղեկավար Սահակի հետ ու ասում. «Արդյո՞ք այս պատանին մեզ ճիշտ ճանապարհով է առաջնորդում: Արդյո՞ք նա իրոք աստղերի օգնությամբ կարողանում է քայլել: Նա անչափահաս է ու բավարար փորձ չունի, մենք ինչպե՞ս կարող ենք հետևել նրան», սակայն

Սահակն ասում էր նրանց. «Մենք այլընտրանք չունենք, որին կարող ենք հետևել, հույս ունենանք, որ նրան կհաջողվի մեզ մինչև սահման հասցնել... նա Մահտեսի Հարությունի թոռն է»:

Այդ օրը ողջ գիշերը քայեցինք ու նախքան արևածագը հասանք մի մեծ հովիտ, որտեղ վայրի թփերով շրջապատված մեծ ժայռերի մեջ թաքնվեցինք, ես ու եղբայրներս թաքնվեցին մի տեղում, իսկ Սահակն ու իր խումբը առանձին – առանձին տարածվեցին տարբեր ժայռերի մեջ, որպեսզի մի մասը քներ, իսկ մյուս մասը մնար ու ողջ գիշերը հսկեր տարածքը:

Մենք մեզ հետ քիչ ուտելիք ունեինք, այն հազիվ մեկ օրվա համար կհերիքեր, մի քիչ չոր հաց ու քամած մածուն, ուրիշ ոչինչ, ու հենց երեկոն իջավ և խավարը պատեց հովիտը, մենք հավաքվեցինք ու դուրս եկանք հովտից, որպեսզի վերսկսենք մեր քայլարշավը՝ շատ զգուշավոր կերպով: Սաստիկ խավարին երկար ճանապարհ գնալուց հետո զինվորներից մեկը շնջաց. «Կանգնե՛ք... կանգնե՛ք...», մենք կանգ առանք ու համախմբվեցինք, նա շնջալով ասաց. «Մենք դիակների միջով ենք գնում»:

Աստվա՛ծ իմ, մեր խոսակցի ոտքը ինչ որ բանի էր դիպել քայելիս, նա ձեռքով շոշափել էր ու հասկացել, որ մարդու

մարմին է, մի պահ թվացել էր, որ քնած մարդ է... սակայն երբ փորձել էր շոշափել դեմքը, նրա գլուխը չէր գտել, որովհետև գլխատված էր... այդ ինչ փորձանք էր, որ մեր գլխին էր եկել, ու խմբի ղեկավար Սահակը շշուկով ասաց իր զինվորներին. «Դուրս բերեք ձեր դաշույնները, որպեսզի այստեղ գիշերենք, միգուցե դիակների մոտ գենքեր կգտնենք»:

Մենք ծանր և զգուշավոր քայլերով երկար ճանապարհ վերադարձանք, և փորձում էինք մեկմեկու շոշափել, հետո նստեցինք գետնին: Երկու եղբայրներս թևերիս մեջ քնեցին, իսկ մենք արթուն մնացինք, փորձելով խավարի մեջ ինչ որ տեղից կամ ինչ որ բանից արձակվող որևէ ձայն լսել, որովհետև այդ սաստիկ խավարում ունկնդրելն ու լսելը մեր միակ միջոցն էր, որպեսզի վստահ լինեինք, որ դժվար թե ինչ որ մեկը թաքուն հետևեր կամ ձերբակալեր մեզ այնքան ժամանակ, որքան նստած էինք անձայն այդ ահագոյն գիշերում:

Եթե մեզնից որևէ մեկն ուզում էր մյուսին հետ խոսել, նա պետք է կամաց շնչար նրա ականջում, առանց աղմուկ բարձրացնելու, որպեսզի այդ ահագոյն բաց տարածքում մեր թաքնվելու վայրը չբացահայտվեր: Արևածագին, ու նախքան արևի դուրս գալը, հենց մեր աչքերը կարողացան դժվարությամբ նկատել մեր շուրջ գտնվող քարերն ու մեծ ժայռերը,

մենք ահասարսուռ և զգուշավոր քայլերով շարժվեցինք ու թաքնվեցինք այդ մեծ ժայռերի հետևում, ու մնացինք այնտեղ անշարժ մինչև արևի դուրս գալը:

Խմբի ղեկավար Սահակն իր երկու ընկերներին խնդրեց, որ հետևեն իրեն, որպեսզի տարածքն ստուգեն: Նրանք շատ զգույշ կերպով անցան ժայռերի միջով և գնացին տեսնելու, թե ինչ կարող են հայտնաբերել այդ հարթավայրում, որտեղ խավարի մեջ երեկ գիշեր մեզ առաջնորդեցին մեր ոտքերը:

Որոշ ժամանակ անց նրանք վերադարձան ու Սահակն ասաց. «Այստեղ բռնագաղթի ենթարկված հայ գաղթականների մի քարավան է եղել, քարավանը թուրք զինվորների կողմից հսկվելով շարժվել է առաջ ու հասել այստեղ: Ինձ թվում է, որ նրանք հեռուներից են եկել, կանանց ու տղամարդկանց հագուստներից հասկացա, որ նրանք քաղաքի բնակիչներ են ու ոչ գյուղացիներ, ինձ թվում է, որ հենց հասել են այս ամայի վայրը, անմիջապես նրանց սպանել ու ոչնչացրել են: Այն ինչ մեր ոտքերի տակ մեզ հանդիպեց երեկ գիշեր մեկն է տասնյակ դիակներից, որոնք այս ու այն կողմ տարտղնված են: Ինձ թվում է, որ կոտորածը տեղի է ունեցել երկու կամ ավելի օրեր առաջ, դիակների մի մասը կերել են գիշատիչները, քարավանում եղել են տղամարդիկ, կանայք և երեխաներ: Չեմ կարծում, որ նրանց մեջ կենդանի

մնացած մարդ կա: Նաև երևում է, որ տարածքն անվտանգ է, տարածքում չկա ո'չ թշնամի ու ո'չ բարեկամ»:

Սահակն իր զինվորներին հրամայեց տարածվել ու թաքնվել լեռներում, որպեսզի հերթափոխով պահակություն անեն ու հսկեն տարածքը, իսկ մյուսները քնեն ու հանգստանան, հույս ունենալով, որ գիշերը կշարունակենք քայլարշավը:

Ես ու եղբայրներս նույն ժայռի հետևում թաքնվեցինք, ու առանց որևէ բան ուտելու կամ խմելու սաստիկ հոգնածությունից շատ խորը քնեցինք: Նախքան իրիկունը վրա կհասներ մենք արթնացանք, հավաքվեցինք, որպեսզի հենց մութն ընկնի շարժվեինք առաջ, հերթապահ պահակներից մեկն եկավ ու Սահակին ասաց. «Հեռվից նկատեցի հինգ զինյալ ձիավորներ, նրանք դեպի հյուսիս գնացին ու որոշ ժամանակ անց վերադարձան նույն ճանապարհից, որով գնացել էին, հետո հեռացան»:

Սահակն ասաց. «Հավանական է, որ այս վայրում մի խումբ ջարդարարներ գտնվեն, նրանք պարզապես հետախույզներ են: Խելացի քայլ կլինի այս գիշեր չշարժվելն ու մեր տեղերում մնալը, որպեսզի մինչ վաղը հսկենք տարածքը»:

Սա բոլորի կարծիքն էր, մենք վերադարձանք մեր տեղերը, որպեսզի գիշերը նույնպես անցկացնենք այդ նույն վայրում:



Վայրի տեղանքը մեզ ինչ որ չափով ապահովություններն է, որովհետև վայրի տեղանքը, մեծ ու տարածված ժայռերը թուրք և այլ ջարդարարներին խանգարում էին մոտենալ այդ տարածքին, որովհետև նրանց ձիերի համար դժվար էր այդ խորդուբորդ ու թեք ճանապարհներով քայլել: Նախքան վերադառնալն ու մեր տեղերում հանգստանալն ու քնելը, ես դուրս բերեցի ինձ մոտ մնացած հացն ու քամած մածունը, որպեսզի մեր միջև բաժանենք, սակայն Սահակն ու իր զինվորները չուզեցին ուտել և ասացին. «Քեզ մոտ ինչ մնացել է տո՛ւր եղբայրներիդ»:

Մեզ մոտ մնացած ուտելիքը հազիվ երկու եղբայրներիս կկշտացներ: Հաջորդ օրն առավոտից մինչ իրիկուն Սահակի խմբի մեր եղբայրները մի քանի ուղիություններով հսկեցին տարածքը, սակայն ըստ երևույթին նրանցից ոչ ոք իր տեսադաշտում ոչինչ չտեսավ, նրանք ողջ ցերեկը հետաքրքրություն կամ կասկած առաջացնող ոչինչ չտեսան: Նախքան արևնամուտը, մենք հավաքվեցինք և որոշեցինք մութն իջնելուն պես շարունակել մեր ճանապարհը, և հենց մթնեց, ես երկար նայեցի աստղերին, որպեսզի ճանապարհը գտնեմ և որոշեմ մեր ուղիությունը:

Տիրող սաստիկ խավարում, որի սև ծածկոցը փոփել էր տարածքի վրա, հսկա ժայռերն այլևս անտեսանելի էին, մենք լուռ, անձայն ու զգույշ սկսեցինք քայլել:

Ես իմ մեջքին շալակել էի փոքր եղբորս՝ Արրահամին, որպեսզի կարողանայինք հատել այն տարածքը, որտեղ ամեն կողմ դիակներ էին, և որպեսզի չվախենար ու չգոռար՝ մեզ վրա որևէ մեկի ուշադրությունը հրավիրելով, մինչդեռ ղեկավար Սահակը նույն նպատակով իր մեջքին շալակել էր Պողոս եղբորս:

Մինչ մենք քայլում էինք, ես անձամբ ավելի քան հինգ դիակի հանդիպեցի, սակայն ես ինձ հանգիստ պահեցի, որպեսզի եղբայրներս չվախենային: Մինչ մենք մթին զգույշ քայլում էինք, իմ ձեռքը դիպչեց զինվորներից մեկին, ով իմ ականջին շնչաց. «Եղբորդ իջացրո՛ւ, դիակների հատվածն արդեն անցել ենք»:

Ես եղբորս իջացրեցի, բռնեցի նրա ձեռքը, ու շարունակեցինք զգույշ ու վախով քայլելը, մենք իրար էինք դիպչում, որպեսզի չհեռանանք ու սաստիկ խավարում չմոլորվենք: Մեք երկար ժամեր քայլեցինք, մինչև որ զինվորներից մեկը հեռվից, մի բարձր տեղից փայլփլող կրակի լույս նշմարեց:

Նա շնչալով ասաց Սահակին. «Բոլորս կանգ առնենք, որովհետև հավանական է, որ այս վայրում տարածված պահակներ լինեն, ովքեր կարող են մթին լուռության մեջ լսել մեր քայլերի ձայները»: Նրանցից մեկն ասաց. «Այստեղ ժայռերի եմ դիպչել, եկե՛ք»: Մենք թաքնվեցինք այդտեղ գտնվող ժայռերի միջև:

Առավոտյան հեռվից նկատեցինք մի խումբ զինյալ ջարդարարների, որոնք երեսունից երեսունհինգ հոգի էին, նրանք մի բարձր վայրում վրան էին դրել, ու հավանաբար մի քանի օր է, որ հսկում էին լեռներն ու հովիտները, որոնելով ջարդերից խույս տված հայերի քարավաններ, որպեսզի սպանեն նրանց: Տղամարդիկ հեռվից շարունակեցին լուռ հետևել նրանց, սակայն կեսօրից առաջ ջարդարարները հավաքվեցին և իրենց ձիերով շտապեցին անհայտ ուղղությամբ:

Մենք մինչև երեկո մնացինք ու հետևեցինք, սակայն այդ ջարդարարները չվերադարձան, նախքան գիշերը վրա հասնելը մեր խմբի անդամներից մեկը մեծ քանակությամբ ջուր բերեց, որը հավաքել էր ժայռերի միջից, ինչպես նաև ուտելի բույսեր, որոնց մասին տեղյակ էր, որ աճում էին այդ վայրում:

Մենք կերանք բույսերն ու խմեցինք ջուրը, և երբ գիշերը վրա հասավ, զգույշ կերպով վերսկսեցինք քայլելը հովիտների և լեռների միջով:

Այս էր մեր վիճակը նաև հաջորդող երեք օրերին, մենք թաքնվում էինք ցերեկն ու շատ դանդաղ ու զգուշավոր քայլում էինք գիշերը:

Մեր քայլարշավի ութերորդ օրը, մինչ ես աստղերի միջոցով ճանապարհը գտնելով առաջնորդում էի խումբը, մեր դիմաց մի շատ բարձր լեռ տեսանք, մենք այդ լեռն անցնելուց բացի այլընտրանք չունեինք: Իսկ լեռն անցնել նշանակում էր այն մագլցելով բարձրանալ: Մինչ մենք քննարկում էինք, թե ինչպես կարելի է անցնել լեռը, մեր խմբի անդամներից մեկն ասաց. «Մենք այս լեռը գիշերով չենք կարող մագլցել, մենք պետք է այստեղ գիշերենք, իսկ առավոտյան ցերեկվան լույսով կմագլցենք լեռը»:

Նրա հայտնած կարծիքը ճիշտ էր, որովհետև լեռան ժայռերը մեծ ու վտանգավոր էին, անհրաժեշտ էր, որ մագլցելիս հստակ տեսնեինք այն, հետևաբար մենք հովտի ժայռերի միջև թաքնված գիշերեցինք: Մակայն այդ գիշեր ամպեր կուտակվեցին, երկնքից սկսեց հորդառատ անձրև տեղալ, նման բան երբեք չէի տեսել:

Անձրեն անողորձաբար տեղում էր անմիջապես մեզ վրա, իսկ մենք ոչ մի անձրեւանոց կամ ծածկ չունեինք: Անձրեւը շարունակեց տեղալ մինչ լուսաբաց, ու ես փորձում էի պաշտպանել եղբայրներիս՝ կրծքիս տակ պահելով նրանց գլուխները, սակայն ապարդյուն:

Արեւածագին անձրեւը դադարեց, սակայն նման հորդառատ անձրեւ տեղացած գիշերից հետո լեռ մազլցելն անհնար էր, որովհետև ամեն բան սայթաքում էր դարձել:

Սակայն այնուամենայնիվ մենք փորձեցինք կամաց-կամաց դուրս գալ հովտից ու բարձրանալ լեռը: Մենք զգույշ կերպով մի քիչ մազլցում ու մի քիչ հանգստանում էինք, ես ստիպված էի շալակել եղբորս՝ Աբրահամին, որովհետև փոքր էր ու նման պայմաններում չէր հայտնվել նախկինում: Մենք ավելի քան մեկ ժամ շարունակեցինք բարձրանալ, սակայն շատ երկար ճանապարհ չէինք գնացել, որովհետև լեռը խորդուբորդ էր, իսկ ցեխը՝ սայթաքում:

Այդ պահին հովտի կողմից կրակոցների ձայներ լսեցինք, Սահակը գոռալով ասաց մեզ. «Դուք ձեզ պաշտպանե՛ք, նրանք ներքևից մեր ուղղությամբ կրակում են, հավանաբար մեզ տեսել են, արագ թաքնվե՛ք ժայռերի մեջ, արա՛գ»:

Ես արագ երկու եղբայրներիս պահեցի մեծ ժայռերի միջև, փորձեցի նայել ներքև, որպեսզի տեսնեմ, թե ինչ է

կատարվում, և տեսա ձիեր հեծած մի խումբ զինյալներ, ովքեր իրենց ձիերով մի փոքր բարձրացել էին լեռան ուղղությամբ, միաժամանակ իրենց հրացաններից կրակելով մեր ուղղությամբ, կրակոցներն անմիջապես մեր կողքով էին անցում, ու ես անմիջապես իմ երկու եղբայրների հետ շարժվեցի դեպի մեզ մոտիկ գտնվող ավելի մեծ ժայռ, և հենց թշնամու կողմից իմ գտնվելու վայրը պարզվեց, ես սկսեցի շատ ուժեղ կրակոցների ձայներ լսել, իմ ուղղությամբ շատ մեծ փամփուշտ արձակվեց, սակայն ինձ չդիպեց, այլ իմ գոտուց կախված մետաղյա բաժակի միջով անցավ: Աստվա՛ծ իմ, փամփուշտը շատ մոտ էր ինձ, և իմ կողից ընդամենը երկու մատնաչափ հեռվում, սակայն Աստված ինձ անխուսափելի մահից փրկեց:

Մենք մեր տեղերում անշարժ թաքնվեցինք, սրիկաները մեր ուղղությամբ փամփուշտների կարկուտ տեղացրին, որից հետո շարժվեցին ու հեռացան լեռից, որովհետև իրենց ձիերն այդ բարձր ու սայթաքուն լեռը մագլցելու անկարող էին»:

(Պապիկս մինչև իր կյանքի վերջին օրերը պահում էր այդ ծակված մետաղյա բաժակը):

Պապիկս շարունակեց ու ասաց.

«Հենց նրանց չարիքը հեռացավ մեզնից, մենք շարունակեցինք բարձրանալ լեռն ի վեր ու երեկոյան հասանք նրա վերին հատվածներից մեկը և ողջ գիշերն այնտեղ հանգստացանք:

Առավոտյան ցերեկով շարունակեցինք անվտանգ քայլել լեռան վրա, որովհետև անկարելի էր, որ այդ ջարդարարները կարողանային խորդուբորդ լեռը մազլցել, հետևաբար արագ-արագ քայլեցինք ու երկրորդ օրը նույնպես գիշերեցինք լեռան վրա, իսկ նախքան արևածագը սկսեցինք զգույշ կերպով իջնել սարից, որպեսզի շարունակենք մեր ճանապարհը, մենք իջանք մի մեծ հովիտ, որտեղ ջրի մի քանի աղբյուրներ կային:

Հովիտը լիքն էր անգեն հայ զոհերի դիակներով, ովքեր ըստ երևույթին դուրս էին եկել իրենց քաղաքներից ու գյուղերից և երկար ճանապարհով քշվել բերվել էին այստեղ, որպեսզի բնաջնջվեն: Մեր խմբի ղեկավար Սահակն ասաց. «Այս մարդիկ փամփուշտով չեն սպանվել, այլ ջարդարար դահիճները մի խումբ քարավանների հավաքել են հովտի բաց տարածքում, նրանց մի քանի օր առանց ուտելիքի պահել են կալանքի տակ, և նրանց մի մասը սաստիկ սովից մահացել է, իսկ ուրիշներ թունավոր խոտեր են կերել ու մահացել,

որովհետև դիակներից մի քանիսի վրա կրակոցների հետքեր չկան»:

Կանանց դիակների մեծ մասը մերկ էր, նրանք ենթարկվել էին բռնաբարության, թալանել էին նրանց հագուստներն ու զարդերը, մարդկանց քանակն ահռելի մեծ էր, մենք հանդիպեցինք տղամարդկանց, կանանց, երեխաների և ծերերի: Մենք չկարողացանք այնտեղ հանգստանալ դիակների տեսարանների ու փտած հոտերի պատճառով, որ բարձրանալով տարածվում էր ամբողջ հովտով մեկ, մենք հազիվ կարողացանք մեր ամանների մեջ ջուր լցնել այս աղբյուրներից և արագ շարժվեցինք առաջ:

Մենք լքեցինք հովիտը, որ մեր հարյուրավոր ազգակիցների համար գերեզման էր դարձել: Հենց դուրս եկանք հովտից, մի ընդարձակ հարթավայր պարզվեց մեր առաջ, բաց մարգեր:

Սահակը մեզ հրամայեց սպասել, չմտնել մարգեր, որովհետև այնտեղ մեզ նկատելը հեշտ կլիներ: Մենք ստիպված էինք ողջ ցերեկը թաքնվել բարձր թփերի միջև: Գիշերը շարունակեցինք քայլել, որպեսզի անցնեինք այդ բացօթյա ընդարձակ մարգերը: Ժամեր շարունակ մթին քայլելուց հետո մտանք ականջ տվեցինք ու ջրերի ձայներ լսեցինք, կարծես մեծ գետ լիներ, և աստղերով առաջնորդվելով ես նրանց բերեցի մի մեծ գետի ափ...»:



### *Խիզախ համրը.*

Մինչ ես հետաքրքրությամբ լսում էի պապիկիս, որպեսզի ծանոթանամ իր փախչելու և փրկվելու պատմությանը, պապիկս շարունակեց իր պատմությունն ու ասաց. «Մինչ մթին մեր ճանապարհն էինք փորձում գտնել, մենք կանգ առանք մի այգու ցանկապատի մոտ: Այո', այդտեղ այգի էր, որ բաժանում էր մեր ու գետի միջև:

Սահակի ընկերներն ասացին. «Եկե՛ք կանգ առնենք այստեղ, այս այգին տեր ու հսկող շներ կունենա, և հավանաբար թաքնված զինյալներ կլինեն այստեղ»: Սակայն այնուամենայնիվ, քանի որ այլընտրանք չունեինք, մենք ստիպված էինք մտնել ու թաքնվել այգու անկյուններից մեկում, մենք խիտ ծառերի միջև գետինը փռեցինք, ու այնքան հոգնած ու սոված էինք, որ խորը քնեցինք:

Կեսօրից առաջ Սահակը խնդրեց եղբորս՝ Պողոսին զգույշ գնալ և ուտելու բան գտնել, որովհետև նա փոքր էր, ու նրան ոչ ոք չէր նկատի, նաև խնդրեց, որ տարածքն ստուգի: Չնայած որ նա վախենում էր, սակայն սոված լինելու պատճառով գնաց, և մինչ մենք թաքնված անհամբեր ու մտահոգված սպասում էինք եղբորս վերադարձը, ընկերներից մեկն ասաց. «Ահա', Պողոսը գալիս է...», նա վերադարձավ ու իր գրկում փոքրիկ խնձորներ էին, նա

ասաց. «Տարածքն ամբողջությամբ ամայի է»: Մենք զգույշ կերպով դուրս եկանք, ծառերի տակ թափված հին խնձորներ ու նաև մի քանի հատ չորացած նուռ գտանք: Մենք այնքան սոված էինք, որ անմիջապես հարձակվեցինք այդ հին ու չորացած մրգերի վրա ու կերանք: Այնուհետև մենք միասին շտապեցինք զգույշ կերպով ստուգել տարածքը, նրանք այգու մյուս կողմում հայտնաբերեցին ավելի քան քառասուն անգն մարդու դիակ, տղամարդկանց սպանել էին նրանց ձեռքերը մեջքի հետևում կապված վիճակում, մինչդեռ կանանց բռնաբարել ու դանակահարելով սպանել էին: Նրանց կողքը գետնին փռված վիրավոր ձի կար, որ համարյա սատկում էր: Մեր եղբայրներն անմիջապես մորթեցին ձին, նրա միսը դանակներով փոքր կտորների բաժանեցին և մեզանից յուրաքանչյուրին մի բաժին տվեցին, որպեսզի ուտենք:

Մենք միսը հում վիճակում կերանք, ինչը անսովոր էր մեզ համար, սակայն մենք վախենում էինք, որ եթե խորովելու համար կրակ վառենք, ինչ որ մեկը կնկատի մեզ: Մենք վերջին տաս օրում առաջին անգամ էր, որ կուշտ ուտում էինք:

Սահակի ընկեր մեր եղբայրներն ասացին. «Դիակների տեսքից պարզ է, որ այս ջարդը նոր է տեղի ունեցել, դրանք դեռ չեն փտել, հավանաբար նրանք երեկ են սպանվել, ու չի

բացառվում, որ նույն ջարդարարները դեռ տարածքում լինեն ու հետևեն անցորդներին, որպեսզի ձերբակալեն ու սպանեն նրանց, հետևաբար մենք պետք է գիշերով շարունակենք մեր ճանապարհը, քանի որ գիշերը մեզ կթաքցնի նրանց աչքերից»:

Ես նրանց ասացի. «Ըստ ճանապարհի հետ կապված իմ տեղեկությունների, մենք պետք է անցնենք այս գետը, որն անցնում է այգու կողքով», նրանք ասացին. «Ինչպե՞ս կարող ենք անցնել այն, ջրերը վարար են, ու մենք չգիտենք դրա խորությունը, իսկ մեզանից ոչ ոք լողալ չգիտի», խմբի ղեկավար Սահակն ասաց.

«Մենք ցերեկով պետք է հետևենք գետի մյուս ափին, այնտեղ մյուս կողմում մեծ այգի կա»:

Մենք գետի եզերքին գտնվող այգու անկյունում թաքնված մնացինք և հետևեցինք մյուս այգուն, որ գետի այն ափին էր, որպեսզի վստահ լինենք, որ այնտեղ մարդիկ չկան:

Կեսօրին մեր տղամարդկանցից մի քանիսը շարժվեցին, որպեսզի ինչ որ բան գտնեն, որից կարող ենք կառչել գետը անցնելու համար, սակայն մեզանից ոչ ոք լողալ չգիտեր:

Մինչ նրանք այգում այս ու այն կողմ նետված կոտրատված ծառերի մնացորդներից փոքրիկ լաստ էին պատրաստում, ես մյուս կողմում հետևում էի այգու դիմացի ընդարձակ

հովտին: Այդ պահին հեռվից նկատեցի երկու ձիավոր տղամարդկանց, ովքեր դանդաղ ընդանում էին մեծ մարգերի միջով:

Ես արագ իջա ծառի ճյուղերի միջով, որտեղ թաքնված հետևում էի հովտին: Արագ ու հոգնած վիճակում հասա իմ խմբի մոտ, շունչս կտրվում էր, հագիվ էի կարողանում խոսել, ու ասացի նրանց. «Այնտեղ դեպի մեզ մոտեցող մարդիկ կան»: Մարտիկներից երկուսը վազեցին, բերեցին իրենց դաշույններն ու գնացին այգու այն կողմը, որպեսզի մոտիկից տեսնեն, թե ովքեր են առաջանում մեր ուղղությամբ, մինչդեռ մենք պահեցինք լաստն ու երկու եղբայրներիս և մյուսների հետ սարսափած թաքնվեցինք:

Սակայն զարմացանք, երբ մեր ընկերները երկու անձանոթների ուղեկցությամբ վերադարձան, ու պարզվեց, որ նրանք այգու տերերն են, նրանք մի տղամարդ ու իր համր որդին էին:

Նրանք եկել էին իրենց այգին ստուգելու: Նրանք համարյա անուշադրության էին մատնել այգին ու չէին զբաղվել դրա խնամքով, տարածքում անվտանգության խախտվածության պատճառով, նրանք տեղյակ էին հայերի ցեղասպանությունից, տղամարդն ասաց. «Դուք պետք է անցնեք գետը»:

Մենք նրա հետ քուրդերենով զրուցեցինք ու ասացինք նրան. «Մենք պատրաստել ենք մի լաստ, որպեսզի մեզ մյուս ավի տեղափոխի»: Տղամարդը ժպտաց ու ասաց. «Լա՛ստ, դուք տեսնո՞ւմ եք հոսքի ուժգնությունը: Լաստը ձեզ կտեղափոխի շատ հեռու այլ քաղաքների խորքը, և կամ կխորտակվի ու դուք էլ կխորտակվեք իր հետ»: Սահակը նրան հարց տվեց. «Ուրեմն ինչպե՞ս կարող ենք անցնել գետը», տարեց տղամարդը մի պահ լռեց, ապա ասաց. «Ձեզ իմ որդին կուղեկցի մինչև գետի մյուս ափը, նա երկու ձիերով ձեզ կտեղափոխի ու կվերադառնա:

Իմ որդին համր է, նա չի կարող խոսել»: (Այդ տղամարդը սաստիկ զայրացած ու նեղացած էր երկրի վարած քաղաքականությունից և անվտանգության բացակայությունից, նրա ավագ որդին անհայտ պայմաններում թուրք իրավապահների կողմից սպանվել էր, հետևաբար նա համարում էր, որ մեզ օգնելով վրեժ լուծած կլինեք թուրքերից):

Նրանք իրենց մոտ եղած համեստ ուտելիքը դրեցին մեր առաջ, և մենք միասին կերանք ու սպասեցինք մինչև գիշերը վրա հասներ, երբ մթնեց, տղամարդն ինձ խնդրեց երկու եղբայրներից նստեցնել ձիերից մեկին և պարանով կապել ձիու թամբից:

Ես նրանց բերանին փաթաթեցի կտոր դրեցի, որպեսզի գետն անցնելիս նրանցից ձայն չարձակվի: Մեր խմբի մյուս անդամները նստեցին ու բռնվեցին երկու ձիերից, իսկ ես բռնեցի եղբայրներիս, համր տղան ձիերի սանձը բռնած առաջացավ ու մտավ գետի ջրերի մեջ:

Այգու տիրոջ որդին հմուտ լողորդ էր, նա փոքր տարիքից ծանոթ էր այդ գետին, նա իր գլխի մագերի քանակով անգամներ կտրել էր այդ գետը գնալ ու գալով:

Մի պահ հրաժեշտ տվեցինք տղամարդուն ու շատ շնորհակալ եղանք նրան: Որդին մտավ գետն ու նրան հետևեցին երկու ձիերը, մենք աղոթելով ու Աստծուն դիմելով մտանք գետի սառնորակ ջրերի մեջ:

Որքան անողորմ էին այդ ջրերը, նրանց հոսքը ստիպում էր ինձ մտածել, թե մի խումբ տղամարդիկ փորձում են ինձ հրել ու շեղել մեր ճանապարհից, ես հագիվ էի կարողանում բռնվել ձիու սանձից ու միաժամանակ զրուցում էի եղբայրներից հետո, որպեսզի լաց չլինեն:

Ջուրն այնքան սառն էր, որ մեր վերջույթներն անզգայացել էին: Սա իմ կյանքում առաջին անգամն էր, որ մտնում էի գետի ջրերի մեջ: Մենք առաջացանք գետի ջրերի մեջ, ու հոսքն այնքան սարսափելի և ուժգին էր, որ ուզում էինք գոռալ, դեպի մյուս ափ հասցնող ճանապարհն անվերջ էր

թվում: Այն անվերջ էր այս սաստիկ մթության մեջ: Առջևում երիտասարդ տղան լողում էր, իսկ երկու ձիերը պայքարում էին նրա հետևում առաջացած ալիքների դեմ, մենք կառչել էինք նրանց, ու վերջապես մեր ոտքերը դիպչեցին գետի մյուս ափին: Քանի որ երիտասարդ տղան չէր կարողանում խոսել, ես հագիվ հավեցի նրան, համբուրեցի նրա գլուխն ու ասացի. «Ծնորհակալ եմ, որ մեզ փրկեցիր»:

Ես հագիվ էի եղբայրներիս իջեցրել ձիուց, երբ երիտասարդը նստեց ձիերից մեկին, բռնեց մյուս ձիու սանձն ու անմիջապես մտավ գետի ջրերի մեջ, որպեսզի հանգիստ ու զգույշ կերպով վերադառնա իր հոր մոտ:

Ես շալակեցի եղբայրներիս ու կանգնեցրի գետեզրին, այնուհետև լուռ մտանք երկրորդ այգին, թփերի միջով միմյան բոլորով առաջացանք ու տարբեր վայրերում թաքնվեցինք, որպեսզի մեզ ոչ ոք չսի:

Ես հանեցի իմ ու եղբայրներիս թաց ու մաշված հագուստները, դրանք կախեցինք թփերի վրա, որպեսզի չորանան, ու մենք պառկեցինք գետնին: Սաստիկ ցուրտ էր, ու մենք բոլորս մերկ էինք:

Ես գրկել էի եղբայրներիս, որպեսզի իմ մարմնով տաքացնեմ նրանց, սակայն մարմինս սառած դիակի նման էր, ոչ մի ջերմություն: Մենք պարտավոր էինք համբերել ու ողջ գիշերը

մինչ առավոտ սպասել: Նախքան լուսաբացը ամպերը կուտակվեցին մեր գլխավերևում, ու հորդառատ անձրև տեղաց, իսկ մենք մերկ էինք: Աստված իմ, ի՞նչ անենք, ի՞նչ անեմ, եղբայրներս ցրտից կմահանան, ու հավանաբար ես նրանցից շուտ կմահանամ: Ի՞նչ անեմ, չեմ կարող կրակ վառել, իսկ ինչպե՞ս կարող ենք կրակ վառել, երբ մեր շուրջն ամեն բան թաց է: Մենք ստիպված էինք հագնել մեր թաց հագուստները, որպեսզի պաշտպանվեինք անձրևից, իսկ անձրևն երկար ժամեր շարունակեց տեղալ, այնուհետև դադարեց, ամպերը հեռացան, ու արևը դուրս եկավ: Մենք կրկին հավաքվեցինք ու իրար տեսանք, սակայն զարմացանք, երբ խմբի ղեկավար Սահակը չգտավ իր տղաներից մեկին, որի անունը Թռչուն էր:

Մենք շնչալով իրար մեջ հետաքրքրվեցինք. «Որտե՞ղ է Թռչունը»: Թռչունը վեց ֆիդայի մարտիկներից մեկն էր, որոնց երկու եղբայրներիս հետ առաջնորդում էի, նա վիրավոր էր, ու նրա վերքերը հազիվ էին բուժվել.. Որտե՞ղ է նա, ո՞ւր է Թռչունը: Սահակը տխուր ու շփոթված ասաց. «Ա՛խ, Աստված իմ, անկասկած, որ նա ընկել է ձիուց, ու գետի հոսքի հետ գիշերով անհետացել, երբ մենք անցնում էինք գետը, նա չի գոռացել ու օգնություն չի խնդրել, վախենալով,



որ ինչ որ մեկն իր ձայնից կնկատի մեզ գետն անցնելիս, մենք կորցրել ենք մեր եղբայր ու ընկեր Թռչունին»:

Տխրությունը պատեց մեզ, եղբայրս Պողոսն ու եղբայրս Աբրահամը լաց եղան Թռչուննի համար, որովհետև նրանց քնքշանքով էր վերաբերվում ու հետևում էր նրանց, նրանց նկատմամբ սեր ու հոգատարություն էր ցուցաբերում, կարծես երեխաներ լինեին:

Ես շտապեցի կտրել եղբայրներիս ձայնն ու ասացի նրանց. «Երբ փրկվենք, բոլորով կնստենք ու լաց կլինենք:

Այո', շատ կլացենք, մենք շատ բան ունենք հիշելու և դրանց համար լաց լինելու, իսկ երիտասարդ Փիղայի Թռչունը, ով իր կյանքը զոհեց հանուն մեզ, նրա համար նույնպես լաց ենք լինելու, և աղոթելու ենք նրա համար, որպեսզի հիշատակն անթառամ մնա»:

Մոտ երկու ժամ անց կրկին սկսեց հորդառատ անձրև տեղալ, մենք երկար սպասեցինք, որպեսզի անձրևը դադարի, սակայն ապարդյուն: Անձրևը շարունակվեց ողջ գիշերն ու ցերեկը, մենք ցրտից դողում էինք այգու թփերի միջև:

Նախքան հաջորդ օրվան արևածագը անձրևը դադարեց, պայծառ արևը շողաց, ու մենք վերջապես ջերմություն զգացինք, մեր պատառոտված հագուստները հանեցինք, կախեցինք թփերից ու սպասեցինք մինչև ամբողջությամբ

չորացան: Նախքան հետմիջօրեն հագանք մեր հագուստներն, ու մեր եղբայր զինվորներից երկուսը գնացին այգին ստուգելու, նրանք վերադարձան ու իրենց հետ բերեցին ծառերից կախված չորացած ու հին մրգեր, սակայն դա մեր միակ միջոցն էր կշտանալու համար: Երեկոյան, նախքան արևամուտը, մենք շարժվեցինք դեպի մեծ այգու մյուս կողմը: Ես հետևեցի աստղերին ու որոշեցի մեր ուղղությունը, մարտիկներից երկուսը բարձրացան ընկույզի մի մեծ ծառի վրա, որպեսզի հետևեն մեր ուղևորվելիք ճանապարհին:

Գիշերն առիթ էր թշնամիներին հայտնաբերելու համար, սաստիկ ցրտի պատճառով նրանք անկասկած կրակ կվառեին, որպեսզի տաքանան, իսկ կրակի լույսը կբացահայտեր նրանց ճամբարների ու գտնվելու վայրերը: Որոշ ժամանակ անց նրանք իջան ու ասացին. «Կրակի լույսեր կան, սակայն մեր ուղևորվելիք ճանապարհից հեռու են, եկե՛ք շարժվենք»:

մենք մթության մեջ սկսեցինք լուռ ու նաև արագ քայլել: Խավարն այնքան սաստիկ էր, որ ես իմ ձեռքերը չէի տեսնում, և երբեք եղբայրներիս ձեռքերը բաց չէի թողնում, որպեսզի մթության մեջ նրանց չկորցնեմ:

Մոտավորապես մինչև կեսգիշեր կամ ավելի քայլեցինք ընդարձակ հովտում, հեռվից լսեցինք մանուկների լացի ձայներ:

Այդ ձայները բարձրանում ու իջնում էին, մերթ ընդ մերթ գոռոցի ձայն և ապա լռություն էր տիրում, Սահակը մեր ականջների մեջ շշնջաց. «Մենք մոտենում ենք մի քարավանի, այն կա՛մ մեզ նման փախուստի դիմած փրկվածների քարավան է, կա՛մ թուրք դահիճների կողմից հսկվող կալանավորվածների քարավան է, որոնց տանում են սպանելու և բնաջնջելու, մենք պետք է զգույշ լինենք»:

Նրանցից մեկն ասաց. «Եթե նրանց հետ պահակներ լինեին, ապա ինչո՞ւ համար կրակ չեն վառում, միթե վախենո՞ւմ են», Սահակն ասաց. «Երբեմն նրանք վախենում են, որ հայ ֆիդայիների կողմից նկատվեն ու ոչնչացվեն, մանավանդ, որ նրանք թվով քիչ են»: Ֆիդայիներից մեկն ասաց. «Ձայները հյուսիսից էին գալիս, եկեք շարժվենք դեպի հարավ, որպեսզի հնարավորինս հեռանանք նրանցից, այստեղ հարթավայր է, և եթե զինվորներ կան այստեղ, ապա արևածագին նրանք մեզ կգտնեն ու կսպանեն»: Մենք սարսափած ու լուռ շարժվեցինք դեպի ձախ, հնարավորինս հեռանալով մեր լսած ձայների աղբյուրից:

Մենք ոչ այնքան երկար ճանապարհ գնացինք, մինչև որ դիպչեցինք մեծ ժայռերի, այնտեղ ժայռերի միջև ապաստան գտանք: Ես երկու եղբայրներիս հետ մի մեծ ժայռ գտանք, որի հետևը թաքնվեցինք, մինչդեռ մյուսները նույնպես տարածվեցին ու նույն բանն արեցին: Մենք չկարողացանք քնել, որովհետև զգում էինք, որ թուրքերը մեզնից շատ մոտիկ էին գտնվում: Մենք ժամանակ առ ժամանակ լսում էինք երեխաների լացի և կանանց ճիչերի ձայներ, որոնք բարձրանում ու անհետանում էին, որից հետո սարսափելի լռություն էր տիրում... Ի՞նչ էր կատարվում արդյոք:

Մենք սարսափահար ու վախեցած վիճակում մնացինք այնտեղ, մեր վախը շատ մեծ էր, որովհետև անգեն էինք: Հինգ մարտիկները զենքեր չունեին, Սահակն ասել էր, որ Մոկս քաղաքի մոտակայքում ծուղակն էին ընկել և զինամթերքն սպառվելուց հետո ստիպված էին եղել մի կողմ նետել զենքերն ու թուրքերի դեմ դաշույններով կռվել, այնուհետև ստիպված շալակել էին իրենց վիրավոր եղբայրներին ու հեռացել, որպեսզի փրկեն նրանց: Այդ պատճառով մենք ողջ գիշերը մնացինք ու սպասեցինք լուսաբացին:

Առավոտյան նկատեցինք, որ ժայռերի մեջ մի բարձր վայրում ենք: Գիշերով մեզ այստեղ էին առաջնորդել մեր ոտքերը: Սակայն մեր դիմաց բացի հովիտներից ու բլուրներից այլ բան

չէինք տեսնում: Մինչ մենք լուռ տարածքն էինք ստուգում, ամայի լռությունն ընդհատող կրակոցների ձայներ լսեցինք: Սահակը իր զինվոր ընկերներից մեկին հրամայեց ժայռերի միջով լուռ առաջանալ ու մի քիչ հեռու գնալով ստուգել տարածքը: Չորս մարտիկներից մեկը գնաց ու մի պահ հետո արագ վերադարձավ, նա հագիվ էր կարողանում խոսել ու ասաց. «Եղբայրներ'ր, մենք երեկ գիշեր անխուսափելի մահից ենք փրկվել», նրա ընկերները նրան հարց տվեցին. «Ինչո՞ւ, ինչպե՞ս», նա ասաց. «Մեզնից ոչ հեռու տարածքում հայ ընտանիքների քարավան կա, որոնք շրջապատված են տասնյակ թուրք զինյալ ձիավորներով, ի՞նչ անենք»:

Խմբի ղեկավար Սահակն ասաց. «Տա'ր ինձ այնտեղ, որպեսզի իմ աչքերով տեսնեմ, ու արագ վերադառնամ»:  
Նրանք միասին գնացին: Մի փոքր ուշանալուց հետո վերադարձան, մի քիչ հանգստացան... այնուհետև Սահակն ասաց. «Դա մեծ քարավան է, մոտ վեց-յոթ հարյուր կին, տղամարդ, երեխա ու այլ անձինք կան, նրանց շուրջ ավելի քան երկու հարյուր զինյալ կա, մենք տեսանք խմբերով կանանց ու երեխաների, ու հասկացանք, որ յուրաքանչյուր լացող երեխայի դանակահարում են, որպեսզի ձայնը կտրեն:

Այդ պատճառով էր, որ երեկ գիշեր խավարի մեջ լուռ էինք այդ ձայները, որոնք ճեղքում էին գիշերվա լռությունն ու

դադարում էին: Երևի նրանք աղջիկներից ոմանց էլ բռնաբարած ու սպանած կլինեն, և ինչպես ասացի՝ նրանք կրակ չէին վառել, որպեսզի հայ ֆիդայիները նրանց գտնվելու վայրը չհայտնաբերեին, երևի նրանք երկար չեն մնա...» Սահակն ու նրա հետ եղած իր ընկերը կրկին հեռացան քարավանին հետևելու, իսկ մենք մնացինք ժայռերի միջև թաքնված:

Մի քանի ժամ անց նրանք կրկին վերադարձան ու ասացին, որ զինվորները քարավանում կենդանի մնացածներին քշել են ու սկսել են հեռանալ մեր ուղևորվելիք ճանապարհի հակառակ ուղղությամբ, հավանաբար նրանք դեպի գետն էին գնում, որտեղից մենք եկանք, մենք մնացինք ու սպասեցինք մինչ մթնելը: Հենց մութն ընկավ, մենք շարունակեցինք քայլել:

Ողջ գիշերը քայլեցինք ու ցերեկը մի բարձր լեռան ժայռերի մեջ անցկացրինք, գիշերը իջանք սարից ու շարունակեցինք ողջ գիշերը քայլել, մինչև որ մեր ուժերն սպառվեցին, ու նախքան արևածագը մենք հասանք ծառաշատ մի ձոր, այնտեղ թաքնվեցինք թփերի մեջ, որոնք այդ ընդարձակ վայրով մեկ տարածված էին:

Ես հոգնած ու սոված պառկեցի մեջքիս վրա, գրկումս երկու եղբայրներս էին, ովքեր սաստիկ հոգնածությունից ու սովից

հագիվ էին կարողանում շարժվել, ես նայեցի աստղերին, որոնք առավոտյան լույսի հետ անհետանում էին: Ես աղոթեցի ու խնդրեցի Աստծուն, որպեսզի ինձ ու եղբայրներիս այս թշվառ ու ցավալի վիճակից փրկի:

Ամեն բան իմ համար երազ էր թվում, հիշում էի անցած օրերը, թե ինչպես էի սարերում ու արոտավայրերում պառկում մեջքիս վրա ու դիտում աստղերը, մինչ հսկում էի ոչխարների հոտերն ու վայելում նրանց ձայնը:

Հիշեցի իմ մեծ ընտանիքը, որ բաղկացած էր տասնչորս անձից, իսկ հիմա մնացել էինք ես ու երկու սոված փոքրիկ եղբայրներս միայն, ես ասում էի. «Աստվա՛ծ իմ, արդյոք կփրկվե՞նք, թե՛ մեր ընտանիքի մյուս անդամների ճակատագրին ենք արժանանալու»: Մենք ցերեկն ամբողջ մնացինք այնտեղ թաքնված, իսկ գիշերը շարունակեցինք քայլել, ես աստղերին նայելով առաջնորդում էի խումբը: Մենք ողջ գիշերը քայլեցինք, և նախքան արևածագը սկսեցինք ամայի տարածքում արձագանքող ջրերի ուժգին ձայներ լսել, մենք քայլեցինք այդ ձայնի ուղղությամբ: Հետո որքան մոտենում էինք, այնքան ուրիշ ձայներ էլ էինք սկսում լսել, ինչպիսին երեխաների լացի ձայնն է:

Մենք լսում էինք նաև սարսափելի ճիչեր, որոնք հեռվից էին գալիս:

Սահակն ասաց մեզ. «Ավելի առաջ չենք գնա, եկե՛ք թաքնվենք ինչ որ տեղում»: Մենք շոշափեցինք մեր շուրջ եղած ժայռերն ու մեծ ժայռեր գտանք, որոնք մեջ թաքնվեցինք, ու դրանց միջև տարածվելով մնացինք մինչ լուսաբաց:

Արևածագի հետ ճիչերն ավելի ու ավելի բարձրացան, Սահակն իր ընկերներից մեկին ուղարկեց, որպեսզի ստուգի տարածքը: Նա գնաց ու արագ վերադարձավ և ասաց. «Մենք կարծես ճիշտ ուղղությամբ էինք գնում, մինչև հասանք մեր նպատակակետին», Սահակը զարմացած ասաց. «Ի՞նչ ես ասում», և մեր ընկերն ասաց. «Այո՛, կարծես այս բարձր բլրի մյուս կողմը մեր անցնելու վերջնակետն է:

Դա այն կետն է, որտեղից անցնելով մեր վրա թշնամիների ազդեցությունն ու հետապնդումը կնվազի»:

Սահակին ասաց. «Եղբա՛յրս, դու պետք է գաս ու անձամբ ստուգես տարածքը, այդպես ավելի լավ կլինի»: Իսմբի ղեկավար Սահակն անմիջապես գնաց նրա հետ, և մոտ մեկ ժամ անց նրանք վերադարձան ու կարծես ինչ որ բանից ցնցված էին: Նրանք հուսահատված էին, շփոթված, ցնցված: Ես չգիտեմ, թե ինչպես կարելի է բացատրել նրանց վիճակն այդ պահին:



Մյուսներն անմիջապես մոտեցան նրանց ու ասացին. «Ի՞նչ է պատահել, ի՞նչ կա այնտեղ, ի՞նչ եք տեսել»:

Նրանք մեզ ասացին. «Թողե՛ք երեխաներին այստեղ ու գնացե՛ք, ձեր աչքերով տեսե՛ք...»

Ես եղբայրներիս թողեցի նրանց մոտ ու մյուսների հետ ժայռերի միջով առաջացանք, զգույշ գնացինք, մինչև որ հասանք բարձր ու մեծ բլրի մյուս կողմը, զգույշ նայեցինք բարձր բլրից ներքև, ու պարզվեց, որ այն մեծ դժոխքի դուռ է, կամ պատերազմի դաշտ, որտեղ կոտորած է տեղի ունեցել... այդ ի՞նչ սարսափելի տեսարան էր...

Բարձր բլրի ներքևում տեսա հազարավոր դիակներ, որոնք ամեն թիզ տարածված էին, նրանց մեջ կային անզեն քաղաքացիներ, նահատակված ֆիդայիներ, ովքեր անզեն քաղաքացիներին պաշտպանում էին թուրքերի հարձակումներից:

Որտե՞ղ էր այդ վայրը:

Այդ վայրը գտնվում էր երկու բարձր ու մեծ բլուրների միջև, որոնք շարունակվում էին մինչև հովտի վերջը, ավելի ուշ, կոտորածներից հետո, այն հայերի կողմից անվանվեց՝ (Կոտորած Գալի, այսինքն՝ Կոտորածների հովիտ, կամ Մահվան հովիտ):

Այն լայն հովիտ էր, որտեղից հեղեղի ջրերն էին հոսում (հավանաբար միայն այդ եղանակին): Սակայն դեպի Իրանյան սահման դուրս գալու վերջին ջրային անցքն էր, հետևաբար Վանի քաղաքներից և գյուղերից, ինչպես նաև մերձակա քաղաքներից թուրքերի կոտորածներից փրկված հայերի քարավանների մեծ մասը ուղևորվել էր դեպի այդ անցքը, և հավանաբար տարվա մյուս եղանակներին այն պարզապես առվակ էր, որը հեշտությամբ կարելի էր անցնել:

Սակայն պատահականությունն այնպես դասավորվեց, որ այդ եղանակին նշված հովիտը կատաղած էր ու արյան և մահվան ծարավ, նրա ջրերը փամփուշտների, իսկ ալիքները կատաղած ցլի նման էին, ջրի մակարդակը շատ բարձր էր, և այն որպես երկրորդ թշնամի կանգնեց խեղճ փրկվածների առաջ:

Թուրք և քուրդ ավագակախմբերը ժամանել էին այդ անցքի մոտ, որովհետև գիտեին, որ այն միակ հարմար ելքն է փրկված հայերի փախուստի համար, հետևաբար առաջին թշնամին գենքով կանգնած էր նրանց հետևում, իսկ երկրորդ թշնամին՝ այս հովտի ջրերը՝ նրանց առջևում:

Որտե՞ղ էր փախուստի ճամփան... Օ՛հ խեղճեր»:

Պապիկս շարունակեց պատմել ու ասաց.

«Փրկված ու փախուստի դիմած հայերի քարավաններին ուղեկցող զինյալ հայ ֆիդայիների խմբերը հետևի մասում կանգնած էին, որպեսզի դիմադրեն թշնամուն և հնարավորինս խանգարեն նրա առաջխաղացումը դեպի անգլեն քաղաքացիներ, մինչև որ մարդիկ կանցնեին այդ հովիտը, սակայն վնասները մեծ էին թշնամու կողմից տեղացող առատ փամփուշտների և այդ մահաբեր հովտի պատճառով, որ խանգարում էր մարդկանց առաջխաղացումն ու մյուս ավի հասնելը:

Իրենց տներից փախած ու հոգնությունից սպառված հայ քաղաքացիների քարավանների վրա ոչ միայն թուրքերն էին հարձակվում, այլ այդ անիծված հովիտը նույնպես նրանց թշնամին էր, որ կանգնած էր փրկվածների ճանապարհին, և նրանք, ովքեր փրկվում էին թուրքերի և քուրդերի փամփուշտներից, զոհվում էին այդ մահաբեր հովտի ջրերում: Հետևաբար ո՞ւմ դեմ պետք է պայքարեին քաջարի հայ ֆիդայիները. Մարդկայի՞ն թշնամիների դեմ, ովքեր անողորմ էին, թե՞ բնության դեմ, որ չէր խղճում:

Այդ սարսափելի տեսարանները հեռվից, բլրի վերևից տեսնելուց հետո մենք վերադարձանք այնտեղ, որտեղ մնացել էին մյուսները, և իրար ասացինք. «Ի՞նչ ենք անելու»:

Սահակն ասաց. «Հավանաբար այլ քարավաններ կհասնեն, ու հավանական է նաև, որ այլ պաշտպանված քարավաններ չհասնեն, և այդպիսով մենք կլինենք այստեղ վերջին հասնողները: Մենք պետք է ամեն գնով անցնենք այս հովտի ջրերը»:

Մեր ընկերներից մեկը, ում անունը Ավետիս էր, ասաց. «Անկարելի է, որ կարողանանք անցնել այս ջրերը, չե՞ս լսում դրա կատաղած ալիքների ու դրանց իրար բախվելու ձայները:

Դրա ձայնը մինչև այստեղ է հասնում... Մենք այս ողջ տարածքն ապահով անցել ենք ու մեր քայլելու ժամանակ փրկվել բոլոր վտանգներից, որպեսզի գանք ու մենք մեզ այս հովտում մահվան գի՞րկը նետենք, ու մահանանք նման այն հազարավոր դիակների՝ որոնք կախված են դրա ափերից, իսկ հազարավորներ քարշ են տրվել նրա հոսքի մեջ:

Ո՛չ, դա խենթություն և ինքնասպանություն կլինի, ես անձամբ նախընտրում եմ իմ կրծքով թշնամու փամփուշտը հետ պահելով մեռնելը, քան ինքնասպան լինելը»:

Այս վայրը նման էր մեր առաջ փակված դռան, այնտեղից ացնելն անհնար էր, անգամ փորձելն անխուսափելի մահ էր։ Խմբի մեկ այլ անդամ, ում անունը կարծեմ Սամվել էր, ասաց. «Այս հովիտն առավել վտանգավոր կլինի, եթե մենք այն անցնենք գիշերով, եթե մենք պետք է անցնենք այն, ուրեմն դա պետք է լինի ցերեկով»։ Նրա ընկերը՝ Դանիելը պատասխանեց. «Այո՛, եթե պետք է անցնենք այն, ապա պետք է ջուր մտնենք ցերեկով, դա ավելի ճիշտ կլինի, չնայած, որ փրկվելու հույսեր չունենք»։

Այնուհետև բոլորը լռեցին, Սահակը քնքշանքով վեր կացավ, ինձ մի խմբից առանձնացրեց ու ասաց. «Հարություն՛ն, դու մեծ ես, հավանական է, որ քեզ հաջողվի անցնել այս հովտի ջրերը, սակայն եղբայրների փոքր են, նրանք փրկվելու հույսեր չունեն, ավելի խելացի քայլ կլինի նրանց այնտեղ՝ երեխաների հետ թողնելը, հնարավոր է, որ այնտեղ նրանց փրկություն վիճակվի, հնարավոր է նաև, որ ինչ որ մեկը գա ու իր հետ տանի նրանց, իսկ եթե ջուր մտնեն, ապա հոսքի հետ կգնան ու դուք երեքով կմահանաք»։

Երբ ես այս խելացի խոսքերը լսեցի, օրն աչքերիս առաջ խավարեց։ Ծնողներս ու ազգականներս բոլորը մահացան, իսկ հիմա պետք է եղբայրներիս անհայտ ճակատագրի՞ն հանձնեմ...

Ես վշտացած ձայնով ասացի նրան. «Ո՛չ... կա՛մ միասին կապրենք... կա՛մ միասին կմահանանք, ես և եղբայրներս»:

Նա ասաց. «Ես տարիքով ավելի մեծ եմ քեզանից, ու բազմաթիվ փորձություններով եմ անցել, կյանքի մեծ փորձ ունեմ, և ըստ այնմ քեզ խորհուրդ եմ տալիս, կարող է անմարդկային թվալ, սակայն տվյալ իրավիճակում դա միակ լուծումն է, բայց այնուամենայնիվ որոշումը քոնն է, եղբա՛յրս»: Սահակը որոշեց, որ այդ օրն էլ մնանք թաքնված մեր տեղերում ու սպասենք, առանց դեպի հովտի եզրը գնալու և այն անցնելու: Մենք վախենում էինք, որ թուրք և քուրդ հանցագործներ դեռ թաքնված լինեին հովտի մոտակայքում և հովտի ջրերին մոտեցող կենդանի մնացած և անցնել փորձող մարդկանց ուղղությամբ կրակեին:

Սահակն իր ընկերներից երկուսին ուղարկեց, որպեսզի ստուգեն հովիտն ու շրջակա բլուրները, իսկ ինքն ու մյուս երկու ընկերները, ինչպես նաև ես ու եղբայրներս, թաքնվեցինք ժայռերի մեջ, փորձելով քնել և մեզ համարյա սպանելու չափ տանջող սովածությունը հաղթահարել: Սակայն մենք չկարողացանք քնել, որովհետև լացերի՝ երեխաների լացերի ձայները շատ բարձր էին արձագանքում ու լցնում հովիտը, լեռներն ու բլուրները, հովտի ջրերի մոտ կային ոչ շատ խիտ տարածված վայրի ծառեր, և այդ ծառերի

ու ժայռերի տակ մայրերը հարյուրավոր երեխաների էին թողել, վախենալով, որ հովտի ջրերը նրանց կտանեն: Բազմաթիվ երեխաներ կային այնտեղ, որոնց մայրերն սպանվել էին, մինչ երեխաները դիակների մոտ նստած սպասում էին մահվան: Այդ երեխաները սովից, ծարավից ու տարբեր վերքերից տանջամահ էին լինում: Նրանցից ով կենդանի էր մնացել, գոռում, լաց լինում ու գետնին էին տապալվում: Բացի նրանցից կային նաև հղիներ, ծերեր և տարեցներ, ովքեր չէին կարողացել անցնել հովտի ջրերը, և նրանց հարազատները նրանց այնտեղ էին թողել, կամ նրանք էին մնացել, սպասելով իրենց անխուսափելի ճակատագիրը:

Այս ամենից բացի, նեխած դիակների հոտը լցվում էր հովտում և քամու հետ տարածվում հովտի բոլոր կողմերում, փախուստի դիմած հայերի քարավանները, որոնք փորձում էին անցնել հովիտը (Մահվան հովիտը, Կոտորած Գալին) սկսել էին այստեղ հասնել շաբաթներ առաջ, և պարբերաբար, օրական մի քանի անգամ, ենթարկվում էին թուրքերի և քուրդ խմբավորումների հարձակումների, և հավանաբար մենք վերջին խումբն էինք, որ հասնում էր այս անիծված վայրը:

Կեսօրից առաջ, հովիտը հսկող երկու մարտիկները վերադարձան և ասացին, որ տաս տղամարդ ու հինգ կին են

տեսել, ովքեր վազելով եկել ու իրենք իրենց նետելեն հովտի ջրերի մեջ, որպեսզի անցնեն այն, սակայն ոչ որ նրանց ուղղությամբ չի կրակել, որովհետև հովտի ջրերը շատ արագ քաշել ու տարել է նրանց:

Մահակն ասաց. «Լավ, երևում է, որ այս վայրում հայերի քարավանների վրա հարձակված թուրք ավագակախմբերը ինչ որ պատճառով հետ են քաշվել, հնարավոր է, որ նրանց զինամթերքն սպառվել է, կամ չեն կարողացել մնալ այս վայրում, որտեղ մեծ տարածության վրա դիակների հոտն է տարածվում, հետևաբար ավելի հեռու տեղ են գնացել, որպեսզի մոտեցող քարավանների ճամփան կտրեն, ուրեմն մենք այսօր կարող ենք անցնել, եկե՛ք, գնացի՛նք»:





## Հինգերորդ գլուխ

### Ցոտնություն, իմ հայրենիք

Պապիկս շարունակելով իր ցավոտ ու հետաքրքիր պատմությունն ասաց. «Ես չէի ցանկանում, որ իմ եղբայրները տեսնեին մահացածների տեսարանները, հետևաբար ասացի խմբի ղեկավար Սահակին.

«Չեմ ցանկանում, որ եղբայրներս տեսնեն դիակների և մահացածների տեսարաններն այս երկար ճանապարհին, որտեղից պետք է անցնենք ու հասնենք ջրի եզերքը»:

Սահակն իր գոտկատեղին փաթաթած մի կտորե գոտի հանեց, իր դաշույնով երկու մասի կիսեց այն ու ասաց.

«Երբ մոտենանք, եղբայրներիդ աչքերը կապի'ր սրանցով»:  
Մենք հավաքվեցինք իրար կողք և աջ ու ձախ նայելով ուշադիր քայլեցինք դեպի հովիտ:

Հարյուրավոր երեխաների լացի, վիրավորների տնքոցի և կանանց լացի ձայները գնալով բարձրանում ու շատանում էին, ու հենց հասանք այդ սարսափելի միջանցքը, երկու եղբայրներիս աչքերը կապեցի:

Փոքր եղբորս՝ Աբրահամին շալակեցի ուսերիս, իսկ Պոռոդոս եղբորս ձեռքը բռնած հարյուրավոր դիակների միջով շարժվեցինք դեպի ջրերը:

Ես ինձ հետ գրուցելով ասում էի. «Աստված իմ, ինչպե՞ս կարող է մարդկային վայրագությունը հասնել այս աստիճանի:

Ինչպե՞ս կարող է մարդն ինչ որ պատճառով այս աստիճան ասել իր մարդ եղբորը:

Սա կոտորած է, կամ ինչ որ ուրիշ անվանում ունի, որն ինձ ծանոթ չէ, որովհետև ես պարզ մարդ եմ: Հարյուրավոր... հարյուրավոր անդամահատված դիակներ, մերկ, գլխատված:

Հարյուրավոր դիակներ, որոնց գլուխները ճգմված են ձիերի սմբակներով:

Իրենց մայրերի կրծքին փարված հարյուրավոր սպանված նորածին երեխաներ... հարյուրավոր մանուկներ, որոնք սովից անկարող են քայլել: Նրանց ծնողներն սպանվել են կամ նրանց այնտեղ են թողել, հույս ունենալով, որ նրանց ապրելու բախտ կվիճակվի, մինչդեռ նրանց մայրերն իրենք իրենց նետել են հովտի անողորմ ջրերի մեջ»:

Տեսարանը սարսափելի էր... շատ սարսափելի էր... շատ... մինչ օրս հիշում եմ այդ դաժան պատկերները, այդ սարսափելի տեսարանը: Հարյուրավոր ծերեր ու տարեցներ տեսա, ովքեր չէին կատողացել անցնել հովիտն ու մնացել էին այնտեղ՝ սովի և հիվանդության ճիրաններում, մինչև որ

մահը վրա կհասներ... Հարյուրավոր մարդիկ գոռալով կանչում էին մեզ. «Մեզ այստեղից դուրս բերեք, խնդրում ենք, մեզ ուտելիք տվե՛ք,, , որդի՛ս, օգնե՛ք մեզ...»

Ա՛խ, Աստվա՛ծ իմ, ողբերգական տեսարան էր: Մենք բոլորս լաց էինք լինում սարսափելի տեսարանից, իրավիճակը շատ ավելի ցավալի էր մեզ համար, որովհետև մենք չէինք կարող նրանց օգնության ձեռք մեկնել:

Մենք սաստիկ սովից ու հոգնությունից հագիվ էինք կարողանում շարժվել:

Մենք մեր հայրենակիցների ցավով ու տխրությամբ այրված ընթանում էինք դեպի հովտի ջրերը, աներևակայելիորեն զարմացած էինք:

Մենք կորցրել էինք շուրջը կատարվածի նկատմամբ որևէ բան զգալու կարողությունն այն աստիճան, որ մեր հետևից տաս ձիավորներ մոտեցան, սակայն մենք նրանց ներկայությունը չզգացինք, անգամ ձիերի սմբակների ձայնը չլսեցինք:

Այո՛, տաս հայ ֆիդայիներ կայծակի արագությամբ եկան մեր հետևից, ու մենք չզգացինք նրանց մոտենալը, մինչև որ կանգնեցին մեր կողքն ու առաջացան դեպի մեզ: Նրանց խմբի ղեկավարն ասաց մեզ. «Ինչպե՛ս փրկվեցիք թուրք ու քուրդ հանցագործներից», Սահակը պատասխանեց ու

ասաց. «Փրկվեցին Աստծու շնորհիվ, և մեզ առաջնորդողը Հարությունն էր, այս երիտասարդը»:

Այս ֆիդայական խմբի ղեկավարի անունը Հովազ էր, հետո մեզ հարց տվեց. «Ճանապարհին դեպի այս կողմ շարժվող հայերի քարավանների հանդիպեցի՞ք», Սահակը պատասխանեց ու ասաց. «Ո՛չ, մենք միայն մեկ քարավանի ենք հանդիպել, որը թուրքերի կողմից գերեվարված էր, ու նրանց հեռու տարան»:

Մարտիկ Հովազն ասաց. «Ուրեմն մենք միասին կանցնենք հովիտն ու դրա կատաղած ջրերը, ձիերը մեզ կօգնեն... հետո կվերադառնանք, որպեսզի օգնենք նրանց, ում հնարավոր կլինի օգնել»:

Ես իմ մտքում ասացի. «Շնորհակալ եմ, Տե՛ր իմ, որ մեզ օգնություն ուղարկեցիր»։ Ձիավորները կարճ ու մեծ թվով պարաններ կապեցին իրենց տաս ձիերի սանձերին, ձիերից մեկին նստեցրին երկու եղբայրներիս ու նրանց կապեցին, ու ես բռնեցի պարաններից մեկը։ Մյուս ձիերին նստեցրին մեծ խմբով պատանիների, ովքեր կարողանում էին քայլել, մարտիկները բռնեցին պարանները, և մենք մտանք մահաբեր հովտի՝ Մահվան կամ Կոտորածի հովտի (Կոտորած Գալիի) ջրերը:

Ջրերը շատ համառ ու արագընթաց էին, դրանք զարնվում էին ավերին ու ժայռերին: Այս հովտի ջրերն սպանել էին թուրքերի կոտորածներից փախուստի դիմած հազարավոր հայերի: Չեմ կարող մոռանալ այդ պահերը, ջրերը փամփուշտի արագությամբ էին շարժվում, դրանք կատաղած ցլի պես դաժան էին, ամեն կերպ փորձում էին հնարավորինս շատ կյանքեր խլել: Սակայն ուժեղ ու միմյանց պինդ կցված ձիերը համառ ջրերի ալիքների դեմ պայքարելով մեզ առաջնորդեցին, և մենք կամաց-կամաց, աղոթելով ու խնդրելով, գոռալով անցանք, անցանք ու ձիերը մեզ դուրս բերեցին հովտի մյուս ավիր:

Աստվա՛ծ իմ, դա իսկական հրաշք էր, փառք Աստծուն: Հենց եղբայրներիս ապահով իջեցրի ձիուց, գրկեցի նրանց, ու մենք սկսեցինք լաց լինել: Շատ դառը լաց եղա ու այդ հովտի ավին արցունք թափեցի, նայելով այն ավին, որտեղից եկանք:

Այստեղ միայն, երբ անցանք մահվան հովիտը, միայն հիմա զգացի, որ հեռացա իմ հայրենիքից ու երբեք էլ չեմ վերադառնա, սա հրաժեշտի հայացք էր, վերջին հրաժեշտի հայացքը...

Ա՛խ... ես ողբալու եմ քեզ այնքան ժամանակ, քանի դեռ ողջ եմ, ու չնայած բոլոր դաժանություններին, որոնք ապրել ենք քո մեջ, դու շատ թանկ ես, ի՛մ հայրենիք, դու, որ հողդ խմել է

իմ ընտանիքի, սիրելիների ու ազգականների արյունը: Ես ողբալու եմ քեզ, քանի դեռ ողջ եմ...

Այստեղ միայն, այս օտար ափին զգացի, որ միայն մարմինս է անցել հովիտը, մինչդեռ հոգիս, կարոտս ու բոլոր հուշերս այնտեղ կենդանի մնացին...

Իմ պապերի լեռներում՝ Մոկսում:

Քո հողում են խաղաղ ննջում իմ պապերի անյունները, և քո գրկում մեր վերադարձին է սպասում մեր գութանը, որպեսզի հողից դուրս բերենք նրան...

Այո', ես ու եղբայրներս անցանք ու փրկվեցինք, սակայն անցանք մարմնով, ո'չ հոգով:

Արդյո՞ք մի օր կհանդիպեն մարմինս ու հոգիս, որ թափառական մնաց այս հովտի մյուս ափի հողերում...

Անցնելուց հետո մի փոքր հանգստացանք, ու տաս ձիավոր մարտիկներից բաղկացած ֆիդայական խումբը հովտի ջրերի միջով վերադարձավ մյուս կողմ, որպեսզի փրկեն նրանց, ում հնարավոր կլինի փրկել:

Նրանք ավելի քան երկու հարյուր պատանի փրկեցին: Այսպիսով նրանք ողջ ցերեկը փորձեցին մեծ թվով երեխաներ փրկել ու տեղափոխել հովտի այն ափից այս ափը, որտեղ համարյա անվտանգ էր:

Այստեղ Սահակն ու իր հետ եղող չորս մարտիկներն եկան մեզ հրաժեշտ տալու... նրանք ձեռք բերեցին զենքեր, զինամթերք ու ձիեր, նրանք մոտեցան մեզ ու Սահակն ասաց. «Հարություն'ւն, եթե դու չլինեիր, եթե քո ուշիմությունն ու գիտելիքը չլիներ, մենք չէինք կարող փրկվել ու հասնել այստեղ... մենք առանց քեզ լեռներում կմոլորվեինք, մինչև որ սովից մեռնեինք կամ սպանվեինք», նա բռնեց ինձ, համբուրեց գլուխս, համբուրեց եղբայրներիս ու ասաց. «Մենք այստեղ կբաժանվենք, հո'գ տար քո ու եղբայրներիդ մասին, և եթե Աստված կամենա, մի օր դարձյալ կհանդիպենք հայրենիքում: Ես դարձյալ կգամ արոտավայրեր, քեզանից կաթ ու մածուն կխնդրեմ այնպես, ինչպես անցյալում... դարձյալ շնորհակալություն եմ հայտնում, եղբա'յրս»:

Մյուս մարտիկները նույնպես ինձ շնորհակալություն հայտնեցին, նստեցին իրենց ձիերն ու գնացին, իսկ ես դրանից հետո նրանց երբեք չհանդիպեցի:

Ես, եղբայրներս ու մյուս պատանիները, ովքեր փրկվել էին, հողաձածկ ճանապարհով մի քանի ժամ քայլեցինք, մինչև որ հասանք մի փոքր ճամբար, որ հսկվում էր հայ ֆիդայիների կողմից: Նրանք մեզ ջուր ու ցորենի հատիկներ տվեցին, որպեսզի ուտենք:

Այս ճամբարում, կարծում եմ, ավելի քան երկու հազար փրկված կին ու տղամարդ կային ու բազմաթիվ երեխաներ: Մենք այնտեղ գիշերեցինք, իսկ առավոտյան մեզ տեղափոխեցինք իրանյան Սալմաստ քաղաքի մոտակայքը գտնվող մեկ այլ ավելի մեծ ճամբար:

Նրանք մեզ տաք ճաշ տվեցին ու հագուստներ, մի քանի վերմակ տրամադրեցին, և այսպիսով մենք դարձանք գաղթականներ...

Օ'հ թշվառ ու դաժան ժամանակներ: Մենք՝ բարվոք կյանքով ապրած կենդանիների հոտերի ու հողերի սեփականատերերս, դարձանք վրանների տակ ապրող թափառականներ, ովքեր ուրիշներից էին հաց մուրում:

Ոչինչ չունեինք, ոչինչ բացի հուշերից... մենք մեր կաշին փրկելու համար մեր հագած հագուստներով փախուստի դիմեցինք, թողնելով, բոլոր մեր ունեցվածքին անիրավաբար տիրեն օտարները: Սա արդար չէր:

Ինչո՞ւ տեղի ունեցավ այս բոլորը: Մենք ի՞նչ էինք արել, որպեսզի մեզ հետ այսպես վարվեին: Չգիտեմ, չգիտեմ:

Ես բացի եղբայրներիս պաշտպանելուց ուրիշ ոչ մի բանի մասին չէի մտածում, հիշում եմ, որ այս ճամբարում ինձ մի անձ հարց տվեց ու ասաց. «Որդի'ս, դու ամուսնացա՞ծ ես»,



չգիտեի, թե ինչ պատասխանեի, այնքան դաժան բան էի տեսել, որ արդեն չէի հիշում՝ արդյոք ամուսնացա՞ծ եմ, թե՞ ոչ: Եղբայրս Աբրահամը պատասխանեց. «Այո', հորեղբա'յր, նա վերջերս է ամուսնացել, բայց հավանաբար նրա կինն սպանվել է իր ծնողների ու ազգականների հետ իրենց գյուղում, երբ այնտեղ էր գտնվում, նա հիմա այրի է»:

Այստեղ ճամբարում դեպքերը շատ արագ հաջորդեցին իրար, ու մենք լսեցինք, որ հայերի քարավաններն սկսել են շարժվել Սալմաստից Հայաստան, և հնարավոր էր, որ մենք նույնպես շարժվեինք նրանցից հետո, կամ մեզ նախորդող քարավանները տեղ հասնելուց հետո...

Մակայն չորս ամիս անց մեր ճամբարը տեղափոխվեց ավելի ընդարձակ հողատարածք, որ Սալմաստից հեռու էր, և մեզ ասացին, որ անգլիական մի բանակ մեզ տեղափոխելու է անվտանգ երկիր:

Օրեր շարունակ անգլիացի զինվորների ուղեկցությամբ քայլեցինք, մինչև որ հասանք Բակուրա կոչված մի տարածք, որտեղ ասացին, որ մենք արդեն Իրաքում ենք:

Մեզ շատ մեծ ճամբար տեղափոխեցին, որտեղ ողջ տեսադաշտում սպիտակ վրաններ էին: Մեզ՝ ինձ, երկու եղբայրներիս ու Վան քաաղաքից փախուստի դիմած երկու պատանի եղբայրների մեկ վրան տրամադրեցին: Ճամբար-

րների տղամարդիկ օրական, առավոտյան և երեկոյան, տարբեր վայրերում հավաքվում էին խմբերով, զրուցում էին, իրար մասին հետաքրքրվում, իրենց ազգականների ու ընտանիքների մասին հարցուփորձ անում: Հույս էին ունենում, որ ինչ որ մեկը նրանց մասին որևէ բան կիմանա:

Այս երկու որբ եղբայրներ ամեն օր գնում էին այդ հավաքներին, հարցուփորձ անում իրենց մեծ եղբոր մասին, ում ճանապարհին կորցրել էին:

Երեկոներից մեկում, երբ վրան վերադարձան, ինձ ասացին. «Հարություն'ն, մենք լսել ենք, որ մի տղամարդ Մահտեսի Հարությունի ընտանիքի մասին էր հետաքրքրվում, և ասաց. «Նրանք բնակվում էին Մոկս քաղաքում», դա քո ընտանիքի մականունը չէ՞»:

Ես լուրը լսելով անակնկալի եկա և զարմացած ասացի. «Ո՞վ էր այդ տղամարդը»:

Նրանք ասացին. «Մենք չգիտենք, թե նա ով է, բայց հավաքվածների մեջ հարցուփորձ էր անում ձեր ընտանիքի անունը հնչեցնելով»:

Դա շատ տարօրինակ էր, եղբայրս Պողոսն ասաց.

«Հավանաբար մեր քեռիներից մեկն է, կամ մեր հորեղբորորդիներից մեկը, ով փրկվել է ջարդերից: Վաղը գնա՝ ու ստուգի՛ր»:

Հաջորդ օրը երկու պատանիների հետ գնացի հավաքույթին, որի անդամները մեկը մյուսի լուրերն էին լսում, իրենց կորած ազգականներին, հարազատներին փնտրում...

Հանկարծ տեսա հորեղբայր Սարգիսին, այն կնոջ հայրը, ում որպես կին ինձ համար բերել էր տատիկս: Նա էր, ով մեր մասին հարցուփորձ էր անում:

Ես վազեցի նրա մոտ, գրկեցի նրան, նա նույնպես գրկեց ինձ ու ասաց. «Փրկվե՛լ եք, որդի՛ս»:

Ես ասացի. «Ո՛հ... մեզանից միայն ես ու երկու եղբայրներս ենք փրկվել»:

Նա ասաց. «Ա՛խ... ափսոս, ափսոս, արի՛, արի՛ մեր վրան, որդի՛ս, քո կինը փրկվել է, իմ երկու որդիները նույնպես փրկվել են»:

Ես իմ երկու եղբայրներին ինձ հետ վերցրի ու նրա հետ գնացինք իրենց վրան:

Այստեղ էր միայն, որ ես առաջին անգամ հանդիպեցի տատիկիդ, ի՛մ սիրելի թոռնիկ:

Շատ ցավալի հանդիպում էր, ես ու եղբայրներս ընկանք գետին, դառը լաց եղանք նրանց վրանի տակ, որովհետև զգացի, որ հասել է այն պահը, երբ պետք է ողբամ կորուստը ծնողներիս.

Հորս... մորս... քույրերիս... հորաքույրներիս... ա՛խ, որքան ենք լաց եղել այդ օրը:

Ինչ որ չափով ապահովություն զգացի, մանավանդ, երբ տեղափոխվեցինք ու ապրեցինք նրանց հետ նույն վրանում: Ապահովություն զգացի, քանի որ կնոջս հայրը տարեց մարդ էր, և նա կարողանում էր մեր բոլորի պատասխանատվությունն իր վրա վերցնել:

Սակայն ճակատագիրը մեր ցանկության դեմ էր... հագիվ մեկ կամ ավելի ժամ էր անցել, երբ աներս՝ Յաղուզ տատիկիդ հայրը հիվանդացավ ու այնտեղ մահացավ...

Ես կրկին անգամ ինձ վրա վերցրի երկու եղբայրներիս, կնոջս ու նրա երկու փոքրիկ եղբայրների պատասխանատվությունը:

Այսպիսով, իմ սիրելի՛ թոռնիկ, անգլիացիները մեզ Բակուբայի ճամբարից տեղափոխեցին մի անապատ, որը Տիգրիս ու Եփրատ գետերի հատման կետի մոտակայքում էր գտնվում, Օմար գետի տարածքում:

Նրանք պատրաստվում էին մեզ ծովային ճանապարհով Հայաստան տեղափոխել: Նկատի ունենալով, որ տատիկիդ եղբայրները որբ էին, նրանց տարան, մինչդեռ իմ եղբայրների՝ Աբրահամի ու Պողոսի որբ լինելու մասին չիմացան, ու նրանք մնացին մեզ հետ:

Նրանք ծրագրել էին հաջորդիվ մեզ բոլորիս տեղափոխել Հայաստան, սակայն իրավիճակը փոխվեց, և մենք մնացինք այդ չոր հողում: Հետո անցան օրեր, ու մենք տեղափոխվեցինք իրաքաթուրքական սահմանին մոտակայքը գտնվող մի վայր, հույս ունենալով, որ մի օր կանցնենք այն ու կվերադառնանք մեր երկիրը, քաղաքները, տները...

Անցան օրեր, ու ես ահա այստեղ, Բաղդադի այս այգում նստած եմ ու հագիվ եմ կարողանում քայլել:

Երիտասարդությունս կորավ այս հողում, փորձելով դաստիարակել ընտանիքիս ու պահել այն:

Եվ ի պատիվ այն ֆիդայիներին, որոնց շնորհիվ մենք փրկվեցինք, իմ բոլոր գավակներին կոչեցի այդ խմբի (ֆիդայիների խմբի) անդամների անուններով, որոնց շնորհիվ մենք փրկվեցինք, սակայն դժբախտաբար նրանցից երեքը մանուկ հասակում մահացան ու մնացին միայն երեքը (Մնացական, Ավետիս, Թարգուն):

Սիրելի՛ թոռնիկս, դեռ հիշում եմ այն օրը, երբ փոսի մեջ թաքցրինք գութանը, ու մինչ օրս հիշում եմ հայրիկիս զրույցը երկաթյա գութանի հետ, երբ գութանին դիմելով ասաց. «Մի՛ վախեցիր... մի՛ վախեցիր... մենք շուտով կվերադառնանք ու քեզ դուրս կբերենք: Մենք կվերադառնանք որպեսզի հերկես հողը: Մի՛ վախեցիր, չենք ուշանա...»

Սակայն ուշացանք...

Շատ ուշացանք: Անկասկած որ մեր թանկարժեք գութանը  
դեռ սպասում է հողի տակ, սպասում է իր տերերին...

Անկասկած որ իրեն թվում է, թե գարունը դեռ չի եկել...

Եթե ես հիմա վերադառնամ, արդյոք հողը կճանաչի՞ ինձ

Արդյուք մեր գութանը կճանաչի՞ ինձ, դաշտերն ինձ  
կճանաչե՞ն

Ես վստահ եմ, որ գութանն այնտեղ ապահով պահպանված է  
դեռ... նա մեզ է սպասում... նա և հողն իրենց ապահով չենք  
զգա այնտեղ հիմա ապրողների ձեռքում, որովհետև նրանք  
օտար են...

Ահա ես ծերացել եմ... եղբայրներս ծերացել են... ես իմ  
որդիներին պատմել եմ իմ հոր գութանի մասին, հույս  
ունենալով, որ ինձանից հետո մի օր կվերադառնան իրենց  
պապերի տունը...

Նրանք կճանաչեն հողը: Իսկ եթե նրանք չճանաչեն հողը,  
ապա հողը նրանց կճանաչի:

Իսկ հիմա, թոռնի՛կս, քեզ էլ եմ պատմում պապիկիդ գութանի  
մասին...

Հիշիր իմ խոսքերը, իմ ավա՛գ թոռնիկ,

Ու եթե հայրիկդ չվերադառնա այնտեղ... ապա դու մի օր  
կվերադառնաս:

Իսկ եթե դու չվերադառնաս... ապա քո սերունդը կվերադառնա:

Բայց չմոռանաս նրանց պատմել այն, ինչ քեզ պատմել են...

Սիրելի՛ թոռնիկս... սա իմ բարի հայրիկի աղոթքն էր... որ մենք շուտով վերադառնանք ու դուրս բերենք գութանը, կապենք այն ցլերին ու դրանով վարենք հողը...

Մի օր գութանը կրկին կճեղքի պապերիս հողը, հողի բույրը կրկին կտարածվի օդում: Այնժամ կգան մեր հոգիները՝ իմ ու ընտանիքիս. Հորս, մորս, քույրերիս, մեր հարևանների ու սիրելիների, մենք հոգով կհավաքվենք այդ վայրում, կերգենք ու կպարենք՝ այդ ցանկության իրականացման երջանկությունից...

Թոռնի՛կս, չմոռանաս իմ կտակը: Հիշի՛ր, որ մեր տանը մեծ ընկույզի ծառ կա, այնտեղ, դրա տակը, հողի խորքում ենք պահել գութանը, սրիկաները կարող են հասնել նրա պտուղներին, նրանք կարող են կտրել այդ հին ծառը, սակայն նրանք չեն հասնի հողի խորքը, որտեղ մեզ է սպասում մեր գութանը:

Ու եթե վերադառնաս այնտեղ ու վայրը չգտնես, չտխրես ու չմտահոգվես, հողը կխոսի ու քեզ կճանաչի և ձայն կտա. Ու


կասե «Ահա նրանք կրկին վերադարձան, վերադարձան,  
եկե՛ք այստեղ...»

Թոռնի՛կս, չմոռանա՛ս պապիկիդ գութանը...»

## **«Հիշում ենք... և պահանջում...»**

խոսքերով:

.....





Հարություն (Արթին) պապիկս մահացավ Բաղդադում, նրանից հետո մահացան իր երկու եղբայրները՝ Պողոսը, այնուհետև Աբրահամը, հետո Յաղուզ տատիկս... նրանք մահացան, և մահացավ այն սերունդը, որ փրկվել էր օսմանյան կոտորածներից, որոնք կազմակերպվել էին Թուրքիայում 1915 թվականին՝ հայ ժողովրդին բնաջնջելու նպատակով, Հայոց Յեղասպանությունից բոլոր փրկվածները մահացան:

Նրանք մահացան հիշելով ու պահանջելով իրենց իրավունքները՝ բռնազավթված իրենց հայրենիքում: Անգամ իրենց մահից հետո, նրանց հոգիները բարձրաձայնում են այդ պահանջների մասին անգամ հավերժության մեջ, որտեղ Աստծու առաջ բողոքում են մարդկության անիմաստ անարդարության, դաժանության, անողորքության՝ անկուշտության և չտեսության դեմ: Նրանք պահանջում են իրենցից բռնազավթված իրավունքները:

Նրանց մահով իրենց դատը չմեռավ, այլ ժառանգվեց, ու այդ դատը ժառանգելու են որդիներն ու թոռները, այդ կենդանի նամակը՝ ուղղված պապերից, որը կրճատում ենք

Բովանդակություն

Էջ

|      |                                                 |
|------|-------------------------------------------------|
| 3-   | Առաջաբան                                        |
| 8-20 | ն                                               |
| 11-  | Առաջին Գլուխ - Մերունդները ժառանգում են<br>ցավը |
| 22-  | Իրադարձություններ ու պատմություններ             |
| 28-  | Տարօրինակ ու նոր հրահանգ                        |
| 40-  | Երկրորդ Գլուխ – Ողբի մեղեդիներ                  |
| 49-  | Անվերջ ճմեռը                                    |
| 108- | Իրաքի արմավենիները ու խաղաղության Ավետիսը       |
| 111- | Երրորդ Գլուխ- Հյուրընկալ երկիրը                 |
| 123- | Անվերջ տեղահանություն                           |
| 135- | Թանկ ժառանգություն                              |
| 139- | Չորրորդ Գլուխ – Պապիկիս Գութանը                 |
| 168- | Երկնքի աստղերի ներքո                            |
| 187- | Խիզախ համրը                                     |
| 211- | Հինգերորդ Գլուխ – Ցտեսություն իմ հայրենիք       |

